



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



| | | | |
|---|----------------------|-----------|---|
| Է | ՅԵՆՓԱՆԵԱՆ | | Խոչ աշուն |
| Ն | ՆԱՆՈՒԿԵԱՆ | | Անտեսանելի անձրև |
| Յ | ՄԱՆՈՒԿԵԱՆ | | Մտապառտկերին անդուակ |
| Ն | ԶԱՐԽՈՒՑԵԱՆ | | Մեռել մը ասփալթին վրայ |
| Է | ՍԱՐԱՃԵԱՆ | | Զէրօ պօակ |
| Բ | ԵՂԻԱՅԵԱՆ | | Որդի մարդոյ |
| Յ | ՆԱԳՈՒԼԵԱՆ | | Երազ մը |
| * | * | | Օրելլայի թաշկինակը |
| Ռ | ԴԱՐԲՈՒՆԵԱՆ | | Սիմոն Յակոբեան |
| Գ | ԳՐԵԳՐԻՆ ԱՐՓԵՊԻՍԿՈՊՈՍ | | Խարզմանի՜չ . . . |
| Ս | ՍԱՆԻՆԵԱՆ | | Հայաստանեան մի երիտասարդ զրօրի մասին |
| Լ | ՄԿՐՏԶԵԱՆ | | Ալեքսանդր Առլժենիցի |
| * | * | | Ս. Փարաչամով |
| Յ | Լ | | «Հրեզէն ճիեր»-էն դէպի պայթած «Նուսիբը» |
| Վ | ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ | | Նամակ՝ իմբարզուրեան |
| Շ | ՄԱԼԷՔ | | Մշակոյթն ու մտաւարակներ |
| Ն | ՆՄԱՐՆԵՐ | | |
| Մ | ՄԵԿՈՒԹԻՒՆ ԼՈՒՐԵՐ | | |

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ


ԺՅ. — ԺԶ. ՅԱՐԻ. ԹԻՒ Տ Օ Գ Ո Ս Տ Ա Ս 1977 ԳԷՅՐՈՒԹ

Է. Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն

Մեր աշխատակիցը, Սուրեն Սանինեան, «Բազմ»-ի ներկայ թիւին մէջ ստորագրած է խանդավառ գրութիւն մը, բացառաբար նիթ ունենալով հայրենի «Գարուն» ամսագրին մէջ միաժամանակ երեւցած էմիլ Սաեփանեանի երկու սրամուտքները, — «Խոր աշուն» եւ «Անտեսանելի անձրեւ»:

Եկաակալով, որ Սանինեանի գրութենէն ետք ընթերցողը կրնայ փնտռել եւ իր անմիջական արամագրութեան տակ շղոնել երիտասարդ արձակագիրին խնդրոյ առարկայ սրամուտքները, նորատպագրմար համարեցինք այս թիւով ներկայացնել զանոնք եւս:

Փափաքելի պիտի ըլլար, որ այս մասին եւ, յարակցաբար՝ սրամուտքի ժամանակակից ըմբռնումներուն մասին արտայայտուէին ուրիշներ եւս, մեկնակէտ ունենալով այս կամ նոյն կալուածին մէջ ինկող այլ գրութիւններ:



Թ Ո Ր Ա Շ Ո Ւ Ն

Բարձրահասակ էր: Քայլում էր ձիւ, սեխաձեւ սափրած դուլին ուսերով սեղմած, իսկ երկար, բարակ սաքերը ճկում էին աղեղների նման: Նա ինձնից մի օր աւելի ուշ ժամանեց կանաչների մէջ թաղուած այդ առողջարանը, եւ նրան նստեցրին մեր սեղանի առջեւ, իմ կողքին: Միասին սըն-

ւում էինք, միասին իջնում բակի գրանիտէ լայն աստիճաններով, միասին սլատրասաւում ծխելու: Մի անգամ լուցկի չունէր, ես վառեցի նրա «էֆա-րէթը», եւ ակամայ փլուեցինք արեւից ջերմացած երկարուկ նստարանին: Հա-ճելի էր զգալ նստարանի տաքութիւնը եւ կկոցած աչքերով նայել, ինչպէս մեր արտաչնչած ծուխը փայլում է աչնան մեղմ արեւի տակ, եւ ինչպէս ճեր-մակ մեծ կատուն խաղում է մոխրագոյն փոքր կատուի հետ:

Թատերագիր էր, հետաքրքիր զրուցակից: Եւ ես աւելի յաճախ լսում էի, քան խօսում:

Նա մենակ էր:

Ես էլ էի մենակ: Բայց ես սպասում էի կնոջս, որ մի քանի օրից պիտի գար, նա ոչ ոքի չէր սպասում:

Մեր գիմաց վարդաթփեր կային: Հաւասարաչափ բացուած ծաղիկնե-րով, նոյներանգ: Նա, յուզմունքը խլացնելով, նկատեց, թէ ինչպէս այդ միանման վարդերից մէկի թերթիկը բոլորովին անսպասելի պոկուեց, ընկաւ գետին:

Ու վեր կացաւ:

Չարմանալի բաւականութեամբ էր թէյ խմում՝ բաժակակալի կոթից ամուր բռնած, կարծես ջանալով հնարաւորին չափ շատ տաքութիւն քամել: Եւ գրեթէ ոչինչ չէր ուտում: «Միեւնոյն է, քաչս միշտ անփոփոխ է, իսկ Ֆիզիկական աշխատանք չեմ կատարում»: Սակայն երբեք չէր մոռանում թղթէ անձեռոցիկի մէջ խնամքով առանձնացնել մոխրագոյն կատուիկի բա-ժինը: Ճերմակ կատուին չէր կերակրում:

Այդ օրը գանգաաուեց, որ հարեւանները գինի հիւրասիրեցին: «Ան-յարմար կը լինէր հրաժարուել, կը վիրաւորուէին»: Եւ մտահոգուած էր, որ կէս գաւաթ գինուց սոսկալի այրուցք ունի ու գիշերը չի կարողանալու աչք կպցնել: Թէպէտ, սովորաբար էլ մէկ-երկու ժամից աւելի չի քնում, որովհետեւ պահանջ չունի:

— Ուրեմն վա՞ղն է գալու ձեր «Ջուլիէտը», — յանկարծ հարցրեց նա:

— Այո, — ուրախ, մի տեսակ աքլորացած պատասխանեցի ես եւ, նրա հանգած աչքերը նկատելով, մաքումս որոշեցի, որ կինս իմ տեղում կը նստի, ես՝ աղատ բազկաթուին: Առողջարանի միակ երիտասարդ կնոջ հարեւանու-թիւնը հաճելի անակնկալ կը լինի ծերունու համար:

Երբ կնոջս հետ ճաշասրահ մտանք՝ արդէն ընթրում էր: Նա արժանա-պատուութեամբ ոտքի ելաւ:

— Դուզոպոլով:

— Արմինէ:

— Ինչպէ՞ս: Վանկերով, խնդրեմ:

— Ար-մի-նէ:

— Գեղեցիկ անուն է, միանգամայն համապատասխան ձեր արտաքի-նին:

Գանի որ նա առաջին անգամը չէր լինում կանաչների մէջ թաղուած այդ հանգստավայրում, թէյի բաժակակալը բռնած՝ խորհուրդ տուեց, թէ ուր արժէ գնալ: Ուսերի մէջ խրուած նրա անմազ գլուխը, ինչպէս միշտ, փայլում էր: Մեղմ փայլ կար նաեւ աչքերում: Եւ խօսելիս աւելի յաճախ դի-մում էր Արմինէին, քան ինձ: Կարծես նորեկը ես լինէի: Գեոատի կնոջ քըն-քուչ ձայնը, սեւ աչքերը պէտք է որ ողբնչէին նրան: Եւ ես մտածում էի՝ ճիշդ արի՞ Արմինէին նրա մօտ նստեցնելով: Մա՛նաւանգ՝ կնոջ համար միշտ էլ ցանկալի է հաճոյախօսութիւններ լսել, թէկուղ ծերունուց: Նա ուտում

էր սեթեւեթելով, սովորականից էլ դանդաղ, իսկ մեր չափազանց բարեկիրթ սեղանակիցն անքաղաքավարութիւն էր համարում կնոջից առաջ վեր կենալ, եւ ես ձանձրանում էի :

Արմինէին խիստ գուր եկաւ անժպիտ աչքերով, մեղմ ձայնով եւ ոչ անպաճոյճ նախադասութիւններով խօսող «լոկ քայլելու ընդունակ մեծ, պառաւած թռչունը» ու նա էլ սկսեց իր հերթին համակրանք արտայայտել : Իսկ ես դարձայ նրանց ակամայ ու անբաժան ունկնդիրը :

Նոյեմբերեան տօներին մեր ընթրիքի սեղանն արտակարգ ճոխ էր : Կարմինչեւ իսկ գինի : Ճաշասրահ մտանք ուշացած : Ծերունին ամէն անդամուայ պէս, ոտքի կանգնեց՝ Արմինէին տեսնելով : Դէմքը մէկէն պայծառացաւ. «Կարծում էի այլեւս չէք գայ» : Բաց արեց գինու շիշը, հաւասարաչափ լցրեց գաւաթները : Խմեցինք : Տրամադրութիւնը բարձր էր, տօնական : Արմինէն իր մանկականօրէն քնքուշ ձայնով նկատեց, որ անսովոր գեղեցիկ է նրա ձեռքի վիշապազարդ, մուգ քարով մատանին :

— Իսկական շափիւղայ է, — հպարտ պատասխանեց ծերունին եւ մատից հանելով՝ պահեց ելեկտրական ջահի դիմաց : — Տեսէ՛ք, որքան թափանցիկ է :

— Կարծես կապոյտ ջրի միջով նայես, — հիացաւ Արմինէն :

Ոչ մի արտակարգ բան չգտնելով դրա մէջ՝ ես առաջարկեցի խմել մեր յարգարժան սեղանակցի եւ նրա ընտանիքի կենացը :

Ծերունին շփոթուեց :

— Մենք ձեզ շատ ենք սիրում, — աւելացրեց Արմինէն :

Ծերունին ներողամիտ ժպտաց :

— Ընտանիք չունեմ : Համոզուած ամուրի եմ :

— Ի՞նչ էք ասում, — հիասթափուեց Արմինէն : — Մենք արդէն փորձում էինք ձեր թոռների քանակը կռահել :

Դժուարութեամբ խոստովանեց, որ երկար, շատ երկար տարիներ «անսովոր մասնագիտութեան» բերումով (չնայած թատերադիր է՝ վերջացրել է ռազմական երկու ակադեմիա) ապրել է Չինաստանում : Իսկ մատանին, որ Արմինէին կապոյտ ջուր յիշեցրեց, իրեն նուիրել է մի չինուհի :

— Աիրո՞ւմ էիք, — իսկոյն հարցրեց կինս :

— Այո :

— Հետաքրքիր է՝ ինչպիսին են չինուհիները : Երիտասարդ էր :

— Ես այն ժամտնակ քառասունըչորս էի : Իա մօտաւորապէս քսան տարի առաջ էր : Նա կը լինէր ձեր տարիքին՝ քսանըչորս-քսանըհինգ :

Այդու չորացած տերեւների վրայ քայլելով՝ մենք յամառօրէն փորձում էինք պատկերացնել չինուհուն, սիրահարուած ծերունուն, Չինաստանը : Բայց ապարդիւն, մեր յօրինած ամենացնցող դրուագներն ի վերջոյ նըմանում էին որեւէ կինոնկարի կամ գրքի :

Վերադառնալիս տեսանք, ինչպէս գարնազոյն սուխտերով ծերունին՝ իր համար պատշգամբում միայնակ կանգնած, աննկատ մեր կողմն է նայում : Եւ, չգիտես ինչու, յանցանքի մէջ բռնուածի պէս՝ ձեռքս զդուշութեամբ իջեցրի Արմինէի ուսից :

— Կարելի՞ է ձեզ մի փոքր նեղութիւն սրտձառել, — մի անգամ դիմեց կնոջս :

— Խնդրեմ :

— Ես մտադիր եմ ըժշկուհուս համար յուշանուէր գնել : Գուցէ կը յուշէի՞ք, թէ՛ ինչ :

— Թանկագիրն :

— Երեսուն ուրբու սահմաններում :

Արմինէն շատ էր ուզում ծերունուն օգտակար լինել, եւ ես ճարահատեալ նրա հետ ելումուտ արի բազմաթիւ խանութներ : Առաջարկեցինք գնել որեւէ գրուագ՝ հանգստավայրին բնորոշ տեսարանով, կամ...

— Կարծում էք յարմա՞ր կը լինի : Շնորհակալ եմ, չէի մտածել : — Ծերունին ափերի մէջ առաւ նոր մաաուցուած թէյի բաժակակալը : — Ե՞րբ էք մեկնում :

— Տասնիննին, — պատասխանեց Արմինէն :

— Իսկ ես՝ քսանին : Գուցէ դուք էլ...

— Քսանին ինքնաթիւ չկայ :

— Ես գերադասում եմ գնացքը : Անհամեմատ ապահով է :

— Տոմսերն արդէն վերցրել ենք, — կտրեցի ես :

— Հասկանալի է : Ափսո՞ս...

Այդ օրը երկար շրջեցինք եւ, ճամպրուկները դասաւորելուց յետոյ, որոշեցինք ընթրիքից առաջ հանգստանալ :

Մենք պառկած էինք, երբ դուռը թակեցին : Ո՞վ կարող է լինել : Մեր բոլոր ծանօթները գնացել էին : Ծերունի՞ն. սենեակի համարը չգիտէր : Մի՞թէ հեռագիր է ստացուել : Երէկ զանդահարեցինք, տանն ամէն ինչ կարգին էր : Որոշեցինք լռել : Քնած ենք եւ վերջ : Քիչ անց կրկին թակեցին .

— Մի բոպէ, եթէ կարելի է :

Ծերուկն էր : Ժպտացինք թեթեւացած : Հագնուեցի, դուրս եկայ :

— Ես երեւի շատ անպատեհ ժամանակ... — Միջանցքում առաջ եկաւ, մեղաւոր ժպտաց նա :

— Ո՛չ, ո՛չ : Ի՞նչ է պատահել :

— Էս ձեզ տեսայ զբօսայգում : Ուզում էի մօտենալ, բայց դուք այնքա՞ն ինքնասոյզ էիք քայլում, Արմինէն գլուխն այնպէ՞ս էր խոնարհել ձեր ուսին, որ առնուազն յանցագործ պիտի լինէի՝ ձեզ խանդարելու համար :

Մոխրագոյն կատուիկը քսում էր նրա ոտքերին :

— Դուք երբեք չէք խանդարում :

— Եթէ չեմ սխալում, — շարունակեց նա, — դուք վաղն առաւօտեան շուտ մեկնում էք : Ուստի հարկ համարեցի ձեզ հրաժեշտ աալ :

— Մենք դեռեւս կը հանդիպէինք, ընթրիքի ժամանակ :

— Դա իր հերթին : Բայց մեզանում ընդունուած է... — Ձեռքը տարատի գրպանը տարաւ, եւ երեւաց գինու սրուակը : Իրենից նոյնպէս դինու հոտ փչեց : Նա աւելի շատ սովորական գինեմոլի էր նման, քան... Ես ամաչեցի : — Հասկանում էք, չկայ ոեւէ մէկը, որին մնաս բարով ասեմ : Չէ՞ որ ես միայն ձեզ հետ էի խօսում : Ուստի պարտք համարեցի...

— Ես հիմա կը զգուշացնեմ կնոջս :

— Հարկաւոր չի : Անյարմար բան ստացուեց. ես խանդարեցի ձեր հանդիսուր : Ներեցէք ինձ, եթէ կարելի է :

Նա ձեռքը շարունակ տարատի գրպանն էր տանում, խազում երկու հարիւր գրամանոց շի հետ : Եթէ արողէյրուսում լինէինք, երեւի անվերջ կը յիշեցնէր, որ տոմսերն արդէն վերցրել է, մտածեցի ես եւ ատեցի ինձ :

Ծերունին լրջացաւ :

— Գիտե՞ք, վերջապէս գնեցի յուշանուէրը : Եւ ինձ թւում է՝ վատը չէ : Եթէ ցանկանում էք տեսնել՝ կը բերեմ :

Նա քայլեց դէպի իր համարը, ինչպէս միշտ, մանր, դանդաղ քայլե-

րով՝ գլուխն ուսերի՝ մէջ սեղմած : Մոխրադոյն կատուիկը վազեց յետեւից : Նա այնպիսի գորովանքով հիւրասրահի սեղանին դրեց սառուարաթղթէ տուփը, որ չէի համարձակուում դիպչել : Կարծես այդ տուփիկը բացելով՝ պէտք է պղծէի ճեղքունու համար նուիրական, նոյնիսկ, սուրբ մի բան :

— Բաց արէք, — տուփից հայեացքը չկտրելով՝ ի վերջոյ ասաց նա : Սեղանի ողորկ մակերեսին գլորուեց պլաստիկ նիւթից ձուլուած, ցից-ցից բեղերով դապորոժցին : Սովորական, էժանադին մի խաղալիք : Ես ծի-ճաղեցի : Մէկ ուրբի քսանեօթ կոպեկ՝ դաջուած էր վրան :

— Չէի կասկածում, որ կը հաւանէք : Սակայն այդքանով չսահմանա-փակուեցի : Անհրաժեշտ էր ինչ-որ հեաաքքիւր բան թաքցնել մէջը : Նա բաց-ւում է դանձաաուփի նման : Եւ ինձ թւում է՝ վաա չլսածեցի այդ խնդիրը եւս : Այժմ կարող էք բաց անել : Միայն զգոյշ, բեղերը չվնասէք յանկարծ :

— Մատանի՞ :
— Քարն իսկական մեղեսիկ է, մետաղը՝ ոսկեջրած արծաթ : Հիմա որտեղի՞ց ոսկի կը գանես :

Ես չասացի, որ խանութում տեսել եմ ամենատարբեր ճաշակի ոսկեայ մատանիներ :

— Ինչպէ՞ս էք գնահատում իմ դիւտը, — լուռթեան չդիմացաւ ծե-րունին :

— Գերազանց : Միայն լաւ կը լինի մատանին մատուցելու ձեւ գտնել : Թէ չէ՝ կարծես մերկ լինի, չխչխկում է գուտապերճէ պատերի մէջ : Զգեսաա-ւորել է պէտք :

— Զգեսաաւորե՞լ : Դա միտք է : Արմինէն շատ սիրալիր ընդունեց ծերունուն, որ ոչ մի կերպ չէր նըս-տում, մինչեւ մենք չտեղաւորուեցինք : Մոխրագոյն կատուիկը գլորուեց նրա ոտքերի մօտ :

— Սիրելի երեխէք : — Դրպանից հանեց գինու սրուակը : — Դուք ա-ռաւօտեան կանուխ մեկնում էք, ես այլեւս չեմ հասցնի ձեզ տեսնել, ուստի համարձակութիւն ունեցայ թակելու ձեր դուռը : Ներեցէ՛ք, ի հարկէ, բայց ձեզանից բացի չկայ ոեւէ մէկը, որին հրաժեշտ տամ : Բացարձակ : Դա սար-սափելի է :

Արմինէն պատրաստուում էր լաց լինել : Լցրի եղած երկու բաժակները : Ես ու Արմինէն խմեցինք նոյն բաժակից, կէս-կէս, նա միայնակ պարպեց ի-րենը եւ սեղանի կենտրոնում հանդիսաւոր գրեց սառուարաթղթէ տուփը :

— Այժմ կը լսենք Արմինէի հեղինակաւոր կարծիքը :
Կինս ընդգծուած հետաքրքրութեամբ բաց արեց տուփը, հիասթափ-ւեց մի պահ :

— Ի՞նչ լաւն է :
— Դրանով չվերջացաւ : Բաց արէք յուշանուէրը : Կիսւում է գանձա-տուփի նման : Միայն զգոյշ, բեղերը չվնասէք յանկարծ :
— Ոսկո՞ւց է, — մատանին ձեռքն առաւ Արմինէն :
— Քարն իսկական մեղեսիկ է : Ոսկեայ մատանիներ չկային :
— Մի՞թէ, — զարմացաւ Արմինէն : Ոտքով դիպայ ոտքին՝ չչարու-նակեց :

— Հաղցրէք ձեր մատին, եթէ կարելի է :
Արմինէն ձեռքը պահեց լոյսի տակ :
— Դեղեցիկ է, չէ՞, — ողեւորուեց ծերունին :
— Շա՛ա, — կինս ինձ աչքով արաւ :

— Այնքան սաղեց ձեր ձեռքին: Ինչ է նշանակում կանացի մատներ: Հաւանո՞ւմ էք:

— Ափսո՛ս, մի քիչ մեծ է:

Մի՞թէ որոշել է նուիրել Արմինէին:

— Մե՞ծ: Գա սարսափելի չէ: Կարելի է փոքրացնել: Լաւ է մեծ լինէ՛լ, քան փոքր: Ամէն պարագայում:

Ի՞նչ իմանաս, թատերագիր է, ներշնչուող ոգի:

— Ի հարկէ, — համաձայնուեց Արմինէն: Ահա թէ ինչի յանգեցրին նրանց փոխադարձ հաճոյախօսութիւնները:

Ծերունին սիդարէթ վառեց: Ես էլ:

— Բայց նա բարձրահասակ է, եւ վաճառողուհին խորհուրդ տուեց դա վերցնել:

Ես հանգստացայ: Արմինէն հանեց մատանին:

— Ձեր ընկերուհու համա՞ր է:

— Ոչ:

— Ձահե՞լ է:

— Այո: Կարծում եմ նրա մատին լաւ կը լինի: Գրամեքենայի վրայ արագ-արագ տկտկացնում է: Որքան յիշում եմ, խոշոր պիտի լինեն նրա մատները: — Նայեց ժամացոյցին: — Մենք ուշանում ենք ընթրիքից:

— Սիրո՞ւմ էք այդ կնոջը, — հարցրի ես:

Նա իսկոյն չպատասխանեց.

— Ոչ: Այսպէս ուրեմն, թանկագին երեխէք, դուք վաղը կը գնաք, եւ այլեւս երբեք չեմ տեսնի ձեզ: Երեւան հազիւ թէ դամ...

— Ձեր մեքենագրուհի՞ն է, — յամառօրէն շարունակեցի հարցաքննութիւնս:

— Ոչ: Նա մեքենագրում է իր սեփական բանաստեղծութիւնները: Եւ պէտք է ասեմ՝ վատ չի գրում:

— Իսկ...

— Երկար ժամանակ խնամքիս տակ էր: Նա եւս ինձ նման տառապում է ոչ-լիարժէքութեան կոմպլէքսով: Աշխարհում ոչ մի հարազատ չունի: Եւ մենք մի տեսակ լցնում, լրացնում ենք մեր շուրջը դոյացած այն անօգ տարածութիւնը, որ առաջացել է ճակատագրի բերումով:

Անենակում լոյսը պայծառ էր, տաք: Իսկ դրսում աշուն էր, քամի եւ մութ: Ծերունին դարձեալ նայեց ժամացոյցին.

— Դուք երեւի շտապում էք ընթրիքի. մնաց ընդամէնը քսանըհինգ րոպէ:

— Ամուսնացա՞ծ է, — հարցրեց Արմինէն:

— Ամուսնացած էր, բայց իմ այստեղ դալու նախօրէին մի տարօրինակ, անսպասելի բան տեղի ունեցաւ: Գիշերը յանկարծ զանգահարեց եւ, առանց որեւէ նախաբանի, ասաց՝ բաժանում եմ, տեղ չունեմ գնալու, կ'ընդունէ՞ք: Ի՞նչ կարող էի պատասխանել: Բնակարանս ընդարձակ է, ապրում եմ մենակ: Այսինքն՝ ոչ բոլորովին մենակ, կատուիս հետ: Արդէն վերելակավարուհուն դրամ էի տալիս, որ կանոնաւոր խնամէր կատուին, եկաւ Տանեան՝ ճամպրուկով: Կարծում էի ժամանակաւոր դժտութիւն է, բայց այսօր հեռախօսով կապուեցի՝ տանն էր: Ուրեմն լուրջ է հեռացել: Ինչ արած, թող ապրի երեք սենեակներից մէկում: Կը զբաղուի իր աշխատանքով եւ ինձ բնաւ չի անհանգստացնի:

— Ամուսնացէ՛ք, — կտրուկ ասացի ես:

— Ամուսնանա՞լ: Ինձ ոչ ոք չի հաւանում: Նոյնիսկ բարեկամներս են սակաւաթիւ: Աչքերս ազնիւ մարդասպանի աչքեր են: Հաւատ չեն ներշնչում: Գուցէ անսովոր մանսադիտութիւնս էր պատճառը: Յետոյ էլ մեր յարաբե-
րութիւնները ընդհատուիին այլ բնոյթ են կրում: Բարեբախտաբար վերելակա-
վարուհին լսեց, ինչպէս Տանեային դուք-ով դիմեցի: Թէ չէ, ո՞վ դիտէ, տհաճ
խօսակցութիւններ կը ծագէին:

— Գուք անչափ բտրի տէքեր ունէք, — սրտանց դուրս թուաւ Արմինէի
բերանից:

Ծերունին շոյուած ժպտաց: Նա նայում էր ժամացոյցին, բայց ամե-
նեւին չէր շտապում գնալ: Սենեակը լուսաւոր էր, նրան հաճելի էր մեզ հետ:
Նա ուրիշ զրուցակից չունէր եւ նա այնքան էր ուզում, որ Տանեան գրամեքե-
նայի տկտկոցով լցնի իր ընդարձակ առանձնարանի լռութիւնը: Այդ առիթով
կարելի է մի փոքր խմել եւ դիչերը չքնել սոսկալի այրուցքից: Գա սարսա-
փելի չէ: Նոր սիգարէթ վառեց:

— Ուրեմն մենք այլեւս երբեք չենք հանդիպի:

— Իսկ եթէ հասցէնե՞ր փոխանակենք, — առաջարկեց Արմինէն:

— Իսկապէս: Ա՛յ, դա միտք էր: Ինչ է նշանակում կին:

Փոխանակեցինք: Ծերունին վեր կացաւ: Մոխրագոյն կատուիկը, որ
ամբողջ ժամանակ կուչ եկած քնել էր նրա ոտքերի մօտ, արթնացաւ, յօրան-
ջեց, ձգուեց:

— Իսկ դուք կը գրէ՞ք ինձ:

— Սիրով, — պատասխանեցի ես:

— Մենք դեռեւս երկար կարող էինք խօսել: Ափսո՛ս: Ինչեւէ, ձեզ ու-
շացրի ընթրիքից: Ես մէկ անգամ էլ եմ ներողութիւն խնդրում անհանգստա-
ցընելու համար: Ուզողակի չկար ոեւէ մէկը ձեզնից բացի, որին կարողանայի
հրաժեշտ տալ:

Դուրս եկաւ՝ ստուարաթղթէ տուփը դրկած: Մոխրագոյն կատուիկը
յետեւից:

Արմինէն նայեց աչքերիս մէջ: Նա մէկ վայրկեան յետոյ լաց կը լի-
նէր: Ես նրան լաւ գիտէի: Ամուր գրկեցի ուսերը, սեղմուեց ինձ:

Մենք չէինք լսում քամու սաստկացող ոռնոցը:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՆՁՐԵԻ

Անթարթ հայեացքը գամել էր անորոշ կէտի, նայում էր հեռու, սեն-
եակի պառերից այն կողմ: Աչքերը թախծոտ էին, ճակատը՝ սպիտակ: Ան-
բաւարարուածութի՞ւն: Գուցէ հաճելի վերյո՞ւշ:

— Ի՞նչ ես մտածում, — վերջապէս հարցրեց տղամարդը:

Կինը սթափուեց, վերադարձաւ.

— Ոչինչ:

— Այդպէս սովորաբար նայում են, երբ որեւէ անիրականալի ցանկու-
թիւն են ունենում կամ...

Կինը ժպտաց.

— Ամէն ինչ շատ լաւ է, — եւ շարունակեց կարդալ: Չհաւատալու
պատճառ չկար: Իսկ հաւատալո՞ւ: Տղամարդն արդէն ընթերցել էր այդ վէ-
պը եւ հարցրեց.

- Հաւանո՞ւմ ես :
- Առայժմ ոչինչ :
- Աւելի որոշակի չե՞ս կարող ասել :
- Վերջացնելուց յետոյ :
- Վախենում ես սխալուե՞լ :
- Պարզապէս չեմ սիրում շուտափոյթ , չհիմնաւորուած . . .
- Իսկ սուրճ կը խմե՞ս :
- Երկրո՞րդ անգամ :
- Ինքս կը պատրաստեմ :
- Ծնորհակալ եմ , չեմ ուզում :
- Հրաժարում ես , նշանակում է : Այդ դէպքում մի քիչ խօսիր հետս :
- Ինչի՞ մասին :
- Մի՞թէ խօսելիք չունես :
- Ես ուզում եմ կարգալ :
- Ուրեմն հետաքրքի՞ր է :
- Ուրեմն :
- Դու անյուսալիօրէն լռակեաց ես :

Տղամարդը դնաց խոհանոց՝ սուրճ պատրաստելու : Պատուհանից դուրս նայեց : Անձրեւը դգացւում էր լոկ ասֆալտի անփայլ խոնաւութիւնից : Աւելի ճիշդ՝ սեւութիւնից : Մաղում էր անձայն , անտեսանելի : Յայտնի չէր՝ երբ սկսուեց , երբ կը վերջանայ : Սկզբում ուրախացաւ . կը մաքրուի փողոցների փոշին : Յետոյ հիասթափուեց . հաղիւ թէ՛ այնքան դժուարութեամբ է քամւում : Երկինքն էլ ո՛չ ամպամած է , ոչ . . . Լռակեաց անձրեւ : Ա՛յ , եթէ ուժեղ դար , որոտալից , կայծակներով , ինչպէս այն ժամանակ , երբ կնոջ հետ կանգնել էին շքամուտքում , իսկ անձրեւը թափւում էր կանաչ ծառերին , թափւում էր մայթերին , թափւում էր շիտա՛կ , առա՛տ , մաքո՛ւր : Փողոցը , քաղաքը , աշխարհը լցուել էր թաց , անյադ շնչառութեամբ : Յետոյ , կարծես ոչինչ չէր եղել , մէկէն դադարեց , մնաց առաւօտուայ նման թարմ , առոյգ , պայծառ կէսօր : Մայիս էր : Իսկ հիմա ընդամէնը Մարտի սկիզբ : Աւելին չես պահանջի : Անձրեւի փոխարէն կարող էր պարզապէս ձիւն դալ :

Սուրճը յորդ անձրեւի ձայնով թշտաց , թափուեց , հանգստացաւ :
Կինը շարունակում էր կարգալ :

Սուրճն ըմպեց պատուհանի մօտ , փողոցին նայելով : Մուգ , փայլուն մեքենաները վաղվղում էին , ինչպէս . . . միջատներ : Եւ նա շնորհակալութեամբ խոստովանեց , որ կնոջ յայտնուելուց յետոյ բնակարանում միջատները վերացան : Ինքը ոչ մի կերպ չէր կարողանում աղատուել այդ արագավազ , մթասէր միջատներից , որ տունը աւերակի էին նմանեցնում : Կուցէ պարզապէս իր մենակութեան անբաժան ուղեկիցնե՞րն էին . . . Փողոցում , այստեղ ու այնտեղ անձրեւանոցներ երեւացին : Դարմիր , դեղին , կանաչ , որ համատարած դորշաութեան մէջ դարմանալի նման էին լուսամփոփների : Ափսո՞ս , կային նաեւ սեւ , մարած անձրեւանոցներ : Մտածեց , եթէ իրեն երբեւէ փողոցներն անձրեւի ժամանակ հսկելու արտօնութիւն ընձեռուի , ապա կ'արդելի սեւ անձրեւանոցով շրջել : Անպայման կ'արդելի :

Սուրճի դաւաթը ակամայ շրջեց ափսէի մէջ : Կինն անմրցելի դուշապո՞ղ էր համարում : Գաւաթը սառեց , չորացաւ :
— Կը նայե՞ս , — դիմեց կնոջը :
Կինն ընդհատեց կարգալը , ժպտաց .
— Ինչո՞ւ յանկարծ : Չէ որ դու չես հաւատում : — Երբ մատները սպի-

տակ էին ձեռքի ձենասլակեայ դաւաթի պէս : — Սիրտդ լցուած է, ինչպէս միշտ : Դրամ պիտի ստանաս : Կամ՝ ծանրոց : Ապաղաղ լուսաւոր է : Այսքան :

— Ճանապարհ չկա՞յ :

— Բաժակում՝ ոչ :

Տղամարդը յօրանջեց : Կինը նոյնպէս :

— Քնե՞լ ես ուղում :

— Չէր խանդարի տաս-տասնըհինգ ընկէ . . .

Պառկեցին : Կինը, սովորութեան համաձայն, դլուխը դրեց տղամարդու թեւին, կուչ եկաւ :

— Իսկ ինչո՞ւ տաս-տասնըհինգ ընկէ :

— Չդիտեմ, մի տեսակ մեղք եմ համարում ցերեկով քնել :

— Պարապելո՞ւ ես :

— Չէ :

— Ինչ-որ տե՞ղ ես շտապում :

— Չէ :

— Դու սուրճից յետոյ միշտ քնել ես ուղում, այնինչ . . .

Տղամարդը ժպտաց .

— Փակիր աչքերդ :

— Դու էլ փակիր :

Փողոցից պարզ լսում էր, ինչպէս մեքենաներն անցնում են թաց ասֆալտով : Արդէն թաց : Երեւի նաեւ փայլուն : Կինը քնեց աննկատ, խաղաղ : Նա միշտ դարմանալի հեշտ էր քնում : Առանց ջանք դործադրելու, առանց յարմար դիրք որոնելու : Եւ արթնանում էր նոյն անփոփոխ վիճակում : Եթէ ձախ կողմի վրայ էր քնել, ձախ կողմի վրայ էլ արթնանում էր : Պատահաբար հանդիպեցին, մտերմացան եւ . . . Ինքը դո՞հ էր կնոջ համակերպուող, հաշտ ու մեղմ բնաւորութիւնից : Եւ, որ նա երբեք ղղացնել չէր տալիս իր գոյութիւնը, մա՛նաւանդ խանդարում : Ինչպէս հիմա, պառկեց եւ քնեց անվրդով : Ամէն ինչ անում էր աննկատ, բայց տեղին : Ինչ-որ ներքին ձայնի թելադրանքով : Երբ հարկաւոր էր կար, երբ հարկաւոր չէր՝ չկար . Թերեւս այդպիսի կնոջ բոլորն են ձգտում : Ի հարկէ, անհամեմատ դժուար է լռակեաց լինել, քան շատախօս : Այսօրուայ անձրեւի տակ կարելի է քայլել, իսկ . . . Մայիսին անձրեւները կը յորդանան, անպայման :

Տղամարդը նայեց ժամացոյցին . անցել էր քսան ընկէ : Ո՞ւր է շտապում : Շարաթ է, բոլոր կարգին մարդիկ հանդստանում են : Անդլերէնի առաջադրանքը վերջացրեց : Կիսատ դործե՞ր . . . Սառնարանն է հարկաւոր վերանորոգելու տալ : Կը հասցնի : Անձրեւ է դալիս : Դեռեւս կարելի է օդտուէլ եղանակի բնական ցրտութիւնից : Ուրի՞շ :

Վեր կացաւ, հաղնսւեց :

Կինը բացեց աչքերը, ժպտաց .

— Չքնեցիր :

— Մի քիչ : Իսկ դո՞ւ :

— Եո երազ տեսայ : Իբր ծովափին էինք : Մեծ ժայռեր կային : Ուղում էիր լողալ՝ չէի թողնում, որովհետեւ ալիքներն այդ ժայռերի նման մեծ էին ու կարծր : Ինչո՞ւ ես կօշիկներով :

— Յետո՞յ :

— Յետոյ դու վիրաւորուեցիր ու մօտեցար մանուշակագոյն ակնոցով բարալիկ աղջկան, որ անընդհատ քեզ էր նայում, եւ ես արթնացայ : Ո՞ւր ես գնում :

— Սառնարանը...

— Մի՛ թողնի ինձ:

— Չեմ ուշանայ:

— Այսինքն, եթէ շատ ես ուզում, գնա՛:

— Շատ չեմ ուզում, ուղղակի... Երբեւէ եղել է, որ ես քնեմ, դու՛

ոչ:

— Ների՛ր, սիրելիս, կ'աշխատեմ այսուհետեւ քեզնից շուտ չքնել:

— Դու լաւն ես: — Համբուրեց կնոջը: — Անսահման բարի:

— Ես հիմա կը կերակրեմ քեզ:

Տղամարդը քաղցած չէր: Միդարէթ վառեց: Ուսեւն էլ, այնուամենայնիւ, զբաղմունք է: Երբեմն նաեւ հաճելի: Չէր ծխում, սիգարէթը հանգցրեց:

— Իսկ ի՞նչ ենք ուտելու:

— Մոռացա՞ր: Ինքզ էիր պատուիրել, կոտլետ:

— Նո՞ր պիտի պատրաստես: Կորանք, երեք ժամ կը տեւի:

Տղամարդը երրորդ անգամ բաց արեց լրագիրը, ծալեց: Անհրաժեշտ է հեռուստացոյց գնել: Թէկուզ ապառիկ կարգով: Հարկ է աստիճանաբար վարժուել տանը նստելուն:

Խոհանոցից ախորժալի հոտեր եկան: Մի՞թէ, իրօք, քաղցած է: Վերջապէս իմացաւ, թէ ինչ էր ուզում: Մի փոքր համբերութիւն եւ... Յաճախ ամենաանիրական թուացող ցանկութիւններն իսկ, երկար դեգերումներից փոխակերպուելով, ի վերջոյ յանգում են կենսական որեւէ պահանջի: Եւ անպայման գոհացում ստանալու փաստը երբեմն ընդհանուր բաւարարուածութեան պատրանք է ստեղծում:

Կոտլետն այրուել էր: Կինը նայում էր մեղաւոր.

— Շտապելուց եղաւ:

— Իսկ մակարոնները կպել-ձուլուել են: Երեւի մոռացել ես եփելիս

աղ լցնել:

— Երեւի:

— Ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ դու մակարոն եփել չգիտես:

— Ես ոչինչ չգիտեմ:

— Մի՛ նստիր խռովկան երեխայի պէս: Մի յարդարժան տիկին, ինչ-որ գիտութիւնների թեկնածու, բոլորի մօտ պարծենում էր, որ մինչեւ հիմա չի կարողանում մակարոն եփել:

— Ես գիտութիւնների թեկնածու չեմ:

— Ուրեմն կը սովորես: Ծնորհակալութիւն:

Սենեակի լոյսը չվառեց: Չէր ուզում հակադրուել, պոկուել, մեկուսանալ դրսից: Այնուամենայնիւ, հաճոյքով կ'ուտէր իսկական, հիւթեղ, չալբրած կոտլետներ՝ հատ-հատ մակարոնի հետ: Նախապատրաստուել էր: Ամենամատչելի ցանկութիւնն էլ անհնար դարձաւ: Ինչ փոյթ, պէտք է համակերպուել: Վերջին հաշուով ինքը երբեք էլ չի եղել որկրամուկ: Ուսանող ժամանակ մեծ մասամբ փքարլիթ էր ուտում, թշկական երջիկ կամ պահածոյ՝ (Պահածոյի տուփ լինէր՝ քացով տար), Թոշակի օրերին հանրակացարանային ընկերներով գնում էին ռեստորան եւ, մինչեւ զօտու վերջին անցքը, ուտում: Մօրաքոյրը յաճախ էր հրաւիրում ճաշելու, բայց ինքը քաշում էր պաշտօնեայ ամուսնուց եւ զանազան պատրուակներով՝ հրաժարում: Արձակուրդներին ուրի՛շ. գնում էր գիւղ, ծնողների մօտ, ուր իւղալի ճաշերով այնքան էին բոտում «ինժեներ որդուն», որ, քաղաք վերադառնալիս, տղաները սրամտում էին. «Երեսդ յետեւից էլ է երեւում»: Աշխատանքի անցնե-

լուց յետոյ, երբ ստացաւ այս բնակարանը, հետզհետէ վարժուեց տանը պատ-
 րաստել: Ամաններ լուալն աւելի տհաճ էր, մա'նաւանդ, երբ ջուր չէր լինում:
 Իսկ սենեակ հաւաքե'լը... Կինը շատ բաներից ազատեց նրան: Մինչեւ ան-
 դամ տրամագրեց (դարձեալ աննկատ) յաճախակի հաւաքոյթների փոխա-
 րէն, պարապել՝ կրթութիւնը շարունակելու համար՝ ամենեւին ջնեղուելով
 նիւթական անխուսափելի դժուարութիւններից: Այս բոլորը լոկ երախտագի-
 տութեան արժանի իսկութիւն է: Ուղղակի այսօր ահամայ միտն եկան մօր
 պատրաստած կոտլետները եւ... բայց դրա համար չ'արժեր վիրաւորել կնո-
 ջը: Ոչինչ չկերաւ:

Կինը գլուխն առել էր ափերի մէջ, անշարժացել:

— Ների'ր, չէի կարծում, որ սրտիդ այդքան մօտ կ'ընդունես, — ա-
 սաց տղամարդը: Կինը չպատասխանեց: Լալի^օ էր: Համբուրեց մազերը: —
 Մի' յուզուիր: Ամէն ինչ լաւ կը լինի:

— Այսօր դու բոլորովին ուրիշ ես:

— Ոչինչ: Տրամադրութիւնս... կ'անցնի:

— Գուցէ հիւա^օնդ ես:

— Յիշո՞ւմ ես, առաջ միշտ ասում էիր՝ երանի հիւանդանաս, խնա-
 մեմ:

Կնոջ աչքերում ժպիտանման կայծ յայտնուեց: Միայն ինքն է ընդու-
 նակ՝ լոյսի ամենաթոյլ շողն անգամ անդրադարձնել, մտածեց տղամարդը:
 Պէտք է ամէն գնով պահպանել այդ հրաշալի յատկութիւնը:

— Հիւանդանա^օ, ճիշդ չի: Ուղղակի խնամել էի ուզում, ինչպէս ե-
 րեխայի:

— Իսկ հիմա^օ:

— Առաւել եւս հիմա: Միայն թէ՛ չեմ կարողանում բաւաբարել:

— Գու անփոխարինելի ես:

— Ճիշդ չի: Ինձ շարունակ թւում է, թէ աւելորդ եմ, անպէտք:

— Յիմարութի'ւն: Ինքդ էլ չգիտես՝ որքան ես ինձ հարկաւոր:

— Իսկ դու դիտե^օս:

— Թերեւս ես էլ մինչեւ վերջ չեմ դիտակցում: Աւելի շուտ, չեմ մը-
 տածել: Կաս, ինձ հետ ես...

— Գուցէ անհրաժեշտ է որոշ ժամանակ չտեսնե՞լ միմեանց, կարօտել:

Տղամարդն իսկոյն չպատասխանեց:

— Մեր հիմնարկում մի զարմանալի զոյդ կայ. միասին դալիս են աչ-
 խատանքի, միասին նստում են, միասին ընդմիջում անում, միասին... եւ,
 պատկերացրու, նախանձելու աստիճան սիրով են: Յամենայնդէպս, տպաւո-
 րութիւնն այդպիսին է: Մեզ ոչ թէ հարկաւոր է հեռանալ, այլ՝ մօտենալ,
 գտնել: Մենք, ըստ երեւոյթին, ինչ-որ տեղ կորցրել ենք իրար: Ի հարկէ,
 հեռանալով էլ են գանում, բայց...

— Զարմանալի զոյդ: Գու առաջ կարող էիր ժամերով լինել ինձ հետ
 եւ չձանձրանալ:

— Հիմա էլ կարող եմ, միայն շատ ես լռում:

— Ես ուղղակի չեմ ուզում քեզ... խանգարել:

— Երբեմն նաեւ խանգարիր, յիշեցրու գոյութիւնդ:

Կինը բռնեց տղամարդու ձեռքը.

— Ինչո՞ւ ես այդքան անհանգիստ:

— Զգիտեմ: Կարծես ինչ-որ անյետաձգելի բան պէտք է անէի, չեմ
 արել:

— Կինօ պիտի գնանք, երեկոյեան :

— Յիշում եմ : Անպայման կը գնանք, բայց . . .

Փիլմի հերոսուհին (ամսագրում տեսել էր լուսանկարը) յիշեցնում էր մի ծանօթ աղջկայ, որ յամառօրէն շարունակում էր առկայծել իր թխպոտ յուշերում : Եւ տղամարդն ակամայ ուրախացաւ, որ անձրեւ է գալիս, որովհետեւ տոմսերն առանց հերթի կը վերցնեն : Յետոյ ատեց իրեն, որ այս կարեւոր խօսակցութեան ժամանակ էլ, թէկուզ ուղեղի հեռաւոր նրբանցքով, անցնում են ինչ-որ . . . մա'նաւանդ, երբ կինը համբուրեց ու ասաց, որ շատ է սիրում : Իսկ լուսաւոր խոհանոցից սենեակ անցնելիս, այնուամենայնիւ, մտածեց՝ ի՞նչ անել մինչեւ երեկոյ : Գոնէ հեռախօսը զանդ տար : Բոլորովին մոռացել են իրենց գոյութիւնը : Կարծես օտար քաղաքում գտնուէին . ո՛չ ծանօթ կար, ոչ՝ բարեկամ : Օտար քաղա՛ք, հիւրանո՛ց . . . Լաւ կը լինէր : Ինչպէս ամբանը, ծովափին :

Խոհանոցում կինն ամաններն էր լուանում : Անշտապ, խնամքով : Իսկ ո՞վ արձակուրդ կը տար հիմա : Միայն չորս ամսից, այն էլ լաւագոյն դէպքում :

— Ե՞րբ կը վերջացնես, — հարցրեց տղամարդը :

— Ինչո՞ւ :

Կնոջը շատ էր սաղում նոր, դեղնաւուն գոգնոցը :

Տղամարդը վերադարձաւ սենեակ : «Ինչո՞ւ» : Պատուհանից դուրս նայեց : Մթնում էր, եւ անձրեւանոցներն այլեւս նման չէին գունաւոր լուսամփոփներին : Դիմացի տան պատուհանների մեծ մասում լոյս կար : Ետևով կը վառուէին նաեւ փողոցի լապտերները :

Պատուհանը յանկարծ սեւացաւ, անդրադարձրեց սենեակի ջահը, իրեն : Տղամարդը շուռ եկաւ . կինը կանգնել էր ելեկտրական անջատիչի մօտ . վախեցած, շփոթուած, սպասումով : Բերանի անկիւններում հազիւ նշմարուող ժպիտն ամէն վայրկեան կարող էր անհետանալ :

— Եկայ, — ասաց երկչոտ :

— Ես քեզ սիրում եմ :

Տղամարդը զարմանալի յստակ լսեց իրեն :

ԻՄԻԼ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

ՄՏԱՊԱՏԿԵՐԻՆ ԱՆՊՍԱԿ

Թող խաւարը շրջի այսպէս :

Թող վերածուի երկրագունտն իմ էութեան
նկարչատան խուցի մը մութ :

Ըլլայ մթին շրջավազք
խոհերուս դէմ առասպելացող .
դատողութեան մթին դիտանկիւն՝
հայեցողութեանս հորիզոնին հակադրուող :

Ըլլայ խորհուրդ մը անկարելի, որ առաջնորդէ զիս
ներքնագաւիթը խոտոր համեմատութեան :

Ընդգծուած բառը
պիտի դառնայ նախաշաւիղը թափանցումներու,
որոնք կը բացուին անէակից իմաստներու
կիզակէտին անպրիսմակ :

Ո՞ւր է նամբադ, որ պիտի երգէր
կարգախօսը անդունդներու :
Կը բեկանուի ողնաշարը օրերուդ իմաստութեան՝
տողադարձուած բառի մը պէս :

Բայց միայն դուն, անեղծելի Քաղցրութիւն,
տողադարձ պիտի չունենաս :

Մայթերու վրայ երազներ կան գունաթափ :
Չորցած արեան հետքեր :
Չորցած դիմաստուերներ :
Թարշամած ծաղիկները խորհրդանիշն են
տխուր նախընթացներու :
Ծաղկեպսակը միութեան օղակն է
կատարուած իրողութիւններու :
Յոտնկայս լուսիւնը՝
խորհրդանշական մահադուրը մահուան :

Թող խաւարը շրջի այսպէս :
Ստուերանան ստուերները տեսիլներու :
Թող պարտութիւնը իր պարտութեամբը արբեցայ
կորսուած նշանաբանի մը ամբութեան ետին :

Չակերտուած բառը պիտի դառնայ նշանաբանը
լուսեղէն ծաւալումներու :

Պիտի դառնայ հարսնաբանը անօթեւան նանաչումիս :
Դառնայ մտապատկերն իմ մտապատկերին,
յօրինելով նաւակատիքը
օրհներգութեան անպսակ :

Ն. Զ Ա Ր Խ Ո Ի Տ Ե Ա Ն

ՄԵՌԵԼ ՄԸ ԱՍՓԱԼԹԻՆ ՎՐԱՅ

Հրապարակին տառապած ասֆալթը սկսաւ կակուզնալ՝ իր սեւ զանգաւածին մէջ կաղապարելու համար մարդկային այս կերպարանքը, որ երկրնցած կռնակին վրայ, անթարթ կողերուն բացուածքէն հեղնական նայուածք մը կը նետէր երկինքին: Հողին դուրս ցայտած էր ճակտին ճիշդ մէջտեղը բացուած կլոր վէրքէն եւ նոյնացած էր լուսաւոր կէտի մը՝ կորսուած ծիրկաթիններու անհունութեան մէջ, ուր երիտասարդ զոհերը կ'երթան շարունակելու իրենց երկրաւոր կեանքին մնացեալ տարիները:

Այդ լուսաւոր կէտը Արուսեակ մոլորակն էր...

Մայրը, որ պատուհանին առջեւ նստած՝ կը սպասէր իր զաւակին, նոյնպէս տեսաւ այդ լուսաւոր կէտը, բայց չկրցաւ կռահել եղելութիւնը: Զաւակին հողին խտացող ամպի մը պէս վերածուած էր անտեսանելի հիւլէի մը, այնպէս որ՝ իրենց մարմնական եւ զգացական կապերը խզուած էին ընդմիջտ: Ու յաւիտենական Եւան պորտին վրայ զգաց անջատումի այն նոյն ցաւը, որ կ'արձագանգէ մայրերու արզանդին մէջ, երբ սկսին քալել առանձնութեան խոպան անդաստանին մէջ:

Զաւակին հողին աչքերուն բիբերուն մէջ խտացած՝ կը նայէր դէպի այն տունը, ուր կը բնակէր մութ ու խորունկ աչքերով մանկամարդուհի մը...

... Հեռաձայնին զանգահարումները զիս կը ցնցէին խորհրդաւոր կանչերու պէս: Այնքան կը փափափէի ընկալուչին փոքրիկ եւ անտարբեր ծակտիկներուն մէջէն լսել ձայնդ:

Կիրակի յետմիջօրէ մըն էր: Առանձին էի՝ լուռ ու ամայի տան մէջ: Առանձին էի՝ ինքն իր վրայ կծկուած եւ ռումբերու հարուածներուն մէջ տրեւացող քաղաքին մէջ: Յոյս անտեսանելի թելով մը կապուած էր շրթներուդ թրթռացումներուն: Արդեօք այդ պահուն կ'անդրադառնայի՞ր, որ քեզի սպասող մը կար, ինչպէս սոված ուխտաւոր մը՝ երկնային մանանային:

Զարագուշակ լուսիւն մը կը սաւառնէր մթնոլորտին մէջ: Վայրկեանները, աւազի հատիկներու պէս խորտակելով ներկային պարիսպը, կը կորսրէին անցեալին մէջ: Յոյս կը շիջէր՝ առանց ձեռքի լապտերի մը բոցին պէս...

Եւ յանկարծ հեռաձայնին զանգահարումը փշրեց մթնոլորտին նիւթանան: Զայնդ էր, դո՛ւն էիր: Ի՛նչ անակնկալ, ի՛նչ հրաշք: Ուրախութիւնը կ'արագացնէր սրտիս զարկերը: Պիտի գայիր...

Պիտի գայիր...

Քալէ աստիճաններուն վրայ լսեցի կրունկներուդ յօրինած երաժշտութիւնը: Այդ պահուն քայլերուդ կշռոյթը կը գերազանցէր Պեթհովէնի եւ Պերլիոզի սոնաթները եւ սենֆոնիները:

Դուռը բացի: Դէմքիդ պայծառութիւնը ոչնչացուց արտաքին բոլոր գոյութիւնները եւ ամբողջ տիեզերքը, ներկան եւ յաւիտենականութիւնը խրտապաւ անունիդ երեք վանկերուն մէջ. Ռամոնա՛:

Նստար նոյն թիկնաթոռի նոյն բազմոցին վրայ: Ներկայութիւնդ կը լեցնէր ներաշխարհս, կը լուսաւորէր հոգիս եւ ցովքեր կը դրոշմէր ընտանի առարկաներուն վրայ:

Հազիւ քանի մը բառ արտասանեցիր եւ ոտքի ելար: Ազաչեցի, բայց անդրդուելի մնացիր եւ, ձեռքդ երկարելով ինձի՝ մեկնեցար: Ներբաններուդ ձայնը մարեցաւ վարի յարկերուն խորութեան մէջ եւ շուրջս տիրող ցնծութիւնը, անտեսանելի բերաններու արձակած ծիծաղները լսեցին յանկարծ:

Առանձին էի կրկին, բայց շնչած օդս նոյնը չէր, անոր մէջ խառնուած էր թոքերուդ արտաշնչումը, ձայնիդ արձագանգները, թարթիչներուդ թեւահարումները:

Կը սպասե՛մ, կը սպասե՛մ: Վերադարձի՛ր, ո՛վ Եդեմս, կրկին յայտնուէ, մարգարիտներով եւ ադամանդներով բեռնաւորուած առագաստանաւս:

... Քաղաքին հրապարակները եւ փողոցները դարձած էին սարսափազդու կրկնաներ, ուր մահը կը քրքջար շաչող զնդակներու խոյանքին հետ եւ դարանակալ մարդիկ թակարդներ կը լարէին իրենց ընտրած զոհերուն համար: Արձակազէններ, դիրք բռնած ապահով անկիւններու վրայ՝ անմեղ անցորդներ կ'որսային, ինչպէս անառններու յովազները երէի կը սպասեն: Սպաննելու առիթը երբեմն այնքան հազուադէպ կ'ըլլար, որ բազմաթիւ փամփուշտներ կ'ուղղուէին նոյն թիրախին վրայ:

Մայրը իր նստած տեղէն լսած էր զնդակին թունաւոր սոյլը, բայց չէր հասկցած, որ անիկա իր թոյնը պիտի ներարկէր իր սրտահատորին, մէկ հատիկ զաւկին մարմնին մէջ:

Երկու օր առաջ, հակառակ տիրող մթնոլորտին՝ երիտասարդը դացած էր ուրիշ թաղ մը՝ տեսնելու համար իր սիրուհին եւ խոստացած էր վերադառնալ նոյն օրը, մոռթը չկոխած: Դրան սեմին, մայրը համբուրած էր անոր ճակտէն եւ այս եղած էր մարմնական իրենց վերջին հպումը:

Զաւակը մեկնած էր մայրական համբոյրին դրոշմը ճակտին, բայց չէր վերադարձած ո՛չ մայրամուտին, ո՛չ դիշերը եւ ոչ ալ այգաբացին: Հեռախօսի ցանցը, ելեկտրականութիւնը եւ երթեւեկը մարդոց ուղեղներուն պէս խանդարուած ըլլալով՝ մայրը չկրցաւ իմանալ, թէ զաւակը ուր մնացած էր:

Աչքերը յառած Արուսեակ մոլորակին, ներքին եւ առհաւական մղուամով մը, իր յոյսին թեւերով կը վանէր այն սեւ մղձաւանջը, որ կապարէ հըսկայ ալիքի մը պէս կը խոյանար՝ զինք բանտարկելու համար ունայնութեան անդունդին մէջ:

Սակայն հրապարակի ասֆալթին վրայ պառկած երիտասարդը իր կիսախուփ կոպերուն մէջէն կը հետապնդէր հին երազ մը...

... Գիտե՞ս որքան հասարակ է այն փողոցը, ուրկէ կ'անցնէի երբեմն: Իէպէրու բերմամբ, բոլորս ալ շղթայուած էինք իրարու նոյն թաղին, նոյն պատերուն մէջ: Բայց մեր իւրաքանչիւրին շղթան ինքնայատուկ էր եւ անտեսանելի եւ ո՛չ ոք գիտէր զայն փակելու գաղտնիքը: Օրեր շարունակ կ'ապ-

րէի նոյն միօրինակութեան մէջ, եւ փոզոցը կը վերածուէր յուսահատեցնող որմնագոյի մը, որ երազ իսկ չի ներշնչեր:

Եւ օր մը, մէկը այդ անտանելի օրերէն, ցուցափեղկի մը թափանցիկութեան մէջէն յանկարծ յայտնուեցաւ կերպարանֆ: Կը ֆալէիը խրոխտ եւ ինքնավստահ ֆայլերով եւ մագերդ կ'ելեւէջէին լօտերու բարակ ու խիտ տերեւներուն պէս, որոնք շղթայուած գետերու հունին, ջուրերու հոսանքին հետ կ'ողբան իրենց կորսուած ազատութիւնը եւ անհասանելի երազները:

Առաջին անգամը չէր, որ կը տեսնէի ֆեզ: Բայց այդ պահուն էր, որ անդրադարձայ գոյութեանդ: Կարծես կու գայիր իմ հեռաւոր անցեալէն, Եդեմի ծաղիկներուն բոյրերովը օծուած, եւ դէմֆիդ վրայ կը ծփար խորհրդաւոր ժպիտ մը, որուն միջոցով կը փորձէիր ինծի հաղորդել հրեշտակներուն պատգամը:

Ապակիին անյատակ թափանցիկութեան մէջ, պատկերդ կ'առնէր գանազան երեւոյթներ եւ իւրաքանչիւր ֆայլիդ կ'այլափոխուէր դէմֆդ: Մագերուդ գոյնը կ'ըլլար սեւ, շագանակագոյն, կապոյտ, շէկ կամ խարտեաշ...

Անցֆդ տեւեց ֆանի մը երկվայրկեան միայն, բայց այդ երկվայրկեանները նոյնացան յաւիտեանականութեան հետ, որովհետեւ գիտէի, որ այսուհետեւ, օրուան նոյն պահերուն պատկերդ կրկին պիտի յայտնուէր ցուցափեղկին անյատակ հայելիին մէջ:

Եւ որպէսզի հրաշալի պատկերդ յաւերժանայ բիրբուս մէջ, գոցեցի աչքերս եւ երեւակայութեամբ դարձայ ստուերդ ու ֆեզի հետեւեցայ կեանքիդ ամբողջ տեւողութեան:

Անունդ չէի գիտեր այն ատեն եւ մտֆես կ'անցընէի աղջկան այդ խորհրդաւոր եւ ֆաղցրահնչիւն անունները, որոնք դարերէ ի վեր կ'երգէին բանաստեղծներու տողերուն մէջ՝ Եւա, Ջիլա, Էլիսա, Նոզիֆաա, Իգէօ, Էլոյիգ...

Դուն, նորածին ծաղիկ, աշխարհ եկած էիր դարեր առաջ, երբ արեւը իր ամբողջ լոյսը կը կեդրոնացնէր Զոտիաֆի այն տան վրայ, ուր կը բազմի Լուսնթագ մոլորակը:

Ո՛չ, դուն անծանօթ մը չէիր ինծի համար: Քեզ ցանչցայ այն օրերուն, երբ հրեշտակները երկինքէն իջնելով կը դարպասէին մարդու աղջիկները եւ, անոնց աչքերուն եւ ժպիտներուն կախարդանքէն տարուած՝ կը հրաժարէին դրախտէն եւ անմահութենէն, կեանակցելու համար անոնց հետ:

Թէեւ անծանօթ մը չէիր ինծի համար, սակայն դժուար եղաւ ստուգել ինքնութիւնդ: Ո՞վ էիր արդեօք այն օրերուն. անմերձեցալի թագուհի մը, հպարտ իշխանուհի մը եւ կամ նուիրական ֆրմուհին այն դիցուհիներուն, գորս աշխարհի բոլոր ժողովուրդները կը պաշտէին գանազան անուններու տակ. Իշթար կամ Ասթարթէ, Իգիս կամ Անահիտ, Վենիւս կամ Աֆրոտիթէ...

Գիշեր մը, կանգնած էիր ընդարձակ տարածութեան մը վրայ: Թեթեւ հով մը մագերդ կը շոյէր անտեսանելի ձեռքի մը պէս եւ ամէն անգամ որ անոնց թելերէն մէկը, գանգուածէն անջատուելով հպէր երկնակամարին, աստղի փշուրներ կը տեղային շուրջդ, լոյս ու սնունդ տալու համար այդ գոյնըգոյն ծաղիկներուն, որոնք գորգ մը կը հիւսէին ներբաններուդ տակ...:

...Մայրը կը սպասէր, աչքը ճամբուն, ուղեղը սառած, մարմինը բզկառուած դուշակութիւններու կոհակներուն տակ: Ան չէր գիտեր, թէ զաւակը, մեռնելէ առաջ, անուն մը պոռագած էր, երբ փամփուշտին շփնդը կը խորասկէր լուռ մթնոլորտը:

Եւ դահիճը, լսելով այդ անուան երեք վանկերը, զէնքը նետած էր դե-
տին եւ խենթի մը պէս վազած էր ծովուն կողմը, կրկնելով երիտասարդին
պոռացած անունը: Շէնքերը երերացած էին իրենց հիմերուն վրայ, եւ լու-
թիւնը փշրուած՝ ասլակիէ թմրուկի մը պէս:

Հրապարակին թանճր ասֆալթը կը կարծրանար դիչերուան ցուրտին
հետ եւ խաացող իր սեւ զանգուածին մէջ նախ կը գրկէր եւ յետոյ կը ճզմէր
երիտասարդին միսերը ու կը կոտորէր անոր ոսկորները:

Հրապարակը վերածուած էր կախարդական շրջանակի մը, որուն սահ-
մանէն ներս ոտք կոխելը կը նշանակէր ստոյգ շանթահարում: Յերեկները,
թաղերու անկիւնէն, մարդիկ երկիւղով մատնացոյց կ'ընէին միսի եւ ոսկո-
րի անշարժ այս զանգուածը, որ արդարութեան նժարին մէջ աւելի ծանր կը
կշռէր, քան Ուրանոս մոլորակը: Ոչ ոք կը յանդգնէր մօտենալ անոր եւ կի-
սախուփ կողերուն մէջէն գիտել մարդկային ամբողջ ողբերգութեան մը շար-
ժապատկերը: Ոչ ոք կը մտածէր փոխադրել այս մարմինը եւ զետեղել պար-
տասուն մօր գիրկը:

Երբ արեւը կրկին վերանուաճեց երկնակամարը, ասֆալթը կակուղ-
ցաւ եւ թուլցուց իր պրկումը: Երիտասարդին ճզմուած միսերը եւ փշրուած
ոսկորները գտան իրենց հանգիստը եւ աստղին մէջ ապաստանած իր հոգին
տոժամապէս վերակենդանացուց իր ուղեղին քարացած բջիջները: Բիբերուն
մէջ, որ կ'այլափոխուէին լուսանկարչական մեքենայի մը ոսպնեակին պէս,
սկսան տողանցել հարազատ գէմքեր:

Մօր դէմքը երեւցաւ պահ մը, բայց շուտով տեղի տուաւ կնոջական
ուրիշ դէմքի մը, որ իր քրոջը դէմքը չէր, որովհետեւ երիտասարդը, միամօր
ըլլալով՝ քոյր չունէր: Ս.մէն անդամ որ անոր սեւ աչքերը իր աչքերուն կը
հանդիպէին, խորհրդաւոր ալքիմիազիտութիւն մը իր տառապանքները կ'այ-
լափոխէր հրճուանքի:

... Ռամոնա՛, կորսուած եւ վերագտնուած Ռամոնա՛...

Ահա կանգնած ես դէմս: Սեւ մագերդ կը բուրեն հեշտանք ու անմե-
ղութիւն, իսկ ներմակ նակտիդ տակ, Տարտարոսի մուտքին չափ մութ ու
խորունկ աչքերդ, սեւ ադամանդներու անտարբերութիւնը ունին:

Արդեօք մահուան թագաւորութեան մէջ մտնելու համար անհրաժեշտ
պիտի ըլլայ խորտակել թարթիչներուս վանդակամատները:

Հիմա դուն ու ես կը լեցնենք տիեզերքը, որովհետեւ ստեղծագործու-
թիւնը ամբողջ վերադարձած է իր նախնական վիճակին, արգանդային ֆառ-
սին, եւ դուն միայն կրնաս ձեռքիդ մէկ հպումով արգասաւորել եւ վերաձե-
ւաւորել այդ ֆառը: Եթէ թարթիչներդ շարժես՝ ֆարերը պիտի վերածուին
մարդ արարածներու եւ ծովափին աւազները ադամանդի հատիկներու...

Ա՛հ, ինչո՞ւ աշխարհ եկար այսֆան ուշ: Տարիներ ամբողջ, մայրա-
մուտէն մինչեւ այգաբաց՝ կը դիտէի այն աստղը, որուն մէջ կը կազմաւոր-
ւէր հոգիդ, թռչելէ առաջ դէպի երկրագունտ մոլորակը:

Եթէ ֆանի մը տարի առաջ ծնած ըլլայիր, գիսաւոր մը ինծի պիտի
աւետէր ծնունդդ, որպէսզի գամ ու միանամ քեզի:

Աստղը դեռ չմարած՝ նամբայ պիտի իյնայի քեզ որոնելու համար: Պի-
տի շրջէի ցամաքամասէ ցամաքամաս, կողիէ կողի, եւ անցորդներուն պիտի
հարցնէի անունը այն վայրին, ուր ծնած է աշխարհի նոր թագուհին...

Պիտի յաղթահարէի ովկիանոսներուն զայրոյթը եւ անապատներուն

անծայրածիր գերեզմանը եւ պիտի հասնէի տանդ մօտերը: Եւ օր մը քեզ պիտի տեսնէի պարտէզիդ մէջ, ծաղիկներով շրջապատուած:

Պիտի իմանայիր ժամանումս եւ, ծաղկեփունջ մը գրկած՝ պիտի քալէիր երկար ու արեւախանձ ցամաքում վրայ: Պիտի տեսնէի՞նք զիրար ու պիտի վազէի՞նք դէմ յանդիման: Քեզ պիտի առնէի բազուկներուս մէջ, քեզ պիտի սեղմէի կուրծքիս վրայ...

Եւ ագահի մը պէս, որ վերագտած է իր կորսուած գանձը, քեզ պիտի տանէի հեռուները: Գիշեր ու ցերեկ եւ առանց կանգ առնելու պիտի քալէի դէպի անծանօթ ասիեր, դէպի կոյս ու դրախտային երկիրներ, որոնցմէ անդին կը գտնուի այն թագաւորութիւնը, որ ժամանակներու սկիզբէն ի վեր քեզի սահմանուած էր:

Եւ այդ թագաւորութեան բնակիչները, քու հպատակներդ պիտի գային իրենց քաղաք ծաղիկներով եւ պտուղներով դիմաւորելու քեզ: Եւ անոնց պիտի ըսէի. «Ահաւասիկ Ռամոնան, ահաւասիկ՝ ան թագուհին»:

Եւ բիրեղեայ ջուրերով լնակի մը ասիին կառուցանել պիտի տայի գեղեցկութեանդ արժանի դղեակ մը, հեռու՝ նախանձոտ կիներու եւ լպիրշ ու անզգամ այրերու նայուածքէն...

... Հիմա անեզր պարապուծիւն մը կը լեցնէր իր ակնակապիճները: Ասֆալթին վրայ պառկած երիտասարդին մարմինը կը կրէր մարգոց ոճիւրներուն ամբողջ ծանրութիւնը, որովհետեւ իր մարդ-եղբայրներէն մէկուն արձակած մետաղի կտորը ընդհատած էր դէպի երջանկութիւն իր ընթացքը:

Երբ մանուկ էր եւ կը քնանար օրօրոցին մէջ, սրտին զարկերը կը դանդաղէին համընթանալու համար մօր սրտի զարկերուն: Երբ անհանգստանար, կը բաւէր որ ճիշ մը արձակէր, որպէսզի վերադառնար մօր տաք գրկին մէջ եւ նոյնանար անոր ստինքներուն փափկութեան, եւ անոնց պորտային հանգոյցները կը քակուէին ու կը վերամիանային այնպէս՝ ինչպէս էր երբ կ'ապրէր իր սաղմնային կեանքը եւ իր կազմուող միսերը կ'օրօրուէին մայրական արգանդը լեցնող կենսատու հեղուկին մէջ:

Հիմա, որ մեռած էր, մայրական գիրկը չէր կրնար իրեն պարգեւել այդ նախածննդային անդորրութիւնը, որուն մէջ կ'ուզէր վերստին անհանալ: Պէտքը կը զգար աւելի ապահով բոյնի մը, աւելի անհուն արգանդի մը, հոն թաղելու համար իր անձկութիւնը, յուսախարութիւնը եւ պատրանքները...

Միայն հողը կրնար իրեն պարգեւել փնտռած յաւիտենական նիրվանան: Եւ սեւ մազերով իր սիրուհին ուրիշի մը պիտի տար այն համբոյրը, զոր իրեն խոստացած էր երգումով...

Այդ մետաղի կտորը ահա զինք նետած էր ասֆալթի գիրկին մէջ, երկրին ընդերքներէն հանուած դժոխային այս սեւ հեղուկին մէջ, որ իր մարմինին կը փաթթուէր՝ անյագ ու լպիրշ պերճաղիճի մը պէս:

Ա՛հ, ինչո՞ւ մարդ արարածին չէ տրուած ընտրել այն վայրը, ուր պիտի ննջէ յաւիտենական քունը: Որքա՞ն պիտի ուզէր թաղուիլ կոյս եւ բերրի հողին մէջ, բլուրի մը գագաթը, ուր մարմինը տարրալուծուելէ ետք պիտի վերածուէր հանքածուխի, մարմարի, մետաղի հիւլէներու, իսկ արիւնը սընունդ պիտի տար բազմատեսակ բոյսերու եւ կարմիրով պիտի ներկէր անոնց ծաղիկները եւ պտուղները:

Եւ օր մը, այդ բլուրին դաղաթը ճեմելու պահուն, սիրուհին պիտի քաղէր այդ պտուղները եւ ծաղիկները եւ պիտի տանէր տուն, եւ այսպէսով

կրկին պիտի զգար անոր մողական մատներուն հպումը եւ տաք շունչին շոյանքը :

... Եթէ գոյութիւն ունեցած չըլլայիր, քեզ պիտի ստեղծէի երեւակայութեանս մէջ :

Վարդի կոկոն մըն էիր, նման միւս կոկոններուն, որոնք կ'անգիտանային իրենց գեղեցկութիւնը եւ բոյրը : Կրնայի դիւրաւ քաղել քեզ, քեզ բաժնել արմատէդ : Դուն պատրաստ էիր նետուելու որեւէ արկածախնդրութեան մէջ՝ խորտակելու համար միապաղաղ եւ յուսահատեցնող օրերու ձանձրոյթը :

Բայց ի՞նչ պիտի ըլլար արժանիքս : Պիտի նմանէի վաշխառուի մը, որ մեծարժէք եւ անտաշ ադամանդ կը գնէ մանուկէ մը, անոր կարծել տալով, որ այդ ադամանդը ապակիի կտոր մըն է :

Կինը չէ, որ կը փնտռէի էութեանդ մէջ, այլ՝ կնոջականութիւնը : Փոքրիկ լապտեր մըն էիր, որ կը լուսաւորէր տան մը անկիւնը. ուզեցի քեզ վերածել փարոսի մը, որ կը խորտակէ գիշերուան մղձաւանջը :

Անհուն գուրգուրանքով, համբերութեամբ եւ փափկութեամբ, բառերու կախարդանքով, ներդաշնակութեան ուժով եւ կշռոյթի հմայքով այդ համեստ կոկոնը վերածեցի սփանջելի վարդի մը, հոյատեւս եւ հպարտ ծաղիկի մը, գիտակից իր գեղեցկութեան, գոյնին եւ բոյրին :

Դուն ծաղիկներու բազմութեան մէջ կորսուած ծաղիկ, գլուխդ վեր առիր, հասակդ բարձրացուցիր եւ թագուհիի մը պէս իշխանութիւն հաստատեցիր շրջապատիդ վրայ : Նայնիսկ չէիր գիտեր անունդ կազմող վանկերուն իմաստը, ո՛վ Ռամոնա, ո՛վ աննման :

Դարձար այնքան գեղեցիկ, այնքան մաքուր, այնքան անարատ, որ չէի համարձակեր մատիս ծայրովն իսկ հպիլ քեզի, վախնալով, որ քու փափուկ ու թաւշային շափրակներդ կը թորմին, ո՛վ միսթիք վարդ :

Եւ պառկած հրապարակի սեւ ու անգութ ասփալթին վրայ՝ քեզ կը դիտեմ ունայնութեանս անդունդէն, ո՛վ Լուսնթագ, ո՛վ Արուսեակ :

Ըսէ՛, ո՛վ անմար աստղս, մանկական ձայնով ո՛վ հրեշտակս, ըսէ, որ պիտի չմոռնաս զիս, պիտի չմոռնաս երբեք, որ ես հիւսեցի գլուխդ զարդարող պսակը, որուն ֆարերուն գեղեցկագոյնները կարմիր են, ասփալթին վրայ թափած արեանս կարմիր կաթիլներուն պէս :

Եւ այսպէս գիշերը յաջորդելով ցերեկին եւ ցուրտը տաքին, երիտասարդին միտերը սկսան բաժնուիլ ոսկորներէն...

Մարդիկ որոշեցին անհետացնել այս անտէր մարմինը, որ ամբաստանազրի մը անաւորութեամբ կը խոցէր իրենց խիղճերը :

— Միայն կրակը կրնայ մաքրել այս աղտը, — ըսաւ ձայն մը :

— Ասիկա աղտ չէ, — ըսաւ ճերմակ մօրուքով ծերունի մը, — այս մարմինը մեր անօրինութիւններուն պարագան է : Չայն հրկիզեցէք յարգանքով եւ աղօթքով, ինչպէս ընտրեալ ողջակէզ մը :

Բոցերը սկսան լափել ցնցոտիի վերածուած իր հազուստները, բայց չկրցան փճացնել անուշահոտի այն սրուակը, զոր պիտի նուիրէր իր սեւաչեայ սիրուհին :

Ծովուն ջուները սկսան յուղուիլ եւ թեթեւ հով մը, փաթթուելով մու-

խի սիւնին շուրջ՝ սկսաւ դայն դալարել վիրաւոր օձի մը պէս: Հովը ատեն մը փչեց այն ուղղութեամբ, ուր կը բնակէր այն աղջիկը, որուն ճամբուն մեռած էր երիտասարդը: Սակայն անտեսանելի ձեռք մը փոխեց անոր ընթացքը, եւ հովիւի մը պէս, որ պահապան շուները կ'արձակէ ասորտոյնուող հօտին շուրջ, երիտասարդին մարմնէն բարձրացող մուխի սիւնը մղեց դէպի այն կողմը, ուր կը սպասէր անձկադին մայրը:

Եւ երբ բաց պատուհանէն ծուխը խուժեց ներս, մայրը ոտքի ելաւ, բայց չգոցեց պատուհանին փեղկը, որովհետեւ հասկցաւ, որ այդ ծուխին հետ զաւկին հողին ներս կը խուժէր: Ու ազահ ունդերով որբեւայրի մայրը ներշնչեց սեւ մշուշը եւ խաղաղութիւն մը իջաւ սրտին:

Այսպէսով պորտային խղուած կապը վերահաստատուած էր այս երկու քակներուն միջեւ, որոնք մէկ էին, դարձած էին երկու, եւ ահա կրկին կը միանային...

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԶԵՐՕ ՊՍԱԿ

Կէսգիշերային այս գերօ ժամուն,
 Հրածեշտ կ'ստնեմ ես գաղտագողի
 Ա՛լ հմայաթափ իմ անկողինէս
 Ես կ'ուղեւորուիմ գերօ հասցէիդ՝
 Յուշ, պատրանք, մորմոք կուտակած սրտիս...

Ինչեր, օ՛, ինչեր չեմ կրնար պատմել հիմա ես քեզի...

Կէսգիշերային այս գերօ ժամուն,
 Հոգիս մերկացած իր կապանքներէն,
 Փայփայանքներէն, երազանքներէն,
 Նաեւ մանկացած՝
 Նորէն կը բացուի քու հմայքներուդ:

Կէսգիշերային այս գերօ ժամուն,
 Ի՛նչ փոյթ հինը հուր,
 Թող որ գերոյէն սկսիմ կրկին,
 Զերոյէն համակ ոչնչութեամբը,
 Զերօ ջերմութեամբ,
 Զերօ սեղմումով,
 Զերօ համրոյրով,
 Ու հպարտանամ
 Մենք գերոներու նորանոր շարքով:

Կէսգիշերային այս գերօ ժամուն
 Պննուած գերօ զարդարանքներով՝
 Ես կու գամ ահա ցնծուհիի մը խենթ կառաղութեամբ,
 Որ ցնորքներս այրեմ կարօտով
 Եւ պայծառանամ
 Ու գեղեցկանամ
 գերօ պսակով...

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

Բ. Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն

ՈՐԴԻ ՄԱՐԴՈՅ

(ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՋՈՐՍ ԱՐԱՐ)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Բեթանիա: Տուն՝ մաքապետ Սիմոնի: Հնուքիւններ ու քոխ կահաւորում: Մագաղաթի ոլորներ: Մաքապետ Սիմոն բազմած է, ձեռքին՝ բաց մագաղաթ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ (բաց մագաղաթը դիտելէ դադրելով, իւրովի).— Եահվէն մեզի հրաշք է տուեր մեր Գիրքը... (Կը կարդայ հատ-հատ բառերով, հիացած) «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր»...

Կը մտնէ Կիւրեանացի: Մաքապետ Սիմոն հեղ մը կը նայի ներս մտնողին, ապա՝ մագաղաթին դառնալով՝ կը շարունակէ ընթերցումը:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— «Եւ հողի Աստուծոյ շրջէր... Հողի Աստուծոյ...»

ԿԻԻՐԵՆԱՅԻ.— Ի՞նչ «հողի, հողի» կը կրկնես տակաւին, տառապա՛ծ հողի:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Կիւրեանացի, աշխտրհի հրաշքն է մեր Թովրան... Տե՛ս, Աստուծոյ ճրագը՝ մարդոց խաւարին դիմաց:

ԿԻԻՐԵՆԱՅԻ.— Աստուած մեզի իր հողին է տուեր, լա՛ւ. մեզի լոյս է տուեր,

շա՛տ լաւ. սակայն հիմա պէտք է տայ եւ ուրիշ բան:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Երբ Աստուած այս Գիրքով մեզի ինքզինք է տուեր՝ ոչինչ կը պակսի մեզի: Տե՛ս, մեր ամբողջ հաւատքը առաջին այս երկու բառերուն մէջ է: (Կը կարդայ մատը դնելով ամէն մէկ բառին վրայ). «Սկիզբէն՝ Աստուած»: Մտածե՞ր ես բնաւ այս մասին: Սկիզբէն կայ Աստուած, եւ ուստի կայ ամէն բան...

ԿԻԻՐԵՆԱՅԻ.— Սկիզբէն՝ Աստուած. իսկ հիմա՞, մաքսապետ Սիմոն. հիմա, որ անցեր է սկիզբը, ո՞վ կայ հիմա: Կայ կայսրը, կայ սուրբը, Հռովմը... Հիմա դո՛ւն կարդայ՝ «Վախճան եւ Հռովմ»:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Ո՛չ. Հռովմ չէ անվախճան իշխողը: Ո՛չ. նայէ՛ սատողին. «Եւ հողի Աստուծոյ շրջէր»: Ահա աշխարհի վրայ շրջող հողին է, որ ստեղծեց ամէն բան: Այդ հողին շրջած է միշտ եւ ստեղծած ու իշխած: Ա՛ն է յաւիտենական իշխողը, Աստուծոյ հողին մարդոց մէջ...

ԿԻԻՐԵՆԱՅԻ.— Ես կը հաւատամ, թէ Հողին միայն այն ատեն շրջած է մեր մէջ, երբ մեր հայրերը պայթարած են ու նուաճած ու տիրած այս երկրին: Նախ՝ Մովսէսի օրով, ապա՛

Յիսուսի ու Գեղէսնի օրով, դարեր ետքը՝ Գաւիթի օրով, յետոյ՝ կործանումներէ ու գերութիւններէ ետք, մակարայեցոց օրով: Անոնցմէ զուրս՝ մենք չենք ունեցեր ո՛չ հոգի, ոչ ալ Աստուած:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ (սարսափած՝ ուսփի ցատկելով ու ձեռքը բռնելով).— Կիւրենացի՛...:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Մաքսապետ Սիմոն, դուն լաւ կ'ընէիր, որ այս սուղ մազաղաթները ծախէիր եւ նոյնքան թիւով սուր դնէիր: Այս աշխարհը՝ աշխարհն է սուրի թագաւորութեան:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Կը սխալիս, Կիւրենացի՛, կը խաբուիս: Մեր աղբը կեանք է առեր այս Գիրքի թագաւորութենէն: Աստուած մեզի իր շունչն է տուեր այս Գիրքով: Այս է մեր ազատութեան մեծ հեքիաթի մորենին, ցեղին անմար բոցը աշխարհի վրայ:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Ես ան դիտեմ, որ աշխարհի պատմութիւնը սուրով է գըրլած, եւ արիւնով: Ամէնէն զօրաւոր սուրը՝ ամէնէն մեծ պատմութիւնը...:

Կը մտնէ Մարթա: Ձեռքի ծաղկեփունջը կը դնէ սեղանին եւ մինչ միւսները դեռ կը շարունակեն իրենց վէճը՝ ինք կը գրադի սենեակը յարդարելով:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Աշխարհի պատմութիւնը գրողը Աստուծոյ անտես ձեռքն է:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Հապա երբ տառապանք կայ եւ ստրկութիւն, երբ կայ յափըշտակութիւն եւ մահ: (Գօտիին տակէն փայլուն սուր մը կը հանէ): Այս է ահա մեր գոյութեան ապաւէնը. Մի՛ զարհուրիր, մաքսապետ Սիմոն, դուն պէտք է ըլլաս մեր նոր Մատթիա քահանան՝ ապստամբութեան բոցավառ դրօշին առջեւ, ու

մենք՝ նոր Մակարէ եղբայրներ: Սկիզբ եւ Աստուած հին ժամանակներուն միացեր են Գիրքին մէջ. թող հիմա միանան նաեւ մեր սուրբ պայքարին մէջ: Թող յորդի արիւնը, թող դան միանան...:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Այո, պիտի գայ...:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Ո՞վ պիտի գայ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Ան՝ որ կու գայ լոյսով: (Գառնալով Մարթային): Աղջիկս, պատրաստութիւնները ըրացուցած ես:

ՄԱՐԹԱ (դէպի դուռը կ'երթայ. յանկարծ ետ կը նայի).— Հո՛ւ... Հրէչնե՛րը... (Կը վազէ դէպի միւս կողմի փախուստի դուռը):

Կը մտնէ Մարիոս սպան, Մարթայի փախչիլ փորձած դուռնէն, իսկ միւս դուռնէն՝ հոռովմէացի ուրիշ զինուոր մը: Մարթա ետ-ետ կ'երթայ գարհուրանֆով՝ մինչեւ հօրը մօտ: Կիւրենացի ձեռքի սուրը գաղտնօրէն մագաղաթի ոլորներուն մէջ կը պահէ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ (միւս զինուորին պէս՝ աջ բազուկով հոռովմէական բարեւի կեցած).— Պաշտօնք կայսեր:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Տուրքը՝ կայսեր, պաշտամունքը՝ Աստուծոյ: Բարով ըլլայ ձեր գալը:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ (բազմոցին նայելով անփոյթ, հեգնօրէն).— Սպասենք, լա՛ւ, ահա կը սպասենք: (Կիւրենացին ջղային-ջղային կը շրջի, գաղտնօրէն բռունցքը լարելով): Տեսնենք ինչ ունիս մեզի հրամցնելիք. ահա կը սպասենք: (Սարսուռ կ'անցնի ամէնուն դէմքէն): Լաւ, թող դինի ըլլայ ձեր տալիքը: Կը սպասենք: (Ոչ ոք նկատի կ'առնէ հրաման-փափաքը): Գինի՛ ըսի: Հարսանեկան ձեր կարմիր գինիէն:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Զուներնք:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Զուներ^օք. հա՛-հա՛-հա՛: Այո՛, չուներք, բնաւ բան չուներք: Տեսնենք ուրեմն, թէ ի՛նչ ուներք: (Կը շրջի, կը խուզարկէ սեմեակը): Ուներք աղուոր սփռոցներ. ուներք ծաղկամաններ. ուներք ալապասդր սափորներ, մէջը պարապ. ուներք մագաղաթէ դլաններ: Հա՛, ա՛յո ինչ է: (Կիւրեմացիին պահած սուրը քաշելով): Հա՛, դուք ուրեմն սուր ալ ուներք: Բայց դուք չէ՞ք գիտեր, որ Պիղաատոս արդիւած է ձեզի այս դեղեցիկ խաղալիքը: (Հաւաքած առարկաները յանձնելով զինւորին): Բռնէ՛: Տեսնենք դեռ ուրիշ ի՞նչ ուներն:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Մենք Աստուծմէ զատ ուրիշ ոչինչ ուներնք, սպայ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ա՛յ թէ ա՛յ. դուք Աստուծ^օ ալ ուներք, բայց յայանի չէ, թէ ո՞ւր է Ան. կայ անունը, չկայ ինք:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Մեր Աստուածը հողի է եւ ոչ թէ քար:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Այո. հողի. ձեր Աստուածը հողի է ու հով... Փի՛ւֆ, կը փչես ասանկ ափիդ մէջ եւ... ո՞ւր դնաց Ան: Իսկ մեր աստուածները ուներն անուն, բայց ուներն նաեւ մարմին, ժայռի պէս հաստատուն: Պոռա՛ ու փչէ, չեն ցնդիր հովի պէս, քար են, քար: Մեր աստուածները ծածուկ չեն, յայտնի են. մենք գիտենք, թէ ո՞ւր են անոնք եւ ինչ կը խօսին:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Կը խօսին ձեր սրտին ուղած բանը:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Հա՛, հա՛: Անոնք անշուշտ թէ պիտի խօսին մեր սրտին հաճելի բանը: Անոնք կ'ըսեն մեզի. «Ա՛յ այս սուրը եւ պա՛րկ այսպէս»: (Կը հարուածէ ու կը փշրէ կուծը): «Վերցո՛ւր այս փայլուն աշտանակը»: (Կ'առնէ զինուորին կու տայ): «Քա՛չէ՛ տար այս դեղեցիկ օրհորդը»: (Թեւեմ կը բռնէ ու կը քաշէ Մարթան):

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ (սպայի վրան վազելով, ազատելու համար աղջիկը).— Յանուն կեսարին:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ (ձեռքով ետ կրելով).— Կեսարի անունով միայն է՛ս կը խօսիմ:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Յափշտակիչներ: Դուք կառավարելո՞ւ եկած էք, թէ կողոպտելու:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Կողոպտելո՞ւ հա՛-հա՛: Կառավարելը կողոպտել է արդէն... Նոյնն է, նո՛յնը: Եկուր, Բիւթանիոյ աղջիկ, եկո՛ւր զինի հանէ մեզի:

Մարթա կ'ընդդիմանայ սպային կամքը կատարելու:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Սպայ, եթէ իմ բազուկներս չեն կրնար արդիւել, Աստուած կ'արդիւէ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ձե՛ր Աստուածը անշուշտ: Եւ ձեր Աստուածը մէկ հողի է, չէ՞: Իսկ մեր աստուածները բազում են. ու կը յաղթէ միշտ բազմութիւնը, այսպէս: (Աւելի իր բազուկներուն մէջ կ'առնէ Մարթան):

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— Պիտի յաղթէ ճշմարտութիւնը. եւ այս բոլորը ճշմարտութիւն են: Այս մէկը՝ (Յոյց տալով սուրը) սո՛ւր ճշմարտութիւն է... Այս մէկը՝ (Յոյց տալով աշտանակը) փայլուն ճշմարտութիւն է: Իսկ այս՝ (Իր թեւերուն մէջ առնելով Մարթան) ասիկա՛ է մեծ ճշմարտութիւնը: Քալէ՛, ո՞վ մեծ ու դեղեցիկ ճշմարտութիւն, դուն իմ առջեւս քալէ. ահա դուն յաղթեցիր ինձի...

Յանկարծ ներս կը մտնեն եւ սպային ու զինուորին դէմ առ դէմ կու գան Պետրոս, Թովմաս, Յովհաննէս: Սպան եւ զինուորը կանգ կ'առնեն, կը ձգեն Մարթան: Վրայ կը հասնի Բարթի

Յեսու, հանդարտօրէն, երկու
ձեռքերը պարզած, օրհնութիւն
տալու ձեռով: Սպան եւ զինուո-
րը կը շփոթին, կը կծկուին պա-
տին մօտ:

Կը մտնէ Մագդաղիմէ, ձեռքին՝
օծանելիքի շիշ մը: Անոր ետե-
ւէն կ'երեւայ Յուդան:

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Խաղաղութի՛ւն ընդ
ձեզ:*

ՄԱՔՍՍՊԵՏ ՍԻՄՈՆ (բազկատարած).—

*Օրհնեալ է ան, որ կու գայ Տիրոջ ա-
նունով: Քու դալուստդ, Բաբբի,
դալուստն է լոյսին ու փրկութեան...
ու վախճանը տառապանքի՛:*

Ամէնքը կը բազմին: Մարթա վե-
րըստին կը յարդարէ խանգար-
ւած սենեակը: Դուրս կ'ելլէ:
Սպան եւ զինուորը գարմանֆի
նշաններով կը հետեւին տեսա-
րանին:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— *Վախճան չկայ: Հիմա
կանգ առաւ, վաղը նորէն կը սկսի:
Ասիկա դեռ սկիզբն է երկունքին. չը-
կայ վախճան: Բաղմութեան ուժն է,
որ պիտի տիրէ:*

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Սկիզբ ու վախճան
արքայութիւնն է:*

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— *Ո՞ւր է այդ արքայու-
թիւնը, Բաբբի, ե՞րբ պիտի վերա-
հաստատուի անիկա, Դաւթի հօր
մեր արքայութիւնը:*

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Արդարներու արքա-
յութիւնը՝ արքայութիւնն է հոգիի՛:*

Աշակերտները գարմացումով ի-
րար կը դիտեն:

ԿԻՒՐԵՆԱՅԻ.— *Իսկ ի՞նչ է արքայութիւ-
նը Պիզատոսի, որ նոյնիսկ մեր Սուրբ
Տաճարին սպասները կը կողոպտէ՝
անոնց վաճառքի զուժարով իր պա-
լատը շինելու... Բաղմութեա՛ն ար-
քայութիւնը:*

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Մեզքն ալ ունի իր օր-
ւան արքայութիւնը:*

ԹՈՎՄԱՍ.— *Թափառակա՛նք:*

ՊԵՏՐՈՍ.— *Մեղաւոր կի՛նը նորէն:*

Ամէնքը կը խոսովին:

ՄԱԳԴԱՂԻՆԷ (Բաբբի Յեսուի ոտքին իյ-
նալով).— *Տէ՛ր իմ եւ Փրկի՛չ իմ:*

ԹՈՎՄԱՍ.— *Կին դու, քաջուէ՛:*

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— *Ա՛հ, կարծես կը ծփամ
նաւու մը վրայ, որ զիս հեռաւոր աշ-
խարհէ մը այս աշխարհն է բերեր:
Դարեր կը բաժնեմ իմ երէկս իմ այ-
սօրէս:*

ՊԵՏՐՈՍ.— *Կին դու, հեռացի՛ր:* (Կը մօ-
տենայ վերցնելու):

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Թող տուր, Պետրո՛ս,
տառապանքով լեցուն բաժակն է այս:*

ՄԱԳԴԱՂԻՆԷ (գլուխը վեր առնելով եւ
դիտելով Բաբբի Յեսուի դէմքը).—
*Ա՛հ, իր ձայնը քաղցր կ'ընէ ասոա-
պանքը իմ սրտիս: (Չկարեմալով դի-
տել դէմքը): Մշուշը պատած է աչ-
քերս: Դէմքն իր ազուրո՛ր՝ ոսկի մա-
ղերով պսակուած:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ (գայրակղած՝ կը մօտե-
նայ, կը դպի Մագդաղիմէի ու-
սին).— *Կի՛ն դու...*

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Թող, Յովհաննէ՛ս,
թող: Մեղքի սափորն է, որ կը պար-
պրէի, վասնզի արքայութիւնը փըր-
կութիւնն է մեղաւորներու:*

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— *Ահա՛ սիրտս, սափոր՝
խաւար մեղքերու. մաքրէ՛, սրբէ՛
զայն վերստին: Քո՛ւկդ ըրէ զիս, ո-
րովհետեւ մեղաւոր մըն եմ ես ալ:
(Չեռֆի շիշին գլուխը կը փշրէ մար-
մար սեղանի եզերքին, կը բարձրա-
ցընէ գայն օրհնութեամբ):*

ՅՈՒԴԱ.— *Կի՛ն, մեղք է, որ այս թան-
կազին իւզը փճացնես: Ասոր դնովը
դուն հարիւր աղքատի հաց կրնայիր
տալ:*

ՐԱԲԲԻ ՅԵՍՈՒ.— *Թող տուր. մի՛ խան-
դարեր դեղեցիկ այս պատարագը:*

Աղքատները միշտ դուք ձեզի հետ ունիք. այսօր, սակայն, օրն է փեսային. եւ շոայլութիւնն չէ՝ փեսայի ոտքին շիչ մը անուշ իւղը:

Մագդաղիմէ իւղը կը թափէ Րաբբի Յեսուի ոտքերուն եւ ծունկի կու գայ, կը սրբէ իր լայն լաչակով՝ մագերուն հետ խառնուած:

Տաւրի մուագ մը կը սկսի հեռւէն, հետզհետէ կը գորանայ: Գայթակղած ու բարկացած՝ Յուդա դէպի դուրս կը քալէ ու, յանկարծ, դէմ առ դէմ կու գայ Մարիոս սպայի հետ, գոր կը նանչնայ գինետան վերջիշումով: Կանգ կ'առնէ եւ նշաններով կը բարեկամանայ հետը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ (անուշաբոյր օդը շնչելով). — Կարծես անուշաբոյր ծովերու մէջ կը ծփայ տնակը:

ՐԱԲԻ ՅԵՍՈՒ (ոտքի կանգնելով եւ քիչ-քիչ հեռանալով). — Կի՛ն, քաւուած են մեղքերդ: Օծումը ըրիր՝ զոհէն առաջ: Եւ քու բարի արարքիդ յիշատակը պիտի տեւէ ալիքներով դարերու:

ՄԱԳԴԱՂԻՆԷ (տակաւին ծունկի վրայ, բայց դէմքը Րաբբի Յեսուին). — Լո՛յս, լո՛յս... Կը զղամ ահա նոր կեանք մը: Սիրտս թեթեւ է այնքա՛ն: Այս սրուակէն մեղքերս էին, որ թափեցան: Դուն մաքրեցիր զիս վերստին:

Թովմաս, Պետրոս եւ Յովհաննէս դուրս կ'ելլեն:

ՐԱԲԻ ՅԵՍՈՒ (դրան առջեւ կանգնած, ելլելու մօտ). — Խաղաղութեամբ գնա՛, կին:

ՄԱԳԴԱՂԻՆԷ (դեռ յափշտակութեան մէջ). — Բայց դուն լեցուր, դեռ լե-

ցո՛ւր անուշ նայուածքդ իմ խոով հողիւս մէջ ու թող աչքերս ընկղմին ուրախութեան արցունքներով:

Կը փլչի ինքն իր վրայ, կու լայ: Րաբբի Յեսու կ'անհետի: Կը դադրի նուագը:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ. — Տեսի՞ւք էր, ի՞նչ էր:

ՄԱԳԴԱՂԻՆԷ (ինքնամփոփուելով՝ կը փորձէ ոտքի կանգնիլ. չի կրնար). — Բայց ուժ չունին ծունկերս՝ վեր առնելու այս քայքայուած մարմինս:

Մաքսապետ Սիմոն եւ Կիրենացի օգնութեան կը փութան, Մագդաղիմէն տեղէն կը վերցնեն, ու թեւերէն անցած՝ գայն դուրս կը տանին: Յուդա գարմանով կը հետեւի անոնց: Մարիոս եւ զինուորը ապշած կը մնան: Զինուորը կը մշտէ Մարիոսը, որ յանկարծ ինքզինքին գալով՝ կը դիտէ շուրջը, ու տեսնելով, որ մարդ չէ մնացած հոն, ինքն ալ դուրս կը շտապէ: Անոր կը հետեւի զինուորը: Կը մտնեն Մարթա եւ Դաւիթ, որոնք հացով, պտուղներով ու պնակներով լեցուն կողովներ ունին իրենց հետ:

ՄԱՐԹԱ (պնակ ու պտուղ սեղանին դնելով). — Գիշերը կը սահի ահա. շատոնց վերադարձած պիտի ըլլային:

ԴԱՒԻԹ. — Յոգնած ու անօթի պիտի դաննան շուշտ: Ընթրիքին՝ Ան դրեթէ ոչինչ կերաւ:

ՄԱՐԹԱ (միշտ գրազուսի վրայ). — Կ'ըսես, թէ անսովոր խօսքե՞ր կ'ընէր:

ԴԱՒԻԹ. — Զէի հասկնար ըսածնոր: Յուդային խօսք մը ըրաւ, ձեռքովը պատատ մը տուաւ, բայց ան սրբանեղ՝ ելաւ-զնաց: Յետոյ՝ ինք ոտքի՛

կեցաւ, հացը փշրէց, բաշխեց ամէնուն. ըսաւ, թէ ատիկա իր մարմինն է: Յետոյ՝ գինիի ըմպեց, թէ՛ իր արիւնն է: Տարօրինակ խօսքեր կ'ընէր: «Սիրեցէք զիրար, ինչպէս ես ձեզ սիրեցի: Ես կ'երթամ՝ ձեզի աեղ կը պատրաստեմ», ըսաւ: «Դուք ճամբան չէք գիտեր», ըսաւ: «Ես եմ ճանապարհը»: «Ես ձեզի Հոգին պիտի զրկեմ», ըսաւ: Եւ այսպէս ուրիշ խօսքեր:

ՄԱՐԹԱ.— Արդէն միշտ այդպէս է: Երբեք որոշ չի խօսիր, բացի յանդիմանած ատենը: Անգամ մը զիս ալ յանդիմանեց: Երկու անգամ անունս տըլաւ. «Մարթա՛, Մարթա՛, դուն այս փոքր դործերով շատ կը յողնիս», ըսաւ:

ԴԱԻԻԹ.— Դուն ալ արդէն փոքր բաներով շատ կը զբաղիս: Տե՛ս, սա գիշերուան պարզ մրգասեղանին իսկ, որքան յողնեցողիքի զիս ալ: Սեղան շտկէ, պտուղ բեր, գինի բեր, գնա՛, եկո՛ւր: Ժամանակ չես տար՝ նստելու, հետը խօսելու: Արդէն Բեթանիոյ մէջ ամէն մարդ գիտէ, թէ Մարիամ քեզմէ աւելի կը սիրէ Զայն:

ՄԱՐԹԱ.— Սուտ են ծամեր անոնք: Դատարկ խօսք: Սիրելը երազելով ու երդելով չէ, այսպէս՝ ուտելիքի, հանդիստի առօրեայ ծառայութիւններով կը յայտնուի: Ես ու դուն եթէ չաշխատինք՝ ինչո՞վ պիտի կըշտանան այդ երազատեսները:

ԴԱԻԻԹ.— Ատիկա ես չեմ գիտեր, բայց երազողն ալ ես չեմ:

ՄԱՐԹԱ.— Այո, դուն ալ անոնց պէս մէկը կ'ըլլաս: Թող մեծ-մեծ երազեն: Վաղը իշխաններ պիտի ըլլան Թադաւորութեան մէջ: Մէկը՝ աջիդ նստիմ, ըսեր է, միւսը՝ ձախիդ:

ԴԱԻԻԹ.— Կը սխալիս: Ես կը ծառայեմ Անոր, որովհետեւ կը սիրեմ:

ՄԱՐԹԱ.— Լա՛ւ, լա՛ւ. լռէ հիմա ու դնա՛ գինիի կուժը բեր: (Դաւիթ կը մեկնի): Ա՛հ, ինչ հաճոյք պիտի ըլլայ պասեքի այս սուրբ նախերեկոյին՝ իմ ձեռքովս շինած անուշեղէններէն տալ Անոր: Թող լսեմ անգամ

մը եւս. «Մարթա՛, Մարթա՛, շատ կը յողնիս այս փոքր բաներով»: Իմ քոյրս կրնայ նստիլ Անոր քովը ու մտիկ ընել անուշ խօսքերուն. ան կրնայ նայիլ Անոր նայուածքի տաքութեան, Անոր ձայնին փափկութեան: Ու պահելու համար սրտիս բարախումը՝ կը շրջիմ շարունակ: (Վերացած՝ կը սկսի երգել):

Լճակին մէջ խոր ու պայծառ երկինք,
 Ինչպէս աստղեր կը դողդղան,
 Կը սարսռայ սիրտս այնպէս,
 Այլիքներու մէջ կուրծքիս: (Կը լռէ, յետոյ՝ հառաչելով): Կը սիրեմ ես, ու սէր է կեանքը: (Ապա ինքզինք դարձեալ աշխատանքի կու տայ, կը մեկնախօսէ): Սեղանս պատրաստ է ահա: Ես խենթի մը պէս եմ, ինչպէս ծառան, որ երբեմն արժանանալով իր տիրոջ ժպտին՝ կ'երջանկանայ: Ան կը հասկնայ զիս: Դիտէ իմ սիրտը. աչքերուս կը նայի եւ կ'ըսէ ինծի ժպտելով. «Մարթա՛, Մարթա՛, հանդիստ առ քիչ մը»: Բայց ինչո՞ւ այսքան կ'ուշանան... Ինչո՞ւ առանց լուր մը ձգելու դացեր են... Արդեօք հոս պիտի չվերադառնա՞ն: Ա՛հ, շուրջս պարապութիւն մը կը մեծնայ: (Կը սկսի վերստին երգել):

Աչքերուդ սէր կապոյտին մէջ,
 Երկինքէն ջահ մը պայծառ՝
 Կը փալփիլի հողւոյս վերեւ...

Դուրսէն ադմուկ: Մարթա կը վազէ դէպի դուռը: Յանկարծ դէմը կ'ելլէ Մարիոս, գլխաբաց եւ անպաշտօն հագուստով: Մարթա միշտ մը կ'ընկրկի դէպի անկիւնը:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Խաղաղութի՛ւն քեզի, Բեթանիոյ աղջիկ:

ՄԱՐԹԱ.— Հեռացի՛ր, շո՛ւտ հեռացիր այստեղէն:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Մի վրդովիր: Ես խա-

ղաղութեամբ եկեր եմ քեզի: (Աւելի մօտեցալով): Կը տեսնեմ, որ քեզի հաճելի չեկաւ իմ դալս... Ի դուր խանդարեցի երգդ, չէ՞... Բայց իմ ողջոյնիս չսլատասխանեցիր. խաղաղութի՛ւն քեզի:

ՄԱՐԹԱ.— Խաղաղութիւնը Աստուծոյ կամքն է:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ու ես կու գամ խաղաղութեամբ, ուրեմն եւ Աստուծոյ կամքով:

Մարթա կը հրէ գայն ու կը փորձէ դուրս վազել:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Բայց՝ ո՛չ: Խնդրեմ, հիւր մը պէտք չէ այս կերպ ընդունիս: Ես քու տունդ հիւր եմ եկեր:

ՄԱՐԹԱ.— Հիւրը տանտիրոջ կամքով կու գայ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Բարկացիր, քու բարկութիւնդ աւելի գեղեցիկ կ'ընէ քեզ:

ՄԱՐԹԱ (ինքզինք պաշտպանելու համար՝ առարկայ մը առնելով).— Չմօտենա՛ս, օտարական:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ (աւելի եւս մօտեցալով).— Տե՛ս, ես եկեր եմ առանց սուրի, սաղաւարտի. եկեր եմ իբրեւ պարզ մարդ... Ձուր է վախդ: (Մէջքէն կը քաշէ կիւրեմացիի սուրը եւ ցոյց կու տայ):

ՄԱՐԹԱ.— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ուրեմն դուն ճանչցար այս սուրը... Ի՞նչ կը նշանակէ այս, եթէ յանձնուի արդարութեան: Կը նշանակէ՛ մահ հօրդ, ու կործանում՝ ձեր տան: Բայս տե՛ս, որպէսզի վստահ ըլլաս անկեղծութեանս, այսպէս ահա: (Ոտքի տակ կ'առնէ սուրը, երկուքի կը ծալէ ու կը նետէ): Ա՛ռ, վերադարձուր զայն տիրոջ. այսպիսի սուրեր այսքան միայն կ'արժեն...

ՄԱՐԹԱ.— Աստուած իմ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Հիմա դուն ալ ձգէ քու զէնքդ մէկդի:

ՄԱՐԹԱ (նետելով պղինձէ աշտանակը).— Աստուած իմ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ես այդ սուրը ետ բերի միայն քեզի համար, քու սիրոյդ:

ՄԱՐԹԱ.— Ընէ այդ շնորհը՝ իմ հօրս համար. իմ շատ տառապած ձերունի հօրս համար:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ուրեմն դուն կը հասկընաս, թէ քու հօրդ կեանքը ատկէ կախում ունի, բայց չես ընդունիր զիս... Ես քու հիւրդ կ'ուզեմ ըլլալ, Մարթա՛, դարձուր ինծի նայուածքդ:

ՄԱՐԹԱ.— Ձուր են խօսքերդ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ուրեմն ոչի՞նչ՝ ըրած իմ շնորհիս փոխարէն:

ՄԱՐԹԱ.— Երախտապարտ եմ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Այո, կը հասկնամ. ես «օտարական» մըն եմ. ես՝ հեթանոս, դուք՝ ընտրեալ ժողովուրդ, թէեւ մեր ստրուկը... Բայց Մարթա՛...

ՄԱՐԹԱ.— Ձուր է:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Կը հասկնամ. քու փոքրիկ սիրտդ գրաւուած է արդէն... Այդ դալուկ դէմքը, չէ՞: Տո՛ւր ձեռքդ ու խօսէ:

ՄԱՐԹԱ (ձեռքը ցնցումով ետ քաշելով).— Անզգամ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ես անզգամ օտարական մըն եմ. քու սրտիդ ընտանին՝ Ան է, ա՛խ, տատանող այդ վտիտ շուքը կը մթնցնէ իմ ճամբաս: Բայց՝ լա՛ւ, կը հաշուակցինք Անոր հետն ալ:

ՄԱՐԹԱ.— Աստուած միայն գիտէ մարդոց հաշիւները:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Այո՛, ոչ ոք գիտէ, թէ վաղը ի՞նչ կընայ պատահիլ, բայց կարեւորը այն է, ինչ որ կը պատահի: Կեանքը դիպուած է: Դիպուած մըն էր, որ քեզ ճանչցուց ինծի. եւ ո՛վ գիտէ, թէ ուրիշ ի՞նչ դիպուածներ պիտի պատահին: Բայց՝ իրա՛ւ, ո՞վ է Ան, որ դալուկ դէմքէն ճառագայթ կը հոսէր... Կարծես հիմա իսկ կեցած է դիմացս՝ Ո՞վ էր Ան, Մարթա՛...

ՄԱՐԹԻԱ. — Դուն յամ յիտի բլլաս Անոր
անունը :

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ. — Էսա՞ծ , այո . ո՛չ ,
բան չեմ յամ . տեսած եմ ուրիշ ան-
դամ մը եւս , քանի մը օր առաջ . . .
Քնուոն թափօր մըն էր . տուն՝ արժա-
ւենի ձիգնբու . դարդի պէս սիրո-
ւած վերարկուները մոլեղնած մար-
դոց . ու ցնծութեան աղաղակ . «Ով-
սաննա՛ , ովսաննա՛ » : Անոնք կ'անց-
նէին արեւեկայներու հեղեղի պէս ,
եւ ինք՝ բոյորին մէջտեղ , լուս՝ շու-
քէ իշխանի մը պէս :

Ներս կը խուծէ Դաւիթ պատա-
նին . ձեռքին կուծ մը գինի :

ԴԱՒԻԹ. — Մարթա՛ , Մարթա՛ , եկուր
գիտէ : (Օտարականը տեսնելով՝ ետ-
եւ կ'ընկրկի) :

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ. — Ա՛ , յա բերիք ասի-
կա . տո՛ւր տեսնեմ : (կուծը կ'առնէ) :
Ասիկա իմ ապստրած գինին է , չէ՞ ,
դեռ նոր կը հասնի :

Կը տանի սեղան , կը լեցնէ բա-
ժակը , կը խմէ : Դաւիթ ու Մար-
թա կը վազեն դէպի պատուհան՝
դուրսը դիտելու : Մարիոս չի
հետաքրքրուիր անոնցմով . կը
խմէ , կ'ուտէ :

(Շար . 2)

ԴԱՒԻԹ. — Կը տեսնե՞ս այդ լոյսերը :
Անոնց դագած կողմն է :

ՄԱՐԹԻԱ. — Այո՛ , որոշ կը տեսնեմ : Բազ-
մաթիւ են ջրահերը : Գեթսեմանիի
կողմն է : Ի՛նչ կայ արդեօք :

ԴԱՒԻԹ. — Մտիկ բրէ , ձայներ կան .
հսկայ ամբոխ մը բլլալու է :

ՄԱՐԹԻԱ. — Ա՛ , զրատ դող եկաւ . . . Մա-
րիամը ո՛ւր է արդեօք . . . Վերարկուս
տանեմ ու մենք այ հոն երթանք :

Մարթա ու Դաւիթ կը մեկնին :

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ. (առանց նկատի առնելու ,
բէ միտները մեկնած են՝ կը շարու-
նակէ խմել եւ ուտել պտուղներէն) . . .
Բայց սղուոր գինի է քու այս բե-
րածդ . պտուղներն այ՛ հիանալի :
Բայց լա չէ այսպէս առանձին վա-
յելել : Հետդ մէկ բաժակ իսկ չպար-
պեցինք : (Բաժակ մը գինի լեցնելով
ու ետին դառնալով) : Ա՛ս , աս մէկն
այ քու հետդ խմենք . . . տե՛ս , ի՛նչ
կարճիք է : (Գաւարով ետին կը դառ-
նայ ու տեսնելով , որ սրահը պարապ
է) : Պա՛հ . . . Ո՛ւր են : (Արձանագրած
կը մնայ , երկու ձեռքերուն մէջ՝
գաւարները) :

(Վերջ երկրորդ արարի)

ԲԻԻՉԱՆԴ ԵՂՐԱՅԵԱՆ

Յ. Ն Ա Գ Ո Ի Լ Ե Ա Ն

Ե Ր Ա Ջ Մ Ը

Թռչուններու երամբ եկաւ
 թառեցաւ անտառներու եզրին
 եւ առաւօտուն
 բանաստեղծի մը պատուհանին ինձ
 բոյն դրաւ
 անցաւ

ձիւնամբրիկի կերպարանքին մէջ
 մահը տեսայ ես
 ահռելի թափով դէպի կեանքն ուղղուած

եւ սէրը տեսայ
 փշուր-փշուր սէր
 մարմիններուն մէջ մեծ անապատին

մեռածներ տեսայ
 թաղուած ու մոռցուած
 թաղուած, չմեռած

Եկեղեցիներ

 ծղօտէ զանգակատունով
 ոչխարներով լեցուն
 մոլորած ու գոյնզգոյն
 ջրհորներու կողքին ու ջաղացքներէն հեռու
 շուքին մէջ երազի
 եղէգնեայ ցանկապատով
 ու բանալիներ
 ուկի

հանդիպեցայ մահուան
 այլազանութեամբ պննուած
 կանգնած էր իբրեւ ֆանդակ ֆառուղիներուն եւ փողոցներուն մէջ
 ձգէ ողջագուրուիմ ֆեզի հետ
 ֆաղաֆ

հասած եմ ֆեզի տիեզերքէն կախուած ճամբաներու մէջէն
 եւ անապատէն

ամէն ֆայլափոխիս
 մահն արդէն ձիւնամբրիկէն անցած հասած է ֆաղաֆ
 կանգ առ փղոսկրեայ կեանք փոշիներուն մէջ մեծ անապատին
 մահը կը դիտէ ֆեզ փլատակ վանքին ծղօտէ գլխարկին տակէն
 սէրը չփնտռեցի այդ օրէն ասդին
 ջրհորներուն մէջ

Բ Ա Գ Ի Ն

Թռչուններու երամը եկաւ
 քառեցաւ անտառներու եզրին
 եւ առաւօտուն բանաստեղծի մը պատուհանին քով
 բոյն դրաւ
 անցաւ

չնշարուող գեղեցկութիւններ տեսայ
 ցուցափեղկերուն մէջ
 հետապնդուելով ձիւնամրրիկէն խոյս տուած մահուան խօլարշաւ քայլէն
 եւ մեռնող խաղաղութեան մէջ աշնան երեկոյին
 կակաչներ փայլեցան
 կեանքն յիշեցնելու
 գիս մոլորեցնելու

ցնորփի ուժէն դրդուած հասայ փլատակ վանփի լոին խորանին
 երկնաձիգ շէնֆերու երկայնփին
 խորհրդաւոր խարոյկի մը շուրջ աղջիկներ տեսայ
 ծծկալներն հանած իրար ողջագուրող

սխալներ գործուեցան իւրաքանչիւր մարդու պատմութեան
 իւրաքանչիւր քայլին մէջ
 կրնաս երգել խնդալ
 ուրախանալ
 ըսին
 եւ գինովնալ նոյնիսկ
 սպիտակ ներկուած խորհուրդներուն մէջ երեկոյին
 եւ կրնաս պարծենալ
 հպարտանալ
 նոյնիսկ


մենք յաղթեցինք
 ըսին
 եւ յաղթութեան կիրքով
 ցնորփի մշուշին մէջ
 սպիտակ ներկեցինք
 մահը սէրը կիրքը
 ճամբաները նոյնիսկ

սպիտակ ներկեցինք արեւն ու անապատը
 եւ հերոսները
 հին

որ սպիտակի վրայ այլեւս չերեւին

երբ արթնցայ առտուն
 ծովուն ձայնը չկար
 սպիտակ ներկուած տարիները տեսայ
 երբ կը ճախրէի երկինքներուն մէջ
 քռչուն դարձած
 արդէն

Մտերմական շարժը՝
Գ. ՅԱՐԱԼՅԱՆԻ



Պօսելով մեր յուզագրութեան արժէքաւոր էջերի մասին, նրանք, միաժամանակ, բերեցին օրինակներ, որոնք վկայում են մեր որոշ հեղինակների եւ խմբագրութիւնների ցաւալի վրիպումների մասին:

Ափսոսանքով նշուեց, մասնաւորապէս, որ վաստակաշատ գրականագէտ Ռուբէն Զարեանը, որի յուզագրութիւնների առաջին հատորի շատ էջեր ջերմ ընդունելութիւն գտան ընթերցողների շրջանակում, «Սովետական գրականութիւն» ամսագրի այս տարուայ վեցերորդ համարում Ն. Զարեանի եւ Գ. Սեւակի մասին դրած յուշերում նահանջել է յուզագրութեան իր իսկ սկզբունքներից եւ դասականների շարքն անցած մեր զրոգներին ներկայացնելիս երբեմն յենուել է նրանց չընորոշող, պատահական գրուագների վրայ, կամայական մեկնաբանութիւն տալով դրանց: Քարտուղարութիւնը յոյս յայտնեց, որ «Յուշապատում»ի երկրորդ հատորում հեղինակը կը կարողանայ խուսափել թերութիւններից եւ ինչպէս իր յուշերի լաւագոյն էջերում, կը լրացնի մեր մեծերի մարդկային եւ գրական դիմանկարները «ճշմարտացի եւ նոր երանգներով»:

ՌՌԻԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ

(«Գրական թերթ», 1975, թիւ 32)

Համլե՛տ, Մակրե՛թ եւ Օթելլո,
Եվ Ադամյա՛ն, եւ Սիրանո՛ւյշ...
Ինչքա՛ն լավ են բեմի սիրով
Անցնում օրերն անո՛ւշ-անո՛ւշ:
Ահա եկավ վաթսուն տարին՝
Իր հետ հազար վեր՛ ու վերհուշ:
Համբուրեցին հոբելյարին
Էլ ով ասես՝ անո՛ւշ-անո՛ւշ:
Լուրք տարե՛ք Շեքսպիրին,
Եվ ասացե՛ք ո՛վ մշտահուշ,
Քեզ է երգում երկրում իր հին
Ռուբեն Զարյանն անո՛ւշ-անո՛ւշ:
Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕԹԵԼԼՈՅԻ ԹԱԾԿԻՆԱԿԸ...

Վաթսունական թուականներէն սկսած ու վերջին վեց-եօթը տարիներուն հայրենի մամուլին մէջ մեծ թափ ստացաւ յուզագրութիւնը, որուն մէջ անսլայման առանձին տեղ մը կը գրաւեն հանրածանօթ թատերագէտ եւ մշակութային անուանի գործիչ Ռուբէն Զարեանի էջերը: Շարքին առաջին հատորը՝ «Յուշապատում» անունին տակ լոյս տեսաւ արդէն 1975ին եւ անոր նուիրուած խանդավառ գրախօսականները կը վկայեն, որ մեծ ընդունելութեան արժանացած է անիկա բոլոր խաւի ընթերցողներուն մօտ:

Մենք գեռ առիթ չունեցանք տեսնելու յիշեալ հատորը, բայց մամուլին մէջ կ'որ

դացած ենք անոր էջերուն առնուած կարգ մը կտորները եւ, աւելորդ է ըսել՝ հետաքրքրութեամբ հետեւած ենք յուշագրողին, որ դիտելու, նկարագրելու, խօսեցնելու, խորասուզուելու ու ընդհանրացնելու իր արժանիքներով այս մարդին մէջ եւս կը սլարտագրէ ինքզինք:

Իր մեծանուն ուսուցիչները, զործակիցներն ու բարեկամները դիմանկարելով չբաւարարուեցաւ Ռուբէն Զարեան, այլ «Յուշապատում»ին հրատարակութենէն ետք շարունակեց նոյն ոճով ներկայացնել ասորիքով իրմէ քիչ մը վեր ու աւելի երիտասարդ դէմքերը, հաւանաբար նոր հատորի մը ծրագրով:

Բայց երկրորդ քայլը հազիւ առած՝ Հայաստանի զրոզներու միութեան քարտուղարութիւնը հարկ համարեց մասնաւոր նիստ մը կայացնել եւ քննարկման առանձին նիւթ դարձնել յուշագրութիւնն ու յարակից հարցեր: «Գրական քերթ»ի 8 Օղոստոս 1975 թուակիր համարին մէջ առ այդ տպուած թղթակցութենէն կ'իմանանք, որ նիստին մասնակցած զրոզները՝ «Խօսելով յուշագրութեան արժէքաւոր էջերի մասին, միաժամանակ, բերեցին օրինակներ, որոնք վկայում են մեր որոշ հեղինակների եւ խմբագրութիւնների ցաւալի վրիպումները»:

Ընդհանուրէն մասնաւորին անցնելով՝ զրոզները կը դառնան Ռուբէն Զարեանին եւ կ'ընեն յանդիմանալից այն դիտողութիւնները, որոնք արտադրուած են քովի նկարի կողքին:

Պարոյր Սեւակի մասին զրուածը, ի հարկէ, բնաւ պատճառ չի տար ըսելու, որ Ռուբէն Զարեան պատահական դրուազներ պատմած է ու կամայական մեկնաբանութիւններ թոյլ տուած: Գրոզներու կատարած դիտողութիւնը առանց այլեւայլի կը վերաբերի Նայիրի Զարեանին նուիրուած զրութեան, որուն մէջ գերակշիռ բաժինը դրական տուեալներուն յատկացուած ըլլալով հանդերձ, չեն մոռցուած ենթակային բնաւորութեան բացասական գիծերը, որոնցմէ գերծ չէր ստալինեան բարքերու հաստատման եռանդուն մասնակից Նայիրի Զարեան: Երեւի այդ մասին եղած ակնտրիկութիւնները դիւր չեն եկած զրոզներու միութեան քարտուղարութեան ղեկավարութիւնը ղեկավարող մարդոց, որոնք յատուկ նիստ դումարել տուած են ու նիստին մէջ նստեցնելով «ՀԿԿ Կեմտկումի գաղափարական բաժնի վարիչի տեղակալ Մ. Խաչատրեանը»՝ ուղղած են իրենց սուրիները բազմավաստակ մտաւորականին դէմ, որ, կը կարծենք, ելոյթ ունեցողներէն եւ ոչ մէկէն սորվելիք բան ունի:

Արտադրենք Նայիրի Զարեանին նուիրուած բաժինէն քանի մը պարբերութիւններ, որոնք անպայման կ'իյնան «նրան չբնորոշող» մեղադրանքին տակ եւ ենթարկուած են «կամայական մեկնաբանութեան»:



«Վէճը բորբոքուեց: Մեղմ եմ ասում՝ ժողովը խառնուեց, փոթորկուեց:

«Գրիգորեանից բացի մշակուում էին եւ այն երիտասարդները, որոնց այդ ժամանակ պաշտօններ էին վստահուել: Ես էլ, ի հարկէ, այդ թւում: Եւ պայքարն այնքան սրուեց, որ մենք ներկայացուեցինք որպէս ազգայնամուտներ: Քաղաքական այդպիսի պիտակաւորումներն այն տարիներին սովորական բան էին եւ յի վտանգաւոր հետեւանգներով:

«Նայիրին ու իր կողմնակիցները պարտութիւն կրեցին: Հրաչեայ Քոչարը, որ նրա կողմակիցն էր, խելօք եւ լաւ հոետոր, չկարողացաւ նոյնիսկ աւարտել խօսքը:

«Ես էլ այդ օրը խօսեցի: Եւ, ի հարկէ, իմ ելոյթն ուղղուած էր ամէնից առաջ Նայիրու դէմ: Երեւի, ոչ թէ երեւի, այլ անպայման մեծ դեր խաղաց խոցուած ինքնասիրութիւնս, քանի որ Նայիրին ազգայնամուտներին թուելիս իմ անունն էլ էր տուել:

«Եւ այսպէս, երկու Զարեանները, մէկը՝ Նայիրի, միւսը՝ Ռուբէն, առաջինը երկար ճանապարհ անցած, միւսը նոր միայն գրականութեան ճանապարհը ոտք դրած, հակառակորդներ դարձան»:



«1939ին դիմում տուի կուսակցութեան մէջ ընդունուելու: Այդ նոյն օրը քննարկուելու էր նաեւ էդուարդ Թովչեանի եւ Գարեգին Բեսի ընդունելութեան հարցը:

«Մի քանի բոպէ տեւեց թէ՛ մէկի, թէ՛ միւսի ընդունելութեան հարցը: Մի խօսքով՝ կարն կապեցին, երկուսն էլ անցան: Հերթը հասաւ ինձ: Եւ իմ հարցի քննութիւնը տեւեց երկու ժամից աւելի: Նախ՝ ելոյթ ունեցաւ Նայիրին: Յետոյ՝ նրա կողմնակիցները: Դէմ էին եւ տալիս էին քաղաքական ամենախիստ բնորոշումներ: Ունէի պաշտպաններ եւս: Նայիրին երեք անգամ ելոյթ ունեցաւ: Նպատակը պարզ էր՝ տապալել: Բանը հասաւ նրան, որ ժողովին ներկայ անկուսակցական Ստեփան Զօրեանը միջամտելու փորձ արեց, կամենալով կըրֆերը խաղաղեցնել: Բայց չյաջողուեց: Նայիրու կողմնակիցներից Հրաչեայ Քոչարը, որը

չէր արտայայտուել, տեսնելով իր աւագ ընկերոջ ծայրայեղ կրֆոտութիւնը, ճայն խնդրեց եւ, տարօրինակ բան, իր պաշտպանութեան տակ առաւ ինձ: Շատ հանգիստ, շատ խաղաղ խօսեց այն մասին, որ ես, իհարկէ, սխալներ քոյլ տուել եմ, բայց հենց դրա համար էլ պէտք է ընդունել կուսակցութեան մէջ, որպէսզի կարելի լինի ազդել, դաստիարակել:

«Քուէարկութեան ժամանակ Նայիրին ու էլի մի քանիսը դէմ եղան: Քոչարը չմիացաւ նրանց: Ու ես անցայ, բայց, ենթարկուելով այնպիսի յարձակման, որ մի ուրիշին, բէկուզ դա իմ հակառակորդը լինի, չէի կամենայ»:



«Զարեանցի դէմ մղուող պայքարում նա կենտրոնն էր գրական այն խմբակցութեան, որն ազգային մշակոյթի անցեալ արժեքների ժխտման դիրքն էր բռնել: Ես չեմ յիշում, որ Նայիրին այդ ոգով յօդուած գրած լինի: Զգրելով հանդերձ՝ նա համագործակցութեան մէջ էր գրական այն դէմքերի հետ, որոնք, օրինակ, Այգեկցու առակների հրատարակութիւնը դիտում էին իբրեւ Զարեանցի՝ գլխաւորած խմբի ազգայնամուլական միտումները հաստատող փաստ»:

Ասոնք վէպի մը էջերէն անջատուած առղեր չեն, ապրուած վէրքեր են եւ մնայուն յաճախանքներ, որոնք «մի ուրիշին, բէկուզ դա իմ հակառակորդը լինի, չէի կամենայ»:

Հանրային դործօն մը յուշադրութեամբ դիմանկարելու գործին առաջին դրգապատճառը, ճիշդ է, անհանդստացնող համարումն է, բայց ճիշդ է նաեւ արդեօք, որ յուշագրողը պէտք է բոլորովին անտես առնէ ենթակային մարդկային թերութիւնները եւ իբրեւ սուրբ ներկայացնէ դայն: Պայմանները որքան ալ ստիպողական ըլլան, իր դրիչը քիչ-շատ յարգող մարդ մը չի կրնար նման կողմնակալութիւններով էջ ստորագրել, ու Ռուբէն Զարեանի դըլխաւոր արժանիքը կը կայանայ իր հերոսները բոլոր կողմերով ներկայացնելու պարկէշտութեան մէջ, ինչպէս նկատած է Հրանա Թամրաղեան, հետեւեալ զնահատանքին մէջ, թէ Զարեան

«Ներքին լարուածութեամբ հետեւել է մեծ մարդկանց բնաւորութեան դրսեւորումներին, մտքերի ընթացքին, ուժին ու թուլութիւններին, լոյսին ու ստուերին, գրել է սիրով, բայց զգաստ, գրել է յարգամեով, անգամ երկիւղածութեամբ, բայց միշտ մնացել է արդարամիտ մարդկանց եւ իրողութիւնների առջեւ, ամէն դէպքում ձգտելով ներքին նըլմարտութեան»:

Յուշագրողին այս յատկանիշները ընդգծելի են նաեւ Նայիրի Զարեանի նուիրուած բաժնին մէջ եւ բնաւ մեղքը իրը չէ, եթէ վերջինին թուլութեանց ու ստուերներուն ուրուադիծը քիչ մը աւելի թանձր է եւ ոչ հաճոյ պարտիային ու պարտագրեալ խօսնակներուն:

Գրողներ կան, որոնց ճակատագիրէն անբաժան եղած է դառնութիւնը եւ Ռուբէն Զարեան եղաւ մէկը անոնցմէ, որոնք դառնութեան վարժուելով՝ չափ դառնութիւն ճաշակեցին իրենց դործունէութեան ընթացքին:

37ին՝ մահացու ամբաստանութիւններով չարչարեցին զինք:

39ին՝ կուսակցութեան մէջ անցնելու ատեն, աւելի բախտաւոր չեղաւ:

43ին՝ ուրիշ մղձաւանջ, իր բառերով՝ «այդ նոյն օրը, երեկոյեան ժամը ուրիշ գրողների միութեան կուսակցական փակ ժողովում քննուելու էր հարցը «Սովետական գրականութիւն» ամսագրի, այսինքն՝ իմ, որը գաղափարական լուրջ սխալներ էր քոյլ տուել»:

«Կուսակցական փակ ժողովում», եւ այն ալ՝ 1943ին:

1975ին՝ գառնութեան նոր բաժակ, յուշագրական էջերուն առիթով:

Տարբեր չէ եղած բախտը նաեւ յօդուածագիր Ռուբէն Զարեանի:

Ահա յատկանշական պարագայ մը.

«Գարուն» ամսագիրը, «Գրական թերթ»ի 40ամեակին առիթով, այս վերջինին հին ու նոր խմբագիրներուն ուղղած էր հարցումներ, որոնցմէ մէկուն պատասխանը խնդրոյ առարկայ թերթին յիսունական թուականներու խմբագիր Վազգէն Մնացականեանի ստորագրած էջն էր, ուր Ռուբէն Զարեանի առնչութեամբ արձանագրուած է բնորոշ մանրամասնութիւն մը: Անդրադառնալով գրականութեան ոգիին անյարիր այն օրերու բարեբունէ՝ Վազգէն Մնացականեան կը գրէ.

«Այդ կապակցութեամբ ես յիշատակեցի Ռուբէն Զարեանի փայլուն յօդուածը Օթելլոյի թաշկինակի մասին. փայլուն ամէն ինչով, տրամաբանութեամբ, ոնով եւ ներշնչականութեամբ: Եւ ահա այդ իմ ցանկութիւնից արուեց հետեւեալ եզրակացութիւնը. «Ընկեր Ռուբէն Զարեան, ձեր եւ մեր իրականութեան միջեւ ընկած է Օթելլոյի թաշկինակը: Ի՞նչ է չէք կարողանում յաղթահարել այդ պատկէշը եւ ցատկել այս կողմը»: Այսօր ծիծաղելի է

բուսում հոետորական այդ անիրաւացիութիւնը, բայց այն ժամանակ տպաւորութիւն էր թողնում, երբեմն նոյնիսկ տխուր եւ ծանր»:

Ոչ անշուշտ տխուր եւ ծանր հետեւանքներով, այնուամենայնիւ հետորական անիրաւացիութիւնը ներկայ օրերուն բոլորովին կորսնցուցած չէ իր ուժը, որուն դործադիր մարմիններուն եւ Ռուբէն Զարեանի միջեւ կը թուի, թէ Օթելլոյի թաշկինակը դեռ ինկած կը մնայ...

Մենք եւս տարակարծութիւն մը ունինք Ռուբէն Զարեանի հետ, բայց ոչ թէ թաշկինակային, այլ՝ թուարանական, 1972ին «Սովետական գրականութիւն» ամսագրին մէջ Սիմոն Յակոբեանի մասին հրատարակութեան տուած իր յուշին եղբարիակիչ տողերուն կապակցութեամբ:

«Եթէ ապրէր՝ հիմա կը լինէր 93 տարեկան, շրջապատուած երախտագէտ աշակերտներով»:

Սիմոն Յակոբեանի պէս բազմակարծիք մարդ մը կրնա՞ր իրապէս երախտագէտ աշակերտներով շրջապատուիլ թէ ոչ՝ դժուար է պնդել, անոր կենսագրութեան մէջ թոյլ տըրւած է սակայն «ակնբախ» սխալ մը: Ըստ երեւոյթին, անուանի յուշագրողը Սիմոն Յակոբեանի պարագային նկատի առած է միայն չոր տուեալները ու բոլորովին անտեսած է իր հերոսին տարիքային հարցին խառնուած հոգեբանական երեսը, որ կազմուեցաւ «հանճարափայլին» փայլիլուն օրերուն:

Հետեւեալ փաստով .

1935 Դեկտեմբերի վերջին օրերուն, Աղասի Խանջեանի դիւսաւորութեամբ՝ Հայաստանի Ժողովուրդին զանազան խաւերէն պատուիրակութիւն մը զնաց Մոսկուա եւ Կրեմլի մէջ ընդունուեցաւ Ստալինի եւ իր աւագանիին կողմէ: Շարք մը անց, 7 Յունուարին, Համամիութենական Կենտրոնական Կոմիտէի Հայաստանի պատուիրակութեան անդամները վարձատրել չքանչաններով: «Պատույ նշան»ի կ'արժանանայ նաեւ պատուիրակութեան մաս կազմող Երեւանի համալսարանի փրոֆեսէօրներէն Սիմոն Յակոբեան, որ նոյն առիթով ճառ մը կը խօսի եւ կ'ըսէ ի միջի այլոց:

«Ես Եւրոպայի շատ քաղաքներում եմ եղել, տեսել եմ շատ հռչակաւոր մարդկանց եւ գիտնականների: Իսկ Դեկտեմբեր 30ին ես տեսայ աշխարհի ամենամեծ մարդուն: Ես 55 տարեկան եմ: Բայց մեծ Ստալինին հանդիպելուց յետոյ զգում եմ, որ մի քան տարով երիտասարդացայ»:

Կենսագրական այս յո՛րժ կարեւոր տուեալը վրիպած է Ռուբէն Զարեանի ուշադրութենէն, որով՝ սխալ ստացուած է իր դումարումը: Ուրիշ խօսքով՝ «աշխարհի ամենամեծ մարդուն» հանդիպած Սիմոն Յակոբեան փրոֆեսէօրը եթէ մինչեւ 1972 ապրէր՝ պիտի ըլլար ո՛չ թէ 93 տարեկան, այլ՝ 73...

Սիմոն Յակոբեանի կենսագրութեան անդրադարձող յօդուածադիրները անոր հետ կը քալեն մինչեւ 1938 եւ այնուհետեւ կը նշէ անոր մահուան թուականը՝ 1942, եւ կը լռեն, այսինքն՝ ոչինչ կ'ըսեն «յայտնի անյայտութեան» մէջ անոր քաջքաճ վերջին չորս տարիներուն մասին, թերեւս անոր համար, որ իրենց եւս կը պակսի ցրտաչունչ հեռուններուն ապրած ենթակային վախճանական վերիվայրումներուն պատմութիւնը:

Ապրեցաւ, ապրիլ ձեւացուց, դաւեց, վերակառուցուեցաւ, յարմարեցաւ, յարմար չգատուեցաւ, դատուեցաւ, վերջացաւ:

Վերջացաւ...

Սիմոն Յակոբեան:

Դասախօսութիւններ տուած է Սիմոն Յակոբեան, թերթ խմբագրած է, կարծիքներ յայտնած, գիրք հրատարակած՝ Դուրեանի, Թումանեանի, Տէրեանի, Զարենցի եւ այլոց մասին, նաեւ օտար նշանաւոր դէմքերու մասին, բայց հակառակ կարգ մը մարդոց (Եղիշէ Պետրոսեան) ճիղերուն, ոչ ոք սիրտ ըրած է բանալ անոնցմէ մէկը կամ միւսը, որովհետեւ զուրկ են ենթակառուցէն էրաւութեան երաշխաւորութենէն, համոզումներէն, ապրումներէն, դործն են անտարում, անհամոզում անձի մը, յեղեղուկի մը, որ երէկուան ըսածին ճիշդ հակառակը լինելու տխուր համբաւով մը անցաւ կեանքէն:

Երեւի մահը իրաւներուն իրաւութիւնը կ'ընդգծէ միայն եւ բնաւ ի զօրու չէ ողնայար հայթայթել անողնայար հոգեղէններուն, որոնց ներկայացուցչական դժբախտ դէմքերէն էր ստալինատեսի Սիմոն Յակոբեան, մարդկայինէն ա՛նէն՝ Էլիւարային գրծերով ծնեալ յարապիտի մը, որուն մասին հետագայ էջերուն կը ներկայացնենք քսնի մը բնորոշ վկայութիւններ:

ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ

ԵՒ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԾԻՔՈՎ

ՄԱՐԴԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Յակորեանը մի անգամ, իրեն յատուկ քրթմընջիւնով ու բառերը մի քիչ լամբորելով, պատմեց իր լսարանում պատահած այսպիսի մի դէպք. «Բալղակ էի անցկացնում, — ասաց, — այս վերջին շաբաթներս: Մի ուսանող ունեմ երկրորդ քուրսում՝ Մնացական անունով, Ախալքալաքի կողմերից: Շուտ բռնկուող տղայ է, մէկ էլ անսար՝ բան չեղած տեղը երեսը դառաւ կարմիր ճակնդեղ: Դասախօսութիւնս որ վերջացրի, վերկացաւ, թէ՛ «Ընկեր Յակորեան, մի հարց աս՞մ ձեզ»: Ասի՝ «տուր, որդի՛ս»: «Ընկեր Յակորեան, ասում է, ախր, առաջին օրը, Բալղակը որ նոր սկսեցիք, դուք էսպէս բնութագրեցիք նրան»: Կարգաց, տեսնեմ ճիշդ է արձանադրել: «Այսօր էլ ասա ա՛յս կարծիքը յայտնեցիք, — էլի դրի էր առել անպիտանը: — Ախր, սա նրան հակառակ բան է»: Ուսանողները հիմա անհամբեր սպասում են, տեսնեն ինչ եմ ասելու: Ին Սիրականին (խօսքը հոգեբան Սիրական Տիգրանեանի մասին էր) դիտես, չէ՞, արձակեցին հենց այդպիսի մի հակառակութեան համար: Քիչ մնաց ես էլ շփոթուեմ ու սխալ թոյլ տամ: Յետոյ մտածեցի, թէ՛ դէ լաւ, արի բանը հաշտ վերջացնենք, թող այս երեխաներն էլ մի փոքր ուրախանան: Ասացի. «Մնացական, սիրելի՛ս, լաւ ես նկատել, խելահաս տղայ ես... եւ ճիշդ ես դրի առել... Այո, այն ուրիշ էր: Գիտե՞ս ինչ կայ. ա՛յն կարծիքը, որ ներածականի մէջ յայտնեցի, դա իմ առաջին կարծիքն էր: Այն էլ, որ այսօր շարադրեցի, դա իմ երկրորդ կարծիքն էր: Մի երրորդ կարծիք էլ ունեմ, տղաս, որին դուք ծանօթ չէք, դեռ չեմ յայտնել ձեզ...»:

Իսահակեանը, որ ծիծաղի մէջ զուսպ մարդ էր, քահ-քահ խնդում էր, ձեռքի ափով թօթուում Յակորեանի ուսն ու հարցնում.

— Սիմոն, հիմա հենց այդքա՞նն է, թէ դեռ էլի պիտի դան յետոյ քո այդ «կարծիքները»...

Միւս օրը համալսարանում առիթ ունեցանք հաւաստիանալու, որ մաքուր ճշմարտութիւն է Յակորեանի պատմածը. մի քանի օր շարունակ այնտեղ խօսք ու զրոյցի նիւթ էր նրա այդ պատասխանն իր «խելահաս» ուսանողին...

ՌԱՖԱՅԷԼ ԱԹԱՅԵԱՆ

Չարմանքս մեծ եղաւ, երբ աղտոտ եւ չափաբաշտ վայրենի տեսքով բազմութեան մէջէն ան-

սայ խղճալի տեսքով ամէնուն ծանօթ պրոֆեսոր Սիմոն Յակորեանին, որ մի անկիւնում կանգնած՝ խօսում էր հանրային դրադարանի տնօրէն Սուրէն Մարկոսեանի հետ:

Սիմոն Յակորեանի տխուր պատմութիւնը շատ-շատ երկար է, ձգւում է երկրից մինչեւ արտասահման, Բաքուի «Արեւ»ից մինչեւ Բերլինի «Արեգ»ը, Դաշնակցութիւնից մինչեւ համայնաւարութիւն, Չաւարեանից մինչեւ Ստալին: Կըրկնակի շքանշանակիր Սիմոն Յակորեանն էր, որ 1935ին Կրեմլինի մէջ «մեծ Ստալինին» ներկայացնում էր հայ մտքի եւ մտաւորականութեան «ջերմ» զվարճումներն ու հաւատարմութիւնը, իսկ վերադարձին էլ մի լորձնաշուրթն յօղուած դրել «Խորհրդային Հայաստան» օրաթերթի մէջ՝ «Ես տեսայ աշխարհի ամենամեծ մարդուն» ստայօղ վերտառութեամբ:

Բայց 1936ի մի գիշեր երկու չեկիստներ մըտնում են Սիմոն Յակորեանի սենեակը: Նա թէ՛

— Ընկերներ, դուք թիւրիմացութեան մէջ էք: Ես կրկնակի շքանշանակիր Սիմոն Յակորեանն եմ: Դուք, երեւի, ինձ մի ուրիշի հետ էք շփոթում:

— Ոչ, մենք չենք շփոթում: Մենք եկել ենք ձերբակալելու կրկնակի շքանշանակիր պրոֆ. սրիկայ Սիմոն Յակորեանին եւ նրա գերմանահիւնը:

Սիմոն Յակորեանի ձերբակալութիւնից անմիջապէս յետոյ, ձերբակալում են համալսարանի մի քանի պրոֆեսորներ, անշուշտ նրա տուած ցուցակի հիման վրայ:

Յիշում եմ, երբ մի գրական հաւաքոյթում պրոֆ. Արսէն Տէրտէրեանին մեղադրում էին գրականագիտութեան մէջ ոչ-մարքսիստական հայեացքներ ունենալուն համար, Սիմոն Յակորեանը հետեւեալը ասաց.

— Արսէն, տարօրինակ մարդ ես. ինչո՞ւ ես յամառում, ինչո՞ւ գործերդ չես «վերակառուցում»...


— Սիմոն, Սիմոն, փոխուելը եւ վերակառուցուելը ամէն մարդու յատուկ չէ...

Եւ ապա, երբ բազում անգամներ «փոխուած եւ վերակառուցուած» Սիմոն Յակորեանին էր տեսնում բաղնիքի մի անկիւնում ծուարած, յիշեցի Արսէն Տէրտէրեանի «Սիմոն, Սիմոն»ը:

Բայց այդ վերջին անգամն էր, որ տեսայ Սիմոն Յակորեանին:

Ս. ՍԱՀԱՌՈՒՆԻ

Ռ. Դ Ա Ր Բ Ի Ն Ե Ա Ն



ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Պէտք է խոստովանիմ, որ հայ բուլշեւիկները Հ. Յ. Դաշնակցութեան եւ մասնաւորապէս Մոսկուա գտնուող Դաշնակցականներու դէմ գրգռելու գործին մէջ, դժբախտաբար, շատ տխուր դեր կատարեց նաեւ Դաշնակցական ընկեր Սիմոն Յակոբեանը, թէեւ ան Բագուէն ինծի հետ եկած էր՝ միասին գործելու համար:

Ռ. Դ.

ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

...Ապրիլի վերջին օրերուն էր, որ Ազգային Խորհուրդը որոշեց զիս եւ Սիմոն Յակոբեանը Մոսկուա զրկել՝ ա) Բագուի վիճակին Սովետական իշխանութիւնը ծանօթացնելու եւ, ք) հնարաւոր չափով անկէ ամէն տեսակ օգնութիւն ստանալու համար:

Ինծի համար այդ ընտրութիւնը կաւարելապէս անակնկալ էր: Ո՛չ միայն այն պատճառով, որ կը կարծէի, թէ Ազգային Խորհուրդի քարտուղար ըլլալուս պարագան արդեւք պիտի ըլլար նման ընտրութեան մը համար, այլեւ մա՛նաւանդ այն պատճառով, որ ես արդէն րաւական յայտնի էի իբրեւ ամէնէն հակաբուլշեւիկ Դաշնակցականներէն մէկը. հետեւաբար, ինծի պէս մէկու մը առաքելութիւնը դէպի Մոսկուա անյարմար, նոյնիսկ անթափ պէտք է նկատուէր:

Երբ ես առարկութիւն ըրի այդ իմաստով, ինծի պատասխանեցին, թէ ես յարմար կը դատուէի Մոսկուա երթալու ո՛չ թէ բուլշեւիկներու, այլ դերմանացիներու հետ քանակցելու համար, քանի որ այդ օրերուն դերման կառավարութիւնը Սովետական Մոսկուա էր զրկած իր առաջին դեսպանը՝ յանձին կոմս Միրբախի, որ կը մտածուէր, թէ մեծ ազդեցութիւն ունէր բուլշեւիկ ղեկավարներուն վրայ եւ որ, ատկէ զատ, կրնար թուրքերուն վրայ ալ ազդել ի նպաստ հայութեան:

Գալով Սիմոն Յակոբեանին՝ անոր ընտրութեան հաշիւները իմինէս բոլորովին ասարբեր էին:

Թէեւ ան ալ Դաշնակցական էր, բայց ան ինծի պէս հակաբուլշեւիկ չէր: Ընդհակառակն, ան զօրաւոր հակումներ ցոյց

ատած էր դէպի բոլշեւիկները եւ նոյն-
իսկ Ստեփան Շահումեանի դրդումով ի-
րեն թոյլ տուած էր առաջ բերել «ճախա-
կողմեան Դաշնակցականներու» հոսանք
մը, որ անվերապահ կերպով բոլշեւիկ-
ներու հետ զործակցելու կողմնակից էր :
Եւ Սիմոն Յակոբեան, որ ինքնակամ կեր-
պով առած էր Հ. Յ. Դաշնակցութեան
հանդէպ այդ քայքայիչ քայլը, ո՛չ միայն
չէր պատժուած Բաղուրի կուսակցական
մեր վերին մարմինին կողմէ, այլեւ ա-
հա անոր թեկնածութիւնն էր առաջ քըշ-
ւեր՝ ինծի հետ միասին Մոսկուա զրկը-
ւելու համար :

Անտարակոյս, մեր ընկերները եւ
Աղղային Խորհուրդը անոր վրայ կանգ
էին առած այն սխալ ենթադրութեամբ,
թէ ան Դաշնակցականներէն ամէնէն յար-
մար անձն էր՝ բոլշեւիկներու հետ բա-
նակցելու համար :

Աւելորդ է ըսել, թէ ինծի համար
չափազանց անախորժ էր Մոսկուա եր-
թալ Սիմոն Յակոբեանի հետ : Նախ՝ այն
պատճառով, որ չէի բաժնէր անոր քա-
ղաքական հայեացքները, մա՛նաւանդ ա-
նոր խանդավառութիւնը բոլշեւիզմով :
Երկրորդ՝ ինչ որ շատ աւելի կարեւոր
էր, այն պատճառով, որ ան նենգ, դա-
ւաղիր, անխստահելի անձնաւորութիւն
մըն էր եւ կրնար ո՛չ թէ օգնել, այլ մե-
ծապէս վնասել մեր բանակցութիւննե-
րուն :

Դժբախտաբար, իմ կասկածներն ու
երկիւղները այդ ուղղութեամբ կատարե-
լապէս արդարացան : Մոսկուայի մէջ,
չատ չանցած, Սիմոն Յակոբեան ո՛չ
միայն ինք անցաւ բոլշեւիկներուն կողմը
եւ դարձաւ անոնց գործիքը, այլև փոր-
ձեց դիս ալ իր ետեւէն քաշել :

Բայց այդ մասին յետոյ :

Այստեղ ոչէտք է ըսեմ միայն, որ
ճամբայ չելած, իմ կասկածներն ու եր-
կիւղները Սիմոն Յակոբեանի մասին
յայտնեցի իմ Դաշնակցական ընկերնե-
րուն : Բայց անոնք բոլորովին անհիմն
նկատեցին իմ ենթադրութիւնները եւ,
բոտ երեսոյթին, վերապրեցին իմ այդ
չատ յոռի կարծիքը անձնալիակ հակա-
կրօնքի միայն :

Հետաքրքրական է, որ Բաղուր մեր
բոլոր ընկերներն ալ Սիմոն Յակոբեանը
կը նկատէին բարեմիտ, անկեղծ ու նը-
ւիրուած Դաշնակցական մը, որուն սայ-
թաքումներուն բաւորն ալ կը նայէին զար-
մանայի ներողամտութեամբ. եւ այդ նե-
րողամտութիւնը շարունակուեցաւ իր
Մոսկուայի առաքելութենէն ետքն ալ,
թէ եւ ան մէկէ աւելի անդամներ արդէն
դաւաճանած էր իր կուսակցութեան,
մինչեւ որ Սիմոն Յակոբեան ինքը վերջ-
նականապէս եւ պաշտօնապէս հեռացաւ
Դաշնակցութենէն եւ սկսաւ արդէն հրա-
պարակով յարձակումներ դործել անոր
վրայ՝ փառարանելով բոլշեւիզմը եւ Սո-
վետական իշխանութիւնը :

Ու եթէ Սիմոն Յակոբեանի ընկե-
րակցութիւնը դիս չէր ուրախացներ բը-
նաւ, բայց ներքնապէս ուրախ էի, որ
տիկնոջս հետ միասին կը հեռանայի Բա-
ղուէն, որ Մարտի արիւնալի կռիւներէն
ետք՝ անդադար պատերազմի մէջ էր շըր-
ջապատող թրքութեան հետ...

**

Պէտք է խոստովանիմ, որ հայ բոլ-
շեւիկները Հ. Յ. Դաշնակցութեան եւ
մասնաւորապէս Մոսկուա դռնուող Դաշ-
նակցականներուս դէմ զրգուելու գործին
մէջ, դժբախտաբար, շատ տխուր դեր
կատարեց նաեւ Դաշնակցական ընկեր
Սիմոն Յակոբեանը, թէ եւ ան Բաղուէն
ինծի հետ եկած էր՝ միասին գործելու
համար :

Դեռ Յունիս ամսոյն (1918), Լազարե-
տան ձեմարանի մէջ տեղի ունեցած խու-
ղարկութենէն անմիջապէս ետք, Ս. Յա-
կոբեան ուղղակի ահաբեկուած էր եւ կա-
տարելապէս խուճապի մատնուած : Եւ
այդ՝ ա՛յն աստիճան, որ չէր քաջուեր
այլևս բացէ ի բաց բոլշեւիկեան մտքեր
յայտնելէ : Աւելի՛ն. ան նոյնիսկ յանդրոյ-
նութիւն ունեցաւ մեզ ալ համոզել փոր-
ձելու, որ ստեղծէինք նոր Զախ Դաշնակ-
ցութիւն մը՝ Սովետական իշխանութեան
աւելի բնորոնելի բլրալու համար : Երբ
չյաջողեցաւ, փորձեց բոլշեւիկեան դա-
դափարներ պաշտպանող իր մէկ յօդուա-

ծր թարգմանել աալ ինծի ուսերէն, որ պէսզի կարենար զայն հրատարակել տալ «Պրաւդա» թերթին մէջ:

Երբ ես ցասումով մերժեցի եւ մեր բոլոր ընկերներն ալ յանդիմանեցին զինք՝ իր այդ մտադրութեան համար, ան չվարանեցաւ իր վրդովեցուցիչ յօդուածը հրատարակել հայերէն «Կոմունիստ» թերթին մէջ, — յօդուած մը, որով կը դատապարտէր Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը Հայաստանի եւ Վրաստանի մէջ ու կը ջանար ցոյց տալ, թէ իր տեսակէտները հիմնովին տարբեր են Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարներէն:

Մեր ընկերական ժողովներուն մէջ այնուհետեւ ան փորձեց համոզել մեզ, թէ անվտանգ ըլլալու եւ ազատօրէն գործելու համար՝ մենք լաւագոյնը ըրած պիտի ըլլանք, եթէ անմիջապէս յայտարարենք, որ կ'անջատուինք Կովկասի մէջ գործող Հ. Յ. Դաշնակցութենէն եւ մէկ նոր հայկական կուսակցութիւն կը ստեղծենք՝ բոլշեւիկեան ծրագրով:

Հարկաւ, իր այս եւ նման անպատւարներ առաջարկները ո'չ միայն խիստ քննադատութեան, այլեւ պարսաւանքի արժանացան մեր կողմէ: Եւ երբ ան վերջնականապէս համոզուեցաւ, որ մենք մըտաբար պիտի չընենք իր «խոհեմ» խորհուրդները եւ, հալածանքներէ եւ ձերբակալութենէ կուսափելու համար բոլշեւիկեան դոյն սլիտի չառնէինք, յտնկարծ, առանց մեզի որեւէ բան ըսելու, անյայտացաւ Մոսկուայէն, կամ գէթ մեր հորիզոնէն:

Ետքը իմացանք, որ գացած էր Աւրատով՝ խորհելով, թէ այնտեղ կեանքը իրեն համար աւելի ապահով պիտի ըլլար քաղաքականապէս: Հոն պատահամբ հանդիպած էր իրեն հին ծանօթ հայ բոլշեւիկ մը, որ համոզած էր զենք վերադառնալ Մոսկուա եւ միասին գործել բոլշեւիկներու հետ:

**

Օր մը, երբ ես գացած էի իմ հին ծանօթ Սարգիս Վարդանեանի մօտ եւ ա-

նոր հետ կը խօսէինք անցեալի մասին, յանկարծ ներս մտաւ Սիմոն Յակոբեան խումբ մը հայ բոլշեւիկներու հետ եւ, զիս տեսնելով, ըսաւ՝ իր ուղեկիցներու ուշադրութիւնը իմ վրայ ուղղելով:

— Այս հակայեղափոխականը դեռ ձերբակալուած չէ՞: Ինչպէ՞ս էք թոյլ տալիս, որ սրա նման կատաղի հակաբոլշեւիկներ ազատ մնան եւ դաւեն Սովետական իշխանութեան գէմ:

Այդ խօսքերը ըսելով՝ Ս. Յակոբեանի ուղեկից բոլշեւիկներէն մէկը՝ Սըմբատ Մարգարեան, որ, ինչպէս յետոյ իմացայ, իրեն հետ Սաբատովէն էր եկած՝ փախած ըլլալով Բագուէն, բացազանչեց:

— Այս տեսակ հակայեղափոխականներին ո'չ թէ ձերբակալել միայն, այլ իսկոյն դնդակահարել պէտք է:

Այդտեղ էր, որ անկեղծ ցասումով միջամտեց Սարգիս Վարդանեանը:

— Չէ՞ք ամաչում, — պոռաց նա, — երէկ Ա. Չիլինդարեանի հետ դուք կըրուում էիք ցարական իշխանութեան գէմ եւ միասին յեղափոխական գործ էիք կատարում, իսկ այսօր, երբ ցարական կառավարութիւնը չկայ, նրա տե՞ղն էք ուզում բռնել: Իսկ դո՛ւ, Սիմոն Յակոբեան, ամէնից վատթարն ես, որովհետեւ դաւաճանել ես քո կուսակցութեան եւ ուզում ես քո կուսակցական ընկերոջը բանաարկել եւ նոյնիսկ դնդակահարել տալ:

Ապա դառնալով ինծի՝ Սարգիս Վարդանեանն ըսաւ:

— Խնդրում եմ, կարեւորութիւն մի աաք սրանց ասածներին: Իրենք էլ չգիտեն, թէ ի՞նչ են անում:

Պարզ էր, որ Ս. Յակոբեանը այլեւս բոլորովին բոլշեւիկ էր դարձած եւ բացէ ի բաց սկսած էր պայքար մղել մեզի՝ իր երէկուան ընկերներուն գէմ:

Այդ պատառով ես երբեք չզարմացայ, երբ քանի մը օր յետոյ, Մոսկուայի մեր կոմիտէի գանձապահ Ընկ. Հայրիկ Եղիարեանը եկաւ մեր մօտ չափազանց յուզուած եւ վրդովմունքով յայտնեց, որ իրեն այցելած էր Ս. Յակոբեան եւ բաւական խոշոր դումար մը պահան-

ջած իրմէ, իբրեւ ճանապարհածախս, Ֆրանսա երթալու համար: Ու, ինչ որ աւելի վրդովեցուցիչ էր, սպառնացած էր նոյնիսկ, որ եթէ մենք՝ Դաշնակցականներս, իր պահանջած դրամը չտայինք, ինք պիտի դիմէր բոլշեւիկներուն եւ այդ պարազային՝ «դրա հետեւանքը վատ պիտի լինէր մեզ համար»:

Արդէն շատ ծանօթ ըլլալով Ս. Յակոբեանի նկարագրին եւ քաղաքական տրամադրութիւններուն՝ մենք, բնականաբար, չէինք կրնար թեթեւօրէն նայիլ անոր պահանջին ու սպառնալիքին, մանաւանդ՝ որ դիտէինք, թէ ան խոստացած էր Կարախանին, որ Փարիզ պիտի երթար, իբրեւ Դաշնակցական, բայց հոն պիտի դբադէր բոլշեւիկեան պրոպագանդով:

Որոշեցինք լուր տալ այդ մասին մեր բանտարկեալ ընկերներուն, եւ նախ՝ առնել անոնց կարծիքը: Երբ առինք, ընկերական ժողով դումարեցինք եւ որոշեցինք ամէն կերպով արդելք ըլլալ Ս. Յակոբեանի Փարիզ երթալուն:

Դժբախտաբար, մեզմէ մերժում ըստանալէ ետք, Ս. Յակոբեան բոլշեւիկներէն էր դրամ ստացած եւ հայ բոլշեւիկի մը հետ մեկնած էր Ուկրանիա:

**

Ինչպէս ամիսներ յետոյ իմացանք, ան յաջողած էր երթալ Ռոստով, հոն լայնօրէն օդտուած էր Դաշնակցական իր հին կապերէն, ստացած էր այնտեղի մեր ընկերներէն դրամ եւ յանձնարարականներ ու դացած էր Փարիզ: Հոն դտնուող մեր Դաշնակցական ընկերները, բոլորովին անտեղեակ ըլլալով Մոսկուայի իր դաւաճտնական ընթացքին, պատասխանատու դործի վրայ դրած էին զայն՝ այդ կերպով անդիտակցաբար լայն պատեհութիւն էին առած անոր ազատօրէն կատարելու բոլշեւիկեան իր ծպակալ ուղեկիցի քայքայիչ աշխատանքը:

Երբ Մոսկուայի մէջ մենք իմացանք, որ Ս. Յակոբեան յաջողած էր հասնիլ Փարիզ, նամակ դրեցինք այնտեղի մեր ընկերներուն՝ նախդգուշացնելով զանոնք անոր մասին: Բայց չեմ դիտեր, թէ ա-

նոնք ստացած էին արդեօք մեր նամակը: Շատ կը կասկածիմ, որովհետեւ եթէ ստացած ըլլային, հազիւ թէ Ս. Յակոբեանին որեւէ պատասխանատու դործ վստահած պիտի ըլլային:


Այս կոպակցութեամբ աւելորդ չեմ նկատեր հոս յիշեցնելու, որ 1917ին, Թուսասաանի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, Բազուի մէջ ան իր շուրջը հաւաքած էր Դաշնակցական երիտասարդներ, զրգուած զանոնք Դաշնակցութեան դէմ եւ փորձած համոզել զանոնք՝ հրաժարելու Դաշնակցութենէն եւ կադմելու նոր «ձախակողմեան» հայ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւն մը: Իր պատճառաբանութիւնը այն էր, թէ Դաշնակցութիւնը, թէեւ կը վայելէ հայ ժողովուրդի վստահութիւնը, սակայն որեւէ վստահութիւն չի ներշնչեր հարեւան ժողովուրդներուն եւ իր դոյութեամբ իսկ արդելք կ'ըլլայ Կովկասի աշխատաւորութեան համերաշխութեան դործին:

Երբ Բազուի մեր Կ. Կոմիտէն իմացաւ Ս. Յակոբեանի այս դաւադրական աշխատանքներուն մասին, իսկոյն բացարձակութիւններ պահանջեց իրմէ, խիստ նկատողութիւն ըրաւ անոր եւ նախդգուշացուց զայն, որ եթէ շարունակէր իր այդ վնասակար ընթացքը, պիտի չկարենար այլեւ մնալ «Արեւ» օրաթերթի խմբագրի պաշտօնին վրայ:

Ս. Յակոբեան իբր թէ համակերպեցաւ, բայց աւելի զգուշութեամբ շարունակեց իր քայքայիչ դործը մինչեւ բոլշեւիկներու Հոկտեմբերեան յեղաշրջումը, երբ արդէն կրկին վերսկսաւ աւելի համարձակ կերպով երեւան բերել իր «ձախակողմեան» տրամադրութիւնները:

Պէտք է ըսեմ այս առթիւ, որ մինչեւ այժմ ալ ինծի համար հանելուկ է մընացած, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս Ս. Յակոբեան, հակառակ ամէնուն ծանօթ իր քայքայիչ ընթացքին, չհեռացուեցաւ մեր կուսակցութենէն եւ կրցաւ 1917էն մինչեւ 1922, նոյնիսկ 1923, Դաշնակցական դիմակին տակ դործել, մոլորեցնել մեր շարքերը եւ ներքնապէս ու արտաքնապէս ահադին մնաս հասցնել մեր կադմութեան, ինչպէս եւ Հայ Դատին:

Ռ. ԴԱՐԻՆԵԱՆ



ԻՆՏԵՆՍԻՎ ՇԱՐԺՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ի Զ ...

Թարգմանի՛չ...

Ի՛նչ սլարդ, անհրապոյր, նոյնիսկ քիչ մը սլադ բառ:

Բառը՝ իբրեւ բառ՝ այնքան սովորական աշխատանքի մը եւ աշխատաւորի մը կ'ակնարկէ, որ ոչինչ ունի իր մէջ ստեղծագործական: Փոխադրութեան մը կը վերաբերի բառը: Փոխադրութեան դադարի մը, զգացումի մը, ճշմարտութեան մը, իղձի մը՝ մէկ լեզուական արտայայտութենէ միւսին: Որքան ալ դժուար աշխատանք ըլլայ անիկա, կը բաւէ տէրը ըլլալ լեզուներուն, սահուն վարժութիւնը ունենալ անոնց բերանացի եւ դրաւոր արտայայտութեան, որսկէսդի կարելի ըլլայ յաջողութեամբ կատարել թարգմանչական աշխատանքը, ըլլալ թարգմանիչ:

Այս օրերուն մանաւանդ, լեզուներով բաբելոնացած մեր 20րդ դարու այս աշխարհին մէջ, ուր աղդերու, եկեղեցիներու, մշակոյթներու փոխարարութիւնները հազորդակցութեան միջոցներու այսքան արագ եւ դործնական պայմաններուն տակ վերածուած են ամէնօրեայ երեւոյթներու, թարգմանիչներ ամէն կողմ դարձած են փնտռուա՛ծ անձեր: Միացեալ Աղդերու կազմակերպութեան, կամ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ կամ միջազգային տարողութեամբ եւ բնոյթով ոեւէ այլ կազմակերպութեան կամ ընկերակցութեան համաժողովներուն, անմիջական եւ ուղղակի թարգմանութիւնը վերածուած է թեքնիք, ընթացիկ դործօնութեան մը: Թարգմանիչներ (interpreters), անկախաբար իրենց անձնական արժանիքներէն, դասուած են պաշտօնեաներու համեստ շարքին, մեքենադրողներէն քիչ մը վեր...:

Բայց հայոց սլատմութեան եւ դարձման մէջ թարգմանիչ բառը ուրի՛շ ասորողութիւն եւ յատուկ իմաստ ու դրաւչութիւն ունի: Սուրբերու շարքին են բարձրացած մեր թարգմանիչները, անմահներու սլանթէոնին բնակիչ են այլեւս, հայոց դրականութեան դասադրքերու էջերուն վրայ անջնջելի տեղ են դրաւած իրենց սլատկերները, հայ ժողովուրդի յառաջացող կեանքի ճամբուն վրայ լուսատու, կանթեղներ են իրենց պայծառաչող անունները — Ս.

Սահակ, Ս. Մեսրոպ, Եղնիկ, Կորիւն, Եղիշէ, Խորենացի, Փարպեցի, Դաւիթ Անյաղթ, եւ անոնց հետագայ շառաւիղներէն՝ Նարեկացի, Շնորհալի, Տաթեւացի, միայն տուած ըլլալու համար քանի մը անուններ:

«Տօն սրբոց քարգմանչաց վարդապետաց մերոց...»

Ամէն ասորի զէթ երկու առիթներով կրօնական վեհացումի եւ համագրային սեւեռումի առարկայ են անոնք մեր Ա. Եկեղեցւոյ տօնակարգին համաձայն: Իսկ ամէն օր բաղմիցս ներկայ են մեր մէջ՝

— Հայ դպրոցներու գրաստեղաններուն առջեւ Ա. Բ. Գ. սորվող եւ Ա. Բ. Գ. ու վ. հայութիւն ըմպող մեր մաաղաչ ու սլաասնի սերունդներուն մէջ:

— Հայց. Եկեղեցւոյ սրբազան պատարագով եւ այլ արարողութիւններով հնչող «Առաւօտ լուսոյ», «Լոյս գուարթ», «Նայեաց սիրով», «Սուրբ, սուրբ», «Քրիստոս պատարագեալ բաշխի», «Տէ՛ր ողորմեա» սրբասացութիւններուն, աղօթքներուն, շարականներուն մէջ,

— Հայ գիրքի ու մամուլի էջերուն վրայ,

— Հայ մշակոյթին ձօնուած ոգեկոչումներուն, արժեւորումներուն, վերարծարծումներուն ծառայող հանդէսներու բեմերուն վրայ,

— Հայ տուններու հայասնունդ երդիքներուն տակ,

— Եւ նոյնիսկ օտար համալսարաններու այս կամ այն անկիւնին մէջ, այս կամ այն ամպիոնին վրայ, այս կամ այն դրազարանի սրահին մէջ...:

Այսպէս եղան ժամանակին: Կան եւ այսօր: Պիտի մնան եւ վաղը: Ինչո՞ւ կան այսպէս ժամանակին մէջ եւ ժամանակէն վեր: Որովհետեւ ասրեցան եւ գործեցին յաւերժութեանը համար մեր ժողովուրդին: Ժամանակը նուաճեցին՝ ժամանակայինէն վեր արժէքներով եւ մեր կեանքը լեցուցին այնպիսի «արուքեան գործք»ով, որ ո՛չ միայն «արժանի են գրոց յիշատակի», այլեւ ու մա՛նաւանդ ազբիւր են ներշնչման մեր ապագայի՛ն համար՝ շաղախած եւ ընդելուզուած ըլլալով մեր հայութիւնը կազմող որոշազրիչ տարրերուն, ազգային ապրումներուն հետ:

Երեք մեծագործութիւններ Թարգմանիչ Վարդապետներէն այս վայրկեանին կ'այցելեն միտքիս ու գրչիս:—

Ա.

Աստուածաշունչ մատեանի, սրբազան մատենագրութեան, ծիսական խորհրդապաշտ գրականութեան, եկեղեցական մտաւորական հռչակաւոր հայրերու ստեղծագործութեանց, իմաստասիրական, գրական արտադրութեանց, գաղափարական, հոգեկան այնքան հարուստ աղանձները սկսան ազբերանալ հայ կեանքի անդաստանին մէջ «փոքր ածու»ի մշակներուն՝ Թարգմանիչ Վարդապետներու տենդագին աշխատանքովը:

Արդարեւ, համաշխարհայնօրէն ծանօթ իրողութիւն է, որ Աստուածաշունչ մատեանը, որ Օրմանեան սրբազանի բնորոշումով կոչուած է «մատենադարան», գիրքերուն Գիրքը, անսպառելիօրէն ճոխ աշխարհ մըն է՝ հօտեմադարան», գիրքերուն Գիրքը, անսպառելիօրէն ճոխ աշխարհ մըն է՝ հօտեմադարան, անսպառելիօրէն ճոխ աշխարհ մըն է՝ հօտեմադարան: Քանի՛-քանի՛ ազգեր, քաղիններուն սնունդ մատակարարելու տեսակէտէն: Քանի՛-քանի՛ ազգեր, քանի՛-քանի՛ գարերով եւ մինչեւ այսօր, աշխարհի չորս ծագերուն վրայ, այդ Գիրքը ունեցեր են — եւ ունին — իբրեւ սրբազնագոյն մատեան, կեանքի ներշնչարան:

The Holy Bible

The Holy Scriptures

Ամերիկայի մէջ ի՞նչ դրաւչտական ուժ ունին այս բառերը:

Բ Ա Պ Ի Ն

Ես սնձամբ տեսած եմ սլաշտամունքի տասիճանին հասած յարդանքի եւ սիրոյ, հոգեկոտն եւ դողափարական կապուածութեան զղացում մը հանդէպ Աստուածաշունչ մտանանին: Եւ երեւակայել, որ մեր հայրերը Ծրդ դարուն զայն ամբողջութեամբ եւ դրեթէ երկիցս թարգմանեցին, աւելի ճիշդ՝ հայացուցին եւ կորուսն «Սքանչելի» ը բառերով զԱստուած «հայերէնախօս եւ հայերէնաբարբառ» դարձուցին: Եւ այն տեսն «սքանչելի լինէր աշխարհն Հայոց»: Որովհետեւ Աստուած ոչ խօսքը՝ դերադոյն ճշմարտութիւնը միացաւ հայու հոգիին եւ, ինչպէս կ'ըսէր իմ մեծադոյն ուսուցիչը՝ Շահան Պէրպէրեան, տեղի ունեցաւ «միստիք ամուսնութիւնը» հայ ժողովուրդին եւ Աստուածաշունչով արաայայտուած աստուածային հոգիին միջեւ:

Թարգմանիչները սարդապէս դիրք չէր, որ փոխադրեցին մէկ լեզուի տարազէն միւսին: Անոնք ապրեցա՛ն Աստուածաշունչը եւ դիտութեան, հրմտութեան հետ միասին ապրումով, հաւատքով, հոգեկան սերտակցութեամբ Աստուածաշունչը դարձուցին հայո՛ւն մատեանը եւ զայն «ՀԱՅՐ» հռչակեցին («Քանգի հայր մեր՝ զՍուրբ Աւետարանն գիտեմք»):

Այսօրուան նիւթապաշտական ինչ-ինչ հասկացողութիւններէ — աւելի ճիշդ՝ ան-հասկացողութենէ, ան-ճանաչութենէ, թիւր իմացումներէ — յառաջացած մտայնութիւններով եւ կեցուածքներով պէտք չէ մօտենալ Աստուածաշունչի արժէքին եւ անոր հանդէպ թարգմանիչ վարդապետներու ունեցած գիտակցական խոր սլաշտամունքին: Թարգմանութիւնը հաւատքի եւ նախան-ձանդերութեան ծնունդ էր, աստուածային իմաստութեան հետ հաղորդութեան ծնունդ էր, աստուածային իմաստութեան հետ հաղորդութեան արդիւնք էր: Եւ ա՛յդ է առաջին ու զեղեցկադոյն բնորոշիչ դիժը թարգմանիչ վարդապետներու սրբազան վաստակին:

Բ.

Բայց ի՞նչ տառերով կրցան հայո՛ւ մարմին տալ տիեզերական Աստուածաշունչին, որ երբայերէն, յունարէն, ասորերէն տարազներով էր հանդերձուած: Լեզուն ունէին: Լեզուով դուսանական երգեր կը յօրինէին, պատմական վիպասանութիւններ կը հիւսէին, դիւցազնախառն առասպելներ կը ստեղծագործէին, «Երկնէր երկին», «Հեծաւ արի արքայն Արտաշէս», «Ո՛ տեղծագործէին, «Երգք քուելեաց» ոճով դիւցազնավէպեր կ'երգէին ու փանդիւռով կը նուագէին աստուածներու, թաղաւորներու եւ հերոսներու փառքին համար: Բայց իրենց կը պակսէր սեփական դիրք, այբուբենը:

Հայը «մուրացածոյ» այբուբեններու հարկատու ազդ էր դարձեր: Այդ դիտութիւնը աւելի ծանր կը ճնշէր իր հոգիին վրայ, քան ժամանակաւոր, փոփոխական, անցաւոր դիտութիւնները քաղաքական եւ ռազմական իշխանութիւններու եւ ուժերու: Ունենալ ազդային շեշտուած ինքնութեան դիտակցութիւն, ունենալ ինքնօրէն ապրելու յատուկ պետական ներքին կարգեր եւ աւանդութիւններ, ունենալ անկախութեան ձգտում, ունենալ իւրա-յատուկ լեզու՝ մշակուած, ճիւղն եւ ճոխ, ունենալ դարաւոր քաղաքակրթական ժառանգութիւն, բայց դուրի մնալ սեփական դիրք ու դրականութենէ, սա այլեւս անհտնդուրժելի կացութիւն էր ոեւէ հայու համար, որ ազդային նախանձտխնդրութեան կրակը ունէր իր մէջ:

Այդ հայերուն ամէնէ՛ն հայր եւ եկեղեցիին ամէնէ՛ն սրբակրօն, ճղնակեաց սպասաւորը Հայաստանի քարայրներուն մէջ մտալիլումի ալեծուփ յորձանքին մէջ բռնուած՝ կը զղար իր ալիքներուն զալարումը իր սլաշտած աղ-

դի այդ աստուածային եւ անբարեյոյս վիճակէն : Եւ ազգին սէրը ցաւի վերած-
 ւած՝ զսպանակի պէս զինք դուրս նետեց քարայրներէն եւ դրաւ որոնումի եւ
 յօրինումի ճամբաներուն վրայ : Սուրբն ու Հայը՝ Մեսրոպ Մաշտոց դարբնեց
 այն հրաշակերտ եւ հրաշագործ ոսկի ուռնակը, որ թռչող խօսքին, հնչող
 լեզուին կաղապար յօրինեց եւ հայ դրականութեան լեզուակներ սարքեց :

Հայ Գիրերու Գիւտը...

Պայծառագոյն է՛ջը հայոց պատմութեան :

Հայ Գիրերուն Գիւտարարը...

Ազնուական դէ՛մքը հայ ժողովրդեան՝

Սուրբ Մեսրոպ Մաշտոց

«Հայ դարերուն դիմաց կեցող դու ադամանդեայ ապառաժ» :

Թարգմանիչներուն Հայրը այսպէս ծնունդ տուաւ Թարգմանիչներուն,
 անոնց տալով ո՛չ միայն գործիքը, այլեւ՝ այդ գործիքին գործածութեան
 գաղտնի արուեստը — հայկական նախանձախնդրութիւնը, որ կիրքի՛ վերած-
 ւած՝ դարը ամբողջ լեցուց թարգմանչական եւ ստեղծագործական հոսանուտ,
 հեղեղանման ընթացքով մը՝ մինչեւ օրս զարմանք պատճառելով պատմու-
 թիւնը իմացող գիտնականներուն : Ահա այդ սրբազան կիրքին ծնունդը եղաւ
 մեր Ոգկեդարը՝ իրրեւ գլուխ-գործոցը Թարգմանչաց անզուգական սե-
 րունդին :

Գ.

Գիրքն ու Գիրը բաւարար չէին, սակայն, Հայ Թարգմանիչ Վարդա-
 պետներուն համար : Աստուածաշունչն ու այբուբենը անհրաժեշտ էին, կեն-
 սական. բայց ո՛չ բաւարար : Մա՛րդն էր կարեւորագոյնը : Նո՛ր սերունդ էր
 պէտք, նորոգուած հոգիով, Աստուծոյ եւ ազգի ներդաշնակ զգացումներով
 պրկուած նո՛ր մարդեր էին հարկաւոր :

Այս հեռատես ու խորագնին իմացողութեամբ առաջնորդուած՝ Թարգ-
 մանիչ Վարդապետներ իրենց թարգմանչական առաքելութիւնը Գիրէն ու
 Գիրքէն փոխադրեցին դէպի դպրոց, դէպի մարդու պատրաստութիւն : Դրպ-
 րոցներ բացին, փողոցներու հրապարակներու վրայ բաց դասեր աւանդեցին,
 եկեղեցիներու խորանները հայաբարբառ բեմերու վերածեցին, վանքերու կա-
 մարներուն աակ ձեռագիր մատենաներու դրչագրութեան գործարաններ բա-
 ցին, մէկ խօսքով՝ համայնօրէն եւ անձնուիրաբար լծուեցաւ անկարողե-
 լիօրէն ծանր եւ փրկարար այն դործին, որուն արգիւնքը եղաւ հայ ազգայ-
 նութեան դարբնումը, հայկական ինքնուրսյնութեան եւ ազգային արժանա-
 պատուութեան կռանումը :

Հինդերորդ դարու քաղաքական դժխեմ եւ մթազնող պայմաններուն
 տակ հիւժումի դատապարտուած հայ կեանքին մէջ վերականգնումի նոր ջիղ
 մտցուցին, նոր արիւն ներարկեցին, նոր թափ տուին : Առանց դաստիարակ-
 չական այդ կերպափոխիչ, յեղաշրջական գործունէութեան՝ անկարելի է հաս-
 կընալ Վարդանանց եւ Վահանեանց սերունդներու ասպետական, առիւծանը-
 ման, մարտիրոսական մաքառումը՝ ի պաշտպանութիւն հայ ինքնութեան եւ
 արժանապատուութեան, հայ ազգային սրբազան դտին : Այնպիսի սերունդ
 պատրաստեցին, որ ո՛չ Տիգրոնի փիղերը եւ ո՛չ ալ Բիւզանդիանի կայսերա-
 կան շքեղութեան եւ հեշտակենցաղութեան հրապոյրները կրցան խախտել
 հաւատքն ու ազգային ապրումը հայ ժողովուրդին : Թարգմանչաց սերունդի՛

գաղափարական թարգմանչութեան՝ հոգեղան եւ ազգային սնուցումի անդրա-
նիկ պտուղը եղան Ս. Սահակներու ծունկերուն վրայ մեծցած Կարմիր Վար-
դանները եւ Ձուիկ Տիկիներու գուրգուրոտ ձեռքերուն տակ հասակ առած
Վահանները եւ կամ Ս. Մեսրոպներու, Եղնիկներու, Կորիւններու, Եղիշէ-
ներու, Խորենացիներու, Փարպեցիներու, Մանգակունիներու հետ ժողովի
նստած եւ անոնց գաղափարական ներշնչող ազդեցութեամբը թրծուած Վռամ-
շապուհները, Խորխոռունի, Արծրունի, Բագրատունի, Պալունի, Գնդունի,
Կամոարական, Մամիկոնեան, Դիմաքսեան կամ Սրուանձտեան իշխաններն ու
նախարարները, ասպետներն ու սեպուհները:

Թարգմանիչները տուին մեզի ոչ թէ գիրք միայն, այլ դիրքը շնչաւո-
րող, արժեւորող եւ կեանքին մէջ ու կեանքով թարգմանող մարդիկ:

**

Գիրք, Գիր եւ Մարդ
Այս երեք բառերուն մէջ է խտացած թարգմանիչներու ազգային-կրօ-
նական մեծագործութիւնը
Գիրք, Գիր եւ Մարդ...
Մեր ներկայ կեանքի կարիքներու երրեակ կարեւորագոյն չըջագծերը:
Ո՞վ պիտի լեցնէ կարիքներու այս կարասացող դատարկութիւնը...:
Նո՛ր թարգմանիչներ են պէտք մեզի: Հին թարգմանիչներու ոգիով
թրծուած մարդիկ՝ հոգեւորական, մտաւորական եւ ուսուցիչ, որոնք կարե-
նան այս նոր եւ յարափոփոխ աշխարհին մէջ ճիշդ դարու ոճով թարգմանել
հայկական արժէքները մեր նոր սերունդին:
Մա՛րդն է կարեւորը, ամէն բանէ վեր:
Դէպի մա՛րդ, դէպի մարդո՛ւ պատրաստութիւն լարենք մեր բոլոր աշ-
խատանքները: Մեր գործունէութեան սլաքը, մեր նիւթական աղբիւրներուն
ծորակը ուղղենք դէպի դպրո՛ց, կրթուքի՛ւն, եկեղեցի՛, դաստիարակութի՛ւն,
որպէսզի կարենանք ունենալ նո՛ր թարգմանիչներ: Որովհետեւ առանց նո՛ր
թարգմանիչներու՝ հին թարգմանիչներու, ճիշդ եւ յաջորդ դարերու թարգ-
մանիչներու վաստակը կը խամրի հայ կեանքին մէջ: Եւ այն ատեն կը սկսի
իրական, անդարմանելի ողբերգութիւնը: Այն ատեն է, որ կը մթազնի հայ
գոյութեան եւ լինելութեան, հայ ազգային դատի տեսիլքը:
Բայց մենք կը հաւատանք, որ ճիշդ դարուն թարգմանիչներ ծնող ազգը
չի կրնար թարգմանիչներ չծնիլ 20րդ դարուն...:

ԳԱՐԵԳԻՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԻ ԳՐՈՂԻ ԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԻ ԵՐԻՑԱՍԱՐԳ ԳՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Ինձ միայն վերջերս առիթ սակղծուեց կարգալ «Գարուն» ամսագրի 1974 թուի Յունուարի համարում լոյս տեսած էմիլ Ստեփանեանի «Խոր աշուն» և «Անտեսանելի անձրեւ» պատմուածքները, որոնց հիման վրայ էլ կազմել եմ այս գրութիւնը:

Ասեմ անմիջապէս, որ էմիլ Ստեփանեանը, (եղնելով այն երկու պատմուածքներին, որ ես կարգացի հաճոյքով) ինձ համար մի շատ տաղանդաւոր, բառացի իմաստով տաղանդաւոր զբոյժ է երեւում:

Նրա տաղանդի մասերն են կազմում նրա պատմելու իւրովի ձեւը (ոճը), նրա համառօտականութիւնը, պատմուածքի նիւթի՝ ժամանակի, տեղի եւ դործողութեան միասնականութիւնը եւ ուշադրութիւնը մարդու նկատմամբ:

էմիլ Ստեփանեանը մարդու, հողիների մասին է դրում: Ասացի արդէն, որ էմիլ Ստեփանեանն ստեղծել է իր ոճը: Նա ստեղծել է նաեւ իր պատմելու ձեւը: Նրա խօսքը կարճ է, սեղմ, եւ կոտ: Նա չի միջամտում իր դործող անձանց դործերին եւ ոչ էլ ձգտում է բացատրութիւններ տալ նրանց արարքների վերաբերեալ: Նա սուր աչք ունի եւ տեսնում է ու պատմում բաների մասին, որոնք բնորոշում են տուեալ անձի հոգին, առանց հեղինակի բացատրութիւնների:

էմիլ Ստեփանեանը դործողութիւններ չունի: Բայց նա մարդ ունի իր պատմուածքներում: Այն մարդը, որին մեր այս օրերի կոշտ ու խելառ պայմանների մէջ, մենք մոռացել ենք եւ անտեսում ենք: Այժմ մենք այնքան ենք ինքնակենտրոն դարձել, որ չենք տեսնում կամ էլ չենք ուզում տեսնել այն, որը մեզ չի վերաբերում:

«Խոր աշուն»ը մի սրտառուչ պատմութիւն է մի մենաոր ծերունու մասին: Այս պատմուածքը դրուած է առաջին դէմքով եւ որովհետեւ հեղինակը պատմողի անունը չի նշում, պայմանականօրէն բնորոշենք, որ պատմողը հենց ինքը՝ հեղինակն է:

էմիլը դարտուղի ճանապարհներով չի սկըսում իր այդ պատմուածքը, այլ՝ անմիջականօրէն, որը զրական մի նոր տեխնիկա է եւ շատ ընդունուած Արեւմուտքում:

Ստեփանեանի այս երկու պատմուածքները մաքրամաքուր զրականութիւն են: Ասացի արդէն, որ զրանք դառնում են մարդու շուրջը: Ոչ թէ այդ մարդուն վնասելու, բարասելու, նրա նկատմամբ խորութիւն բանեցնելու, այլ՝ սիրելու, զուրդուրալու: Նոյնիսկ օտար ու անձանօթ մէկի նկատմամբ:

«Խոր աշուն» պատմուածքի դէպքը տեղի է ունենում մի առողջարանում: Ո՞ւր է այդ առողջարանը, հեղինակը չի ասում եւ այդ կարեւոր էլ չէ: Ո՞վ եղել է առողջարանում, նա դիտէ, որ այդտեղ նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի համար չորս հոգու նստեցնում են մի սեղանի շուրջ, որտեղից էլ մտերմութիւն է սկսում սեղանակիցների միջեւ: Պայմանով ընդունենք, որ պատմողն ինքը՝ Ստեփանեանն է, որի սեղանակիցն է նրան անձանօթ մի ծերունի եւ որոնց հետապալում միանում է պատմողի կիսը՝ Արմինէն:

Արդ՝ Ստեփանեանը նկարագրում է իր անձանօթ սեղանակիցին:

«Բարձրահասակ էր: Քայլում էր ձիւ, սեխոճեւ սափրած գլուխն ուսերով սեղմած, խի երկար, բարակ ոտքերը ճիւղում էին աղեղների նման: Նա ինձնից մի օր աւելի ուշ ժամանեց կահաչների մէջ թաղուած այդ առողջարանը, եւ նրան նստեցրին մեր սեղանի առջեւ, իմ կողքին...»:

Այս պատմուածքում հեղինակը մարդկային երեք «փոքրիկ» դէպքեր է նշում, որոնք եւ այդ փոքրիկ պատմուածքը մեծ են դարձնում:

«... Մեր դիմացը վարդաքփեր կային: Հաւասարաչափ բացուած ծաղիկներով, նոյնբրանգ: Նա յուզմունքի խլացնելով, նկատեց, թէ ինչպէս այդ միանման վարդերից մէկի քերթիկը բոլորովին անապասելի պոկուեց, ընկաւ գետին: «Ու վեր կացաւ»:

Երկրորդ «պոկիկ» դէպքն այն է, ինչպէս հեղինակն է պատմում՝

«... Նրա հանգած աչքերը նկատելով, մըտփումս որոշեցի, որ կիցս իմ տեղում նստի, ես՝ ազատ աթոռից: Առողջարանի սրակ երիտասարդ կնոջ հարեւանութիւնը հանելի անակնկալ կը լինէր ծերունու համար... Ինքուսի կնոջ քննոյշ

ձայնը, սեւ աչքերը պէտք է որ ոգեշնչելիմ մը-
րան...»:

Հայ մարդամօտ ու երկասարդ ամուսինների
և հիւանդկախ ծերունու միջև մտերմութիւն է
սկսուում: Բարեկամութիւն: Արդէն մեր այս դորշ
ու պող կեանքում սէրից յետոյ, մտերմութիւնն
ու բարեկամութիւնը մեր երկրորդ մխիթարու-
թիւնն է:

Հետադայում ծերունու պատմութիւնից ի-
մացում է, որ նա միայնակ կեանք է վարում,
որ երբեք ընտանիք չի կաղմել, որ ոչ ոք չունի:

Եւ երբեք ծերունու այդ ոչ-ուրախ վիճակն
է եղել պատճառը, որ Արմինէն քիչ է մնացել, որ
լաց լինի, երբ ծերունին եկել մնաք բարով ասե-
լու հայ երկասարդ զոյղին, իր քաղաքը մեկ-
նելուց առաջ: Էմիլ Ստեփանեանն, համառօտ,
բայց տաք խօսքով ներկայացնում է այդ տեսա-
րանը, որը երրորդ մարդկային դէպքն է այդ
կարճ պատմութեամբ:

Թերունին ասում է.

« — Դուք առաւօտեամ կամուլս էք մեկնում,
ես այլեւս չեմ հասցնի ձեզ տեսնել, ուստի՝ հա-
մարձակութիւն ունեցայ քակելու ձեր դուռը:
Ներեցէ՛ք, ի հարկէ, բայց ձեզանից բացի չկայ
ոեւէ մէկը, որին հրաժեշտ տամ: Բացարձակ: Դա
սարսափելի է:

«Արմինէն պատրաստուում էր լաց լինել...»:

Ես կարծում եմ, որ այդ պատմութեամբի աղն
էլ հենց Արմինէի լաց լինելու պատրաստուելն է:
Որովհետեւ հայ կնոջից բացի, այն ո՞ր կինն է,
որ կը պատրաստուէր լաց լինել մի օտար և հի-
ւանդկախ ծերունու համար, որի հետ մի քանի
օր սեղանի շուրջը միասին են եղել:

Հայ կինը մեր աղային պարծանքն է:

Մէկ ուրիշին կարեկցելը համամարդկային-
դպացում է, որը չքանում է մարդկային սրահ-
րից, բայց պահում է հայ կնոջ սրտում:

*
**

Էմիլ Ստեփանեանի «Անտեսանելի անձրեւ»
երկրորդ պատմութեամբն է՛լ աւելի ղեղեցիկ է,
քան առաջինը:

Այս պատմութեամբում էլ Ստեփանեանը դործո-
ղութիւններ չունի, բայց այդ պատմութեամբում էլ
նա լոյս աշխարհ է հանում իր դործող անձանց
հոգիները, առանց ճիղի, առանց միջամտելու,
այլ թողնելով, որ նրանք զրահւորեն իրենց, խօ-
սակցութիւնների միջոցով:

Այս պատմութեամբում Ստեփանեանը դործադրել
է մեծ մասով երկխօսութիւնների զրահան քեֆ-
նիք:

Արեւմուտքում երկխօսութիւնների թեքնի-
քի վրայ մեծ ուշադրութիւն է դարձում: Հենց
այդ պատճառով էլ շատ զրոյցներ ցանկանալով
երկխօսութիւններով լեցնել իրենց դրութեան-
րը, դրանք այդ թեքնիքը ինքնանպատակ են դար-

ձրնում: Այսինքն՝ չեն ծառայեցնում այդ թեք-
նիքի առաջադրանքներին և թուլացնում են ստեղ-
ծադործութիւնը:

Այդպէս չէ Էմիլ Ստեփանեանի մօտ: Նա
երկխօսութիւնը դործադրել է՝ ներկայացնելու
համար այդ պատմութեամբի դործող անձանց հոգի-
ները, մա՛նաւանդ՝ որ ինքը ոչինչ չի ասում այդ
հոգիների ներքին ծալքերի մասին:

«Անտեսանելի անձրեւ»ը երկու-երեք ժամ-
ւայ պատմութիւնն է հայ երկասարդ ամուսին-
ների կեանքից: Գեղեցիկ է այդ պատմութեամբը և
շատ ղեղեցիկ: Այն աւելի խոր է, քան ինքը պատ-
մըւանքը և աւելի պատկերաւոր, քան ներկա-
յացնում են պատմութեամբի տողերը: Այդ խոհուն
մի զրոյցի սակեղծադործութիւն է:

Օրը Շարաթ է, իսկ զրոյցում անտեսանելի բա-
րակ անձրեւ: Չի զղացում, որ երկասարդ զոյ-
ղը ձանձրանում է, բայց նման մի բան կայ:
Ստեփանեանը զոյղի անունները չի տալիս: Այդ
զրահան նորադոյն մի մեթոդ է, որին շատ դրող-
ներ են դիմում: Անունը կարեւոր չէ, ասում են
նման զրոյցները: Կարեւորն անձն է, մարդը: Յե-
տոյ էլ անունները սահմանափակում են ընթեր-
ցողի երեւակայութիւնը, որովհետեւ մենք շատ
անպամ անունով ենք ճշդում տուեալ անձի ինչ
լինելը: Սխալ է, բայց մենք շատ սխալների քա-
ղաքացիական իրաւունք ենք տուել:

Այդ մասին խօսել է հանճարեղ Յակոբ Պա-
րոնեանը իր մի քանի տողանոց մի դաւեշտա-
դրութեան մէջ:

Արդ՝ Էմիլ Ստեփանեանն անունների փոխա-
րէն դործածում է տղամարդ և կին բնորոշող
զոյական անունները:

Ես ուղում եմ մի քիչ երկար խօսել այդ
պատմութեամբի մասին: Անձրեւի պատճառով տա-
նը փակուած զոյղը ներկայացնող պատմութեամբի
մասին:

Ակամայօրէն տանը փակուած ամերիկեան մի
երկասարդ զոյղ կա՛մ քնում է, կա՛մ կոնծում,
կա՛մ անվերջօրէն համբուրում, կամ էլ նրանք
կուում են և իրար միս ուտում:

Այդպէս չէ Էմիլ Ստեփանեանի պատմութեամ-
բում: Կինը.

«Ամբարթ հայեացքը գամել էր անօրոշ կէ-
տի, նայում էր հեռուն, սեմեակի պատերից այն
կողմը: Աչքերը քախծոտ էին, ճակատը սպիտակ:
Անբաւարարութիւն: Գուցէ՛ հաճելի վերջո՞ւշ:

« — Ի՞նչ ես մտածում, — վերջապէս հարցրեց
տղամարդը:

« — Կինը սքափուեց, վերադարձաւ.

« — Ոչինչ:

« — Այդպէս սովորաբար մայում եմ, երբ
որեւէ անիրակամալի ցանկութիւն եմ ունենում
կամ...

«Կինը մպտաց.

« — Ամէն ինչ շատ լաւ է, — եւ շարունա-
կեց կարդալ:

«Չհաւատալու պատճառ չկար: Իսկ հաւատալու: Տղամարդն արդէն ընթերցել էր այդ վէպը եւ հարցրեց:

- «— Հաւանում ես:
- «— Առայժմ ոչինչ:
- «— Աւելի որոշակի չե՞ս կարող ասել:
- «— Վերջացնելուց յետոյ:
- «— Վախեցում ես սխալուե՞լ:
- «— Պարզապէս չեմ սիրում շուտափոյթ, չհիմնաւորուած...»:

Պէտք է ասել, որ հրաշալի են այն ամուսինները, որոնք հերթով մի վէպ են կարդում եւ յետոյ մտքերի փոխանակութիւն ունենում իրար հետ: Այդ մարդկային զխտակցական գոյութիւն է, եւ ոչ՝ կենդանական կամ բուսական:

Դժուարին արարած է մարդը: Դժուար է մարդու հետ ապրելը: Առաւել եւս ամուսնական կեանքում: Ամուսնանալուց յետոյ է, որ այր եւ կին դրսեւորում են իրենց հակադիր բնաւորութիւնները: Եթէ փոխդիջում չկայ, սկսում են իրար միտ ուտել: Յետոյ էլ ապահարզան: Ասլահարզանը մեր այս դարի մեծագոյն չարիքն է ընտանիքի եւ հասարակութեան քայքայման հարցում: Մա՛նաւանդ՝ եթէ կան երեխաներ, որոնց հոգիները կիսւում են եւ նրանք դադարում են յարկել ու վստահել իրենց ծնողներին, ամբողջ մարդկութեանը:

Էմիլ Ստեփանեանի գոյղը դեռ չի հասել այն եզրին, որտեղից արդէն սկսւում է ամուսնական դժգոհութիւնները: Գիտակից գոյղ է, այդ գոյղը: Թէ՛ տղամարդը եւ թէ՛ կինը աշխատում են ո՛չ միայն չբախուել, այլեւ, ընդհակառակն, մէջտեղից հեռացնել բախուելու առիթը:

«— Գուցէ անհրաժեշտ է որոշ ժամանակ չտեսնել միմեանց, կարօտել, — ասաց կինը:

«— Մեզ ոչ քէ հարկաւոր է հեռանալ, այլ՝ մօտեցալ, գտնել: Մենք, ըստ եթեւոյթիմ, ինչ-որ տեղ կորցրել ենք իրար:

*
**

Ես չզիտեմ, թէ այդ երկու պատմուածքներից բացի, ուրիշ էլ ինչ գործեր ունի Էմիլ Ստեփանեանը, բայց նորից եմ կրկնում, որ յանձինս

այդ երկու պատմուածքների, մենք զործ ունենք մի լուրջ գրողի հետ:

Մի գրականութիւն յաջող է հանարում ո՛չ միայն այդ գործի նպարդ լեզուի, ո՛չ էլ այն բանի համար, որ հեղինակը պատմել զիտէ, այլեւ այդ գործի հոգեբանական շաղախի եւ շողած ազդեցութեան համար: Եթէ ընթերցողը գործի ընթերցումից յետոյ մի կողմ է նետում տուեալ ստեղծագործութիւնը եւ անմիջապէս մոռանում իր կարգացածը, այդ գործը չի հասել իր նպատակին: Դրա հակառակն է ընթերցողի կրած ազդեցութիւնը այդ ստեղծագործութիւնից: Գրողը մի բան պէտք է յայտնի իր ընթերցողին: Անշուշտ, ոչ պրոպականդա, որովհետեւ արոպականդան միայն քարոզ է եւ ոչ գեղարուեստական խօսք:

Պէտք է քարոզը թողնել քարոզողներին: Նրանք շատ-շատ են եւ առանձին մի ճիգ էլ չեն թափում քարոզելու համար: Զջմարիտ գրողների թիւը քիչ է, ա՛յն գրողներին, որոնց գրական առարկան է մարդը: Ո՛չ թագաւոր մարդը, ո՛չ պետական գլուխ մարդը եւ ոչ էլ հերոս մարդը, այլ՝ շարքային, հոգսից ու կարիքից ճզմուած մարդը: Շարքային մարդը:

Ոչ ոք չի ցանկանում ճանաչել շարքային մարդուն: Ոչ ոքի հոգը չէ այդ մարդու մասին մտածելը: Սակայն գրողը պէտք է մտածի: Գրողի առաջին պարտականութիւնն է գրել շարքային մարդու մասին: Վերլուծել նրան, ներկայացնել նրա հոգին:

Արեւմուտքում այժմ դրական մի հոսանք է ստեղծուել, խօսելու համար մեծ քաղաքների բնակիչների մասին: Շարքային մարդը երբեք այնքան բացորոշ չի երեւում, ինչպէս մեծ քաղաքներում:

Սակայն վերադառնանք Էմիլ Ստեփանեանին: Ինչպէս նախապէս ասացի, այդ երիտասարդը, ըստ իս, տաղանդաւոր գրող է եւ ես յոյս ունեմ, որ կը շարունակի դարգացնել իր այդ տաղանդը: Նա գտել է իր նիւթը, իր ոճը եւ գրողին յատուկ ներթափանցումները:

Ես սրտանց շնորհաւորում եմ Էմիլ Ստեփանեանին, եթէ միայն սիրելուքահայ մի գրողի էրաւունք կը տրուի շնորհաւորելու հայաստանեան մի գրողի:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼՃԵՆԻՑԻՆ
(ՄԱՐԴԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ, ԳՈՐԾԸ)



Մի քիչ գեղարուեստական գրականութիւնը պէտք է կրկնի մարտական կանոնադրութիւնները. քերթերը կամ լոգունգները: ...Մեծ գրողը երկրում մի տեսակ երկրորդ կառավարութիւն է: Իրա համար էլ ոչ մի վարչաձեւ երբեք չի սիրել մեծ գրողներին, այլ՝ միայն փոքրերին:

Ա.Լ. ՍՈԼՃԵՆԻՑԻՆ

Ե.

Սոլժենիցինի «Առաջին շարժում» վէպը գրուել է 1955-1964 թուականների ընթացքում: 800 էջ ընդգրկող վէպը բաղկացած է 87 գլուխներից եւ հիմնականում վերաբերում է ճամբարային իրանութեանը, թէեւ այդ իրականութիւնը իւրայատուկ բնոյթ ունի:

Վերնագիրը վերցուած է Դանթէի «Աստուածային կատակերգութեան» Դրժոխքի 4րդ երկրից, որի մէջ նկարագրուում է Դժոխքի առաջին՝ ամենաբարձր ու լաւագոյն շրջանը, պարունակը: Այդ

շրջանում տեղաւորուած են հին աշխարհի անուանի գրողները, մտածողները եւ գործիչները, որոնք չեն կարող դրախտ մտնել, քրիստոնէական անսակէտից: Բայց Դանթէի նման մարդը չէր էլ կարող նրանց դնել մեղաւորների հետ նոյն դժի վրայ: Եւ Վիրգիլիոսի բերնով ասուում է, թէ որոշ սլարազայական պակասութիւնների, «այլ ոչ թէ ուրիշ մեղքի պատճառով է, որ կորած ենք մեք, եւ ուրիշ ոչ մի բան չի փնջում մեզ, քան այն, որ ապրում ենք առանց յոյսի, կարտով»:

Սոլժենիցինի վէպում դարձեալ ճամ-

բարային գժոխքն է, բայց՝ նրա ամենատանելի մասը: Այնտեղ ներկայացուում է պետական անվտանգութեան նախարարութեանը ենթակայ մերձմոսկովեան մի «յաաուկ կոնստրուկտորական բիւրօ», գուլագերէն՝ «չարաչկա», ուր հաւաքել են զանազան սովորական ճամբարներից բերած մասնագէտների ու գիտնականների՝ նրանց ուղեզը մինչեւ վերջ քամելու եւ յատուկ նպատակի ծառայեցնելու համար: Այդ նպատակն է՝ հետազօտել ու գտնել միջոցներ, որպէսզի քաղաքական ոստիկանութիւնը կարողանայ ունկնդրել ու մեքենայաբար արձանագրել հեռախօսային խօսակցութիւնները, ինչպիսիք էլ լինեն դրանք:

Յայտնի է, որ Սուլժենիցինն ինքը չորս տարի գտնուել է մի այգպիսի հաստատութեան մէջ եւ վէպում պատշաճ չափով ներկայացուում է Գլեբ Ներժինի կերպարով:

Նոյն ձեւով, այժմեան մոսկովեան գրող ու գրականագէտ Լեւ Կոպելեւը ներկայացուած է Լեւ Ռուբինի կերպարով, արգէն արտասահման գաղթած մըտաւորական Դմիտրի Պանինը՝ Դմիտրի Սուլոզգինի կերպարով, եւայլն: Հետեւապէս, գրողի իրազեկութիւնը հիմնուած է առաջին հերթին սեփական կենսափորձի վրայ:

Վէպի իմաստը ճիշդ ընկալելու համար պէտք է յիշել եւ «Իվան Դենիսովիչի մէկ օրը» վիպակը: Վիպակը եւս ճամբարային կեանքից է: Նւ այնտեղ ներկայացուում է ոչ թէ բանտարկեալի ամենավատ կամ սովորական, այլ «համարեա՛ երջանիկ» օրը, որով կարելի է կոահել եւ միւսները: Նոյն ձեւով էլ՝ վէպում ներկայացուում է «Գուլագ արշիպելագ»ի ամենաարտօնեալ անկիւնը, որից եւ կարելի է պատկերացնել սովորական տաժանավայրերի իրականութիւնը:

Սուլժենիցինի սոյն վէպի եւ առհասարակ նրա բոլոր երկերի ամենաառաջին յատկանիշը ճշմարտագրութիւնն է: Արուեստը, ի հարկէ, կայ, այլապէս իմաստ չէր ունենայ ներկայացուածը գրականութեան հաշուին գրանցելը: Բայց

ի՞նչ արժէք ունի գրչի արուեստը առանց հոգեւոր ճշմարտութեան, գէթ վերջինիս զուտ վկայաբանական մակարդակով: Մա՛նաւանդ այն երկրում, որտեղ ամենագաժան եղանակներով խեղդուում են թէ՛ բուն ճշմարտութիւնը եւ թէ՛ ճշմարտախօսներն ու ճշմարտագիրները:

«Բազմաձայն վէպի» սկզբունքի համաձայն, «Առաջին շրջանում» երկի մէջ եւս հեղինակը ամբողջ ուշագրութիւնը չի սեւեռում մէկ կէտի վրայ, այլ ստեղծում է «տարածութիւնների փնջի» համայնապատկերը, ներկայացնելով այլեւայլ կենսական տարածութիւններ: Վէպի առանցքային «նստավայրը» յայտնի է՝ Մոսկուայի Մաւրինօ (Իրականում՝ Մարֆինօ) արուարձանը: Իսկ գործողութեան բուն ժամանակը՝ 1949 թ. վերջին շաբաթը, աւելի ճիշդ՝ Դեկտեմբերի 24ից մինչեւ 27ը, ընդամէնը հազիւ չորս օր:

Տարածական ընդգրկման առումով, վէպում ներկայացուող իրադարձութիւնները կարելի է խմբաւորել երեք վիսաւոր ոլորտներում:

Առաջինը ճամբարն է:

Երկրորդը՝ պետական հաստատութիւնները:

Երրորդը՝ մոսկովեան քաղաքացիական առօրեան:

Ժամանակային լրացումների առումով՝ փաստօրէն սահմանափակում չկայ, քանի որ առիթ է լինում անդրադառնալու ո՛չ միայն խորհրդային, այլեւ՝ համաշխարհային պատմութեան այլեւայլ դրուագների: Բայց եւ այնպէս, ինքնին հասկանալի է, որ վիսաւոր ժամանակաշրջանը խորհրդային տասնամեակներն են, իրենց յարուցած յուշերով:

Վէպի բովանդակութեան հանգուցային դրուագները յիշատակելուց առաջ, ինչպէս նախորդ հատուածում, դարձեալ նպատակայարմար է թուարկել գլուխները, մօտաւոր պատկերացում կազմելու համար գրողի հեղինակային շնչառութեան ու նրա շօշափած ընդհանրաների վերաբերեալ: Աւելորդ է շեշտել, որ այժմ այնպէս վարուելը պիտի ճանաւորուած է ուսումնասիրութեան բնօրինակով, այլ ոչ

Թէ ընդհանուր դրականագիտական անհրաժեշտութեամբ կամ թելադրանքով:

Արդ, վէպի գլուխներն են. 1) Իսկ ո՞վ էք դուք. 2) Դանթէի գաղափարը. 3) Բողոքական ծնունդը. 4) Հիւզի-բուզի. 5) Խաղաղ կենցաղ. 6) Կանացի սիրտը. 7) Կա՛նգ առ, ակնթարթ. 8) Հինգերորդ տարուայ լծուածքը. 9) Ռոգեկրոյցները. 10) Կախարդական դղեակը. 11) Եօթնեակը. 12) Եւ հարկաւոր էր ուտել... 13) Կապոյտ լոյսը. 14) Աղջի՛կ, աղջի՛կ. 15) Ստախօսների երբեակը. 16) Ինչ վերաբերում է եռացրած ջրին. 17) Սիվկա-բուրկա. 18) Յոբելեարը. 19) Լեզուն արտադրութեան գործիք. 20) Վերադարձրէ՛ք մեզ մահապատիժը, Իոսիֆ Վիսարիոնովիչ. 21) Ծերութիւնը. 22) Անդունդը յետ է կանչում. 23) Նիկիտա Նահատակի եկեղեցին. 24) Փայտի սղոցումը. 25) Կրտսեր լէյտենանտի աշխատանքը. 26) Ենթագնդապետի աշխատանքը. 27) Տարակուսական ոտքուտը. 28) Ինչպէս կարկատել գուլպաները. 29) Թռչելով դէպի առաստաղ. 30) Տուգանային փայտիկներ. 31) Չայնատեսները. 32) Համբուրելը արգելուած է. 33) Չայնադիտակը. 34) Համբ ահագանգ. 35) Դաւաճանի՛ր ինձ. 36) Շատ հեշտ է ասել՝ տայգա. 37) Տեսակցութիւն. 38) Եւս մէկը. 39) Նաեւ երիտասարդների մօտ. 40) Կինը լուանում էր աստիճանները. 41) Իմպերիալիզմի գամփրոները. 42) Սուրբ Գրաւի դղեակը. 43) Նմանակը. 44) Կեանքը վէպ չէ. 45) Պառաւ աղջիկը. 46) Կրակը եւ դէզը. 47) Մեռեալների յարութեան կենացը. 48) Տապանը. 49) Խոխմա (դաւեշտապատում). 50) Դաւաճան իշխանը. 51) Աւարտելով 20րդ տարին... 52) Բանտային մանրուքներ. 53) Լիցեական սեղանը. 54) Բուդդայի ժպիտը. 55) Բայց խիղճն է՛լ է միայն մէկ անգամ տրոււմ. 56) Հրաւիրովի ընթրիք. 57) Երկու փեսաները. 58) Վայրի ցուրը. 59) Առաջի՛նք մտան ֆաղափները. 60) Մենամարտ՝ ոչ ըստ կանանի. 61) Ժողովրդի մէջ մըտնելը. 62) Սպիրիդոնը. 63) Սպիրիդոնի չափանիշը. 64) Բոունցիները սեղմելով. 65) Դոտտին. 66) Պողպատեայ թրի շեղ-

քը սուր. 67) Քաղաքացիական տանարները. 68) Անտոնի աշխարհափառացին. 69) Երկուշաբթու լուսաբացը. 70) Տակառը բակում. 71) Սիրելի արհեստը. 72) Ազատուած ֆարտուղարը. 73) Երկու ինժեներները. 74) 147 ուրբի. 75) Լաւատեսութիւն դաստիարակելը. 76) Լըրտեսների թագաւորը. 77) Ինչ վերաբերում է գնդակահարութեանը. 78) Էպիկուրի աշակերտը. 79) Իմ մասնագիտութիւնս չէ. 80) Գիտութեան ակունքների մօտ. 81) Ո՛չ, քեզ համար չէ՛... 82) Թող մտնողը յոյսը թողնի. 83) Պահպանել յաւիտեանապէս. 84) Երկրորդ շնչառութիւնը. 85) Ստրելեցեան (դինուորական) պատժի առաւօտը. 86) Մնաս բարով, շարաշկա. 87) Միսը:

Վէպն սկսւում է նրանից, որ երեսնամեայ դիւանադէա Իննոկենտի Վոլոդինը Մոսկուայում շտապ կարգով ուղղում է հեռախօսել ականաւոր բժիշկ Դորբոսովին ու յայտնել, որ զգուշանայ իր գլխին կախուած վաանդից եւ Փարիզում համաժողովի ժամանակ պաշտօնակիցներին խոստացած պաարաստուկը չյանձնի: Թէեւ «կուլտուրական կապերը» օրինական են եւ պատրաստուկը դադարիք չէ, իշխանութիւնը որոշել է բարեմիտ բժիշկին թակարդ դցել եւ դըրրգապէն «գործ սարքել»: Վոլոդինը այն քչերից է, ովքեր տեղեակ են դրան: Նա չի կարող պաշտօնատնից հազորդել, ուստի՝ շէնքից էլնում եւ հնարաւոր ըզդուշութեամբ հեռախօսում է քաղաքի մի այլ վայրից: Լսում է, բժշկի փոխարէն, մի կնոջ տարօրինակ ձայն: Չայնը փոխելով ու կցկտուր բառերով ասում է ասելիքը ու վերադառնում: Այնուհետեւ մենք Վոլոդինին տեսնում ենք մի քանի անգամ, իսկ վէպի վերջում էլ՝ տխրահոգակ Լուրիանկայի բանտում:

Մնացեալ մասերում մենք ծանօթանում ենք յատուկ ճամբարի գործունէութեանը, որը կայանում է նաեւ որեւէ հեռախօսային կապ արձանադրելու եւ խօսակիցներին յայտնարբերելու տեխնիկական միջոցներ մշակելու մէջ: Արտակարգ գործ, որով դբադուած են մասնադէտ տաժանակիրները: Քանի որ վէպի իրա-

գարձութիւնները տեղի են ունենում մի քանի օրուայ մէջ, գլխապտոյտ արսագութեամբ եւ գիշեր-ցերեկ, գործի վերջնական արդիւնքները անյայտ են մնում եւ արգէն կարեւորը դրանք չեն: Կարեւորը դրանով զբաղուած մարդիկ են, որոնց համար միակ խթանը ժամկէտից չուտ ազատուելու խայծն է, իսկ գործի կազմակերպման գրուածքը՝ տիպական խորհրդային:

Վէպն աւարտուում է այս կամ այն առումով «անհնազանդ» տաժանակիրների մի խմբի մեկնումով՝ դարձեալ գէպի սովորական համակենտրոնացման ճամբարներ, անյայտ ապագայով:

Ընթերցողը հենց երկրորդ գլխում ճամբարի բնակիչների հետ դիմաւորում է նորեկ «ընտրեալներին» եւ տեղեկանում, թէ խորհրդային երկրում ինչպէս է իրագործուում «Դանթէի գաղափարը»՝ Դժձխոնում «առաջին շրջան» ստեղծելու ուղղութեամբ (1930 թուականից ի վեր): Իշխանաւորները դիմել են այդ քայլին, որովհետեւ դրանից աւելի մեծ օգուտ են սպասում, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ խորհրդային թերթերի խմբագրականներում հռչակուում է այն իմաստութիւնը, թէ «ապացուցուած է, որ ոչխարների բարձր բրդաատուութիւնը կախուած է սընընգից եւ խնամքից»:

Ապա տեսնում ենք, թէ ինչպէս են տօնում մի քանի բողոքական դերի գերմանացիներ իրենց Մոնգեան տօնը, հայրենիքը յիշելով: «Ակուստիչեսկայա» աշտանոցում տեսնում ենք, թէ ինչպէս են փորձարկուում ձայներ որսալու եւ վերծանելու հետազօտութեան արդիւնքները, թեթեակի ծանօթանում ենք խմբի անդամներին ու նրանց բնաւորութեան գրծերին, ինչպէս եւ «չարաչկան» ստեղծելու պատմութեանը: Կալանաւորների կողքին, երեւում են եւ որոշ թուով ազատ աշխատողներ, քաղաքից եկող-գնացող, որոնք փաստօրէն եւ պաշտօնապէս՝ նոյնպէս «սեփական կազրեր» են իշխանութեան համար: Քանի որ կալանաւորները հիմնականում բարձր կրթութեամբ մտաւորականներ են, նրանց իւրաքանչիւր խօսք, ինչի՛ մասին էլ որ լինի,

մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացրնում, իսկ լուրջ զրոյցներն ու բանակուիւնները՝ առաւել եւս, իրենց հնացական լայն հորիզոններով: Այնպէս որ՝ վէպը միաժամանակ ընթերցողի տեսական հարստացման աղբիւր կարող է լինել, առանց զեղչի եւ արտակարգ չափով:

Ճամբարի ղեկավարութեան մէջ կան եւ նախկինում ճնշամիջոցների ենթարկուածներ: Իսկ կալանաւորների կողքին՝ ոչ վաղուց շնորհազրկուած նախկին իշխանաւորներ: Դրանցից իւրաքանչիւրի կեանքի պատմութիւնն իսկ մի վէպի նիւթ է: Բայց բոլոր կեանքերը ճարտարօրէն միահիւսուած ու խտացուած՝ ներկայանում են ո՛չ միայն սեփական պատմութեամբ, այլեւ՝ փոխադարձ պայմանաւորուածութեամբ, ճակատագրական ընթացքով: Վէպում ծանօթանում ենք ո՛չ միայն Եակոնով, Մամուրին, Ռոյաման եւ այլ անունների, այլեւ՝ նրանց քաղաքացիական ու հոգեբանական էութեանը, «արհեստական խօսքի գործիքի» եւ «խուզուած խօսքի» աշխատանոցների գործունէութիւնը մրցակցութեան դաշտ դարձնելու առընչութեամբ:

Վէպում յատուկ տեղ են բռնում «բարձր հիմնարկութիւններին» վերաբերող դրուագները: Ճամբարային հաստատութեան աշխատանքը արագացնելու, իսկ ապա նաեւ Վոլոդինի բռնուած ձայնը վերծանելու կապակցութեամբ՝ աշխոյժ երթեւեկութիւն է տեղի ունենում նախարարութեան ու ճամբարի միջեւ: Լինում են այցելութիւններ, հանդիպումներ, սպառնալիքներ ու պաշտօնազրկումներ, այլեւայլ մեքենայութիւններ:

Ահա եւ այդ առիթով ընթերցողը ծանօթանում է պետական անվտանգութեան նախարար Աբակովովին իր գրասենեակում եւ այլուր, մտնում նոյնիսկ Սաւլինի մեկուսարանը՝ տեսնելու համար նրա ներքին երեսը, կենցաղային ու աշխատանքային առօրեան: Աբակովովի մօտ են տարւում նաեւ րանտարկեալներ Պրեանչիկովին ու Բորինինը: Բախտակիցները յանձնարարում են առիթից օգ-

տըլեւել եւ իրենց ընդհանուր ցաւերի մասին բողոք յայտնել: Առաջին «պատուիրակը» ասելիքը մոռանում է: Երկրորդը, իր բնաւորութեան բերումով, համարձակօրէն ներկայացնում է օրական 12-16 ժամ աշխատող մասնագէտների դժուար կեանքը, պահանջում՝ գործի արդիւնք սպասելուց առաջ պայմաններ ստեղծել աշխատողների համար: Աբաղումովը սպառնում է աւելի ճնշել, եթէ առաջադրանքը չուտ չկատարուի եւ ինքը չկարողանայ ժամանակին Ստալինին զեկուցել: Բորինինը, ի դէպ, պատասխանում է. «Սխալում էք, քաղաքացի նախարար: Ես ոչինչ չուներ: Ազատութիւնը դուք ինձնից վազուց էք խլել, իսկ այն ինձ վերադարձնելը ձեր ուժերից վեր է, քանի որ դա ինքներդ էլ չուներէք»: Արակումովի եւ Ստալինի հանդիպումը խորհրդային իշխանաւորների «աշխատանքի ոճի» ցայտուն պատկերազարդումներից մէկն է:

Սուլժենիցինը, ըստ երեւոյթին, յատուկ «թուլութիւն» ունի ժողովրդական խաւերի պատկանող կերպարների հանդէպ: Նրա երկերում մեծ տեղ են բռնում ժողովրդական կերպարները՝ թէ՛ թուով եւ թէ՛ վայելած համակրանքով: Ներկայացուող վէպում եւս գրողը կանգ է առել դռնապան Սպիրիդոնի վրայ եւ նոյնիսկ մի քանի ամբողջական գլուխներ նուիրել նրան, հանգամանօրէն ներկայացրելով նրա նախապատերազմեան, պատերազմեան ու յետպատերազմեան ուղիները: «Ժողովրդի» անունով շատերն են երդուել ու երդւում, յաճախ էլ սեթեւեթելու կամ, ըստ օրուայ պահանջի, հաճոյանալու անմաքուր նպատակով: Սուլժենիցինի դիրքը պարզ է, նա ոչինչ չի գունազարդում, անկեղծօրէն խոստովանում է իր ըմբռնումների բնաշրջումը եւ մօտեցման բնոյթը: Նրա համակրանքով ներկայացուած կերպարները աչքի են ընկնում ո՛չ միայն պարզութեամբ ու անկեղծութեամբ, այլեւ՝ խորամտութեամբ, հաստատակամութեամբ, ջանասիրութեամբ, օրգանական մարդասիրութեամբ: Նրանց միտքը չի քայքայւում «զաղափարական» ոչ մի լուծոյթի աղբեցութեամբ,

ուստի եւ ամէնից շատ են տուժում: Գրողը մօտաւորապէս նոյնիսկ գծերով է օժտել նաեւ ճամբարի պահակախմբի կրտսեր լէյտենանտ Նազելաչինին, որը ո՛չ միայն չի չարաշահում իր դիրքը, այլեւ օգտակար է լինում բոլորին, որքան կարող է: Ուստի՝ միշտ մնում է «կրտսեր», ուրիշներին թողնելով «աւազ» եւայլն լինելու պատիւը:

Կալանաւորների կեանքում տաժանելի է ո՛չ միայն անձամբ իրենց վիճակաւ՝ մահուան ճանապարհներով քարշ գալու ճակատագիրը, այլեւ՝ «ազատութեան» մէջ գտնուող հարազատների հետ տարրական կապ պահելու հնարաւորութիւնից զուրկ մնալը: Ամէն ինչ արւում է իշխանութիւնների կողմից այդ կապը կտրելու, զոհերին աւելի նսեմացնելու ուղղութեամբ: Որքան էլ հեռու լինեն կալանաւորները իրենց հարազատներից՝ տասը թէ՛ տասը հազար կիլոմետրով, «օրէնքը օրէնք է»: «Առաջին շրջանում» վէպում կեանքի այդ կողմը եւս պատկերւած է՝ մի խումբ կալանաւորների տեսակցութեան տարուելու պատմութեան կապակցութեամբ, միաժամանակ թէ՛ զուարճալի եւ թէ՛ ողբալի, քանի որ, ըստ երեւոյթին, ողբալին անկարելի է մարսել՝ առանց զուարճալի որեւէ բաժին պարունակելու:

Կալանաւորների տեսակցութեան տարուելու կապակցութեամբ, ներկայացւում է եւ «հակառակ կողմի», այսինքն՝ այցելուների կացութիւնը: Եւ քանի որ Ներժինը եւս անսպասելիօրէն թոյլտուութիւն է ստացել խմբին միանալու, մենք ծանօթանում ենք գիտական ասպարէզի պատրաստուող մի խումբ երիտասարդ աղջիկների հետ՝ իրենց հանրակացարանում, որտեղ ապրում է եւ Ներժինի կին Նադիան, որը, սակայն, վախենում է նոյնիսկ ոեւէ մէկի յայտնել, թէ ամուսին ունի, այն էլ կալանաւոր, որովհետեւ նման «բացայայտման» հետեւանքները կարող են ճակատագրական լինել: Այդ ծանօթութեան ընթացքում պարզւում են նաեւ բազմաթիւ ճակատագրեր, բնաւորութիւններ ու հոգսեր, ժամանակի մթնոլորտը փոխանցե-

լու՛ր ընթերցողին: Այդտեղ եւս երեւում է խորհրդային իրականութեան երկու կողմը՝ արտաքին եւ ներքին: Դրսից համակերպում, ներսից որոնումներ: «Ո՛չ, աղջիկներ, կեանքը վեպ չէ», — իր ընկերուհիներին միշտ յիշեցնում է ասպիրանտուհի Դաշան, իր սեփական կեանքի փորձից իմանալով, որ իրական կեանքում շատ աւելի բարդութիւններ կան, քան կարելի է ձեւակերպել խօսքով կամ թղթի վրայ: Երիտասարդ աղջիկները կարծես թէ արդէն գիտակցում են, որ ո՛չ միայն իրենց անձնական հոգսերն են ծանրանում, այլեւ անսահման կեղծիքների են բախում գիտութեան ասպարէզ մտնելու շեմին: Եւ այդ պարագան նըրանց թէ՛ սթափեցնում եւ թէ՛ վհատեցրնում է:

Նոյն հանրակացարանում երեւում է եւ զինուորական շինելը (գրատը) ուսերին՝ հինգ տարի ռազմաճակատում զրոնրած սակրային կապիտան Շչագովը, այժմ գիտութեան թեկնածու, որը բաւական ցայտուն կերպար է, կոփուած, իրականութեան բոլոր կողմերը տեսնող մի մարդ: Նա բոլոր զինուորականներին ու նաեւ մարդկանց երկու խմբի է բաժանում՝ ռազմաճակատի առաջին գծում գտնուածների եւ չգտնուածների: Եւ, բնականաբար, պաշտում է առաջիններին: Սրամիտ է, հեշտութեամբ տարբերում է ճիշդն ու սուտը, տեսնում խորաուրբորութիւնները, բայց միաժամանակ զիտի, որ ինքը ի վիճակի չէ ազդել կեանքի ընթացքին, մնում է միայն ինքնավարութիւնը պահել: Նազիայից տեղեկանալով, որ Ներժինը ողջ է ու կալանաւոր, անմիջապէս մի շիշ ու բաժակներ է բերում եւ իր բաժակը բարձրացրնելով պոչում. «Դէ՛, զինուորի՛ կից, մի՛ վիատուիր: Բաժակը բռնիր: Թող գլուխը ողջ լինի՛ երջանկութիւնը կը գայ: Խմե՛նք մեռեալների յարութեան կեանքը»:

Յատուկ ճամբարում կալանաւորների կեանքի մաս է կադմում եւ զուարճական ինքնադործունէութիւնը, երբ ամէն առիթ օգտագործւում է, անտեսելով պե-

տերի ու լրտեսների հակողութիւնը, պահը աշխուժացնելու համար: Նման զուարճաստեղծ տեսարաններից մէկն է նըրանաւոր «Ասֆ Իգորի գնդի մասին» աւանդական զրոյցի հերոս՝ 12րդ դարում ապրած Իշխան Իգորի «դատավարութիւնը» «Մաւրինոյի շարաշկայի զինուորական ատեանի» կողմից, յուրախութիւն ու նաեւ ի տխրութիւն հանդիսականների: Կատակը կատակ: Բայց այդ միջավայրում կատակը դառնում է եւ պատմաբանասիրական արտակարգ հետազօտութիւն, խորհրդային օրէնսդիրքն ու աշխարհահայեացքը վերլուծելու ցոյց: Պատկերը լրացնում է ծերունի մաթեմատիկոս՝ պրոֆեսոր Չելնովի անակնկալ միջամտութիւնը, իր այդ տեսարանին յարմար մեղադրական «լուսաբանութիւններով»:

Նոյնքան զուարճալի ու նոյնքան ուսանելի բովանդակութիւն ունի եւ Ներժինի ծննդեան օրը նշելու համար մահճակալների արանքում հաւաքուած եօթը հոգու առջեւ պատմուած՝ «Զգրուած նովելան», որը 1946 թ. ամրանը Բուտիրեան բանտում յօրինել են Ներժինը եւ էլեկտրադէտ-ինժեներ Պոտապովը միասին: Պոտապովը պատմում է «Բուդդայի ժպիտը» բանաւոր շարագրանքը, քանի որ զրելու մատիտ չեն ունեցել: Պատմութիւնն այն մասին է, թէ ինչպէս ՄԱԿի յանձնաժողով է ուղարկւում Մոսկուա խորհրդային կեանքին ծանօթանալու համար, «Տիկին Ռ. ի» գլխաւորութեամբ: Խօսքը, ուրեմն, Ռուզվելտի կընող մասին է: Տիկինը կամենում է եւ բանտ այցելել: Բանտի ղեկավարութիւնն անմիջապէս հակառակ տեսքի է բերում «72րդ բանտասենեակը», եկուորների քրթին խնդալու համար, եւ դիւանագիտական բոլոր միջոցներով «գոհացում տալիս» տիկնոջ եւ ուղեկիցների հետաքրքրասիրութեանը: Այդ ներկայացումից յետոյ՝ «Եւ միայն որսնախորշում, մոռացուած, հանելուկային ձեւով ժպտում էր փոքրիկ բրոնզէ Բուդդան»: Ի հարկէ, կարեւորը նման այցելութիւն լինել-չլինելու մէջ չէ, այլ՝ դեղարուեստական

երգիծանքով առկայ իրականութիւնը հաւատարմօրէն մարմնաւորելու տազանդի:

Վէպի հանգուցային դրուագներից է գատախաղ Մակարիգինի տանը կազմակերպուած խնճոյքը, Լենինի երկրորդ շրջանչան ստանալու առթիւ: Խնճոյքը ուշագրաւ է իր բաղմամարդութեամբ եւ ներկաների ուղղակի ներկայացուցչական հանգամանքով, երբ իւրաքանչիւրի միջոցով արտայայտութիւն է գտնում մարդկային մի իւրայատուկ իրականութիւն: Այնտեղ են նաեւ, ի շարս այլոց, գատախաղի երեք գուտրերը, երկու փեսան, Շչագովը, նոյնպէս գատախաղ՝ զօրավար-մայոր Սլովուտան, սերր երբեմնի պրոֆեսոր Գուշան Ռագովիչը, գրականագէտ Լանսկին: Նրանց միջեւ տարբեր մակարդակի զրոյցներ են ծաւալուում, որոնք դառնում են գեղարուեստական վրկայութիւն ժամանակի վերաբերեալ:

Բայց տուեալ գէպքում թերեւս ամէնից հետաքրքրականը երկու փեսաների զրոյցն է: Դրանցից մէկը Վոլոդինն է, իսկ միւսը՝ «յայտնի գրող Նիկոլայ Գալախովը»: Խորհրդային իրականութեանը ծանօթ ամէն ոք հեշտութեամբ կարող է կռահել, որ Գալախովի անուան տակ ներկայացուում է Կոնստանտին Սիմոնովը: Երկու քենեկալները վիճում են մեղմ, բայց որոշակի դիրքերից: Վոլոդինը քըննադատում է խորհրդային գրական բարքերը:

«Մի՞թէ գեղարուեստական գրականութիւնը պէտք է կրկնի մարտական կանոնադրութիւնները, թերթերը կամ լուգունգները: ...Մեծ գրողը երկրում մի տեսակ երկրորդ կառավարութիւն է: Դրա համար էլ ոչ մի վարչաձեւ երբեք չի սիրել մեծ գրողներին, այլ՝ միայն փոքրերին»:

Գալախովը հպարտ է, որ պատերազմի ժամանակ եղել է զինուորական թրղթակից եւ մայորի կոչում ունի: Այդ հոզի վրայ խօսակցութիւն է բացուում: Ոգեւորուած սկսում են խմբով երգել մի երգ: Իսկ Շչագովը, միշտ ռազմաճակատում լինելով, իր մէջ համոզուած է, որ

զինուորական թղթակիցներին վերազըրուող հերոսական ոգին չի համապատասխանում իրականութեան, նրանք մեծ մասամբ երբեք «առաջինը չեն մտել քաղաքները», այլ դտնուել են զօրքերի դումակներում եւ այնտեղից նիւթեր պատրաստել, նոյնիսկ ամէնից համարձակները: Ուշագրաւ է նաեւ, որ չնայած Գալախովի օրինապահական ջանքերին, նա եւս կարծես թէ խորքում հասկանում է իրականութեան ու դրականութեան տարբերութիւնը, բայց՝ բարեկեցութիւնն ու փառքը աւելի գնահատում:

Ինչպէս խորհրդային ամբողջ աշխարհում, այնպէս էլ ու, մա'նաւանդ՝ բանտերում եւ համակենտրոնացման ճամբարներում, կարեւոր տեղ է բռնում լըրտեսների դասակարգի գործունէութիւնը: Այդ դասակարգը համալըրում, ձեւաւորում եւ գործի է մղում զանազան եղանակներով, խայծերի կամ ճնշումների միջոցով: Եւ կալանաւորները աստիճանաբար աչալըջութեան են վարժուում ո'չ միայն կալանավայրերի տէրերից, այլեւ՝ բանտային ճակատագիրը բաժանող երկերեսանիներից պաշտպանուելու համար:

Մաւրինոյի ճամբարը բացառութիւն չի կազմում: Բաւական չէ, որ անմեղ մարդկանց զրկել են կեանքի բնական ճանապարհից, հիմա էլ հետեւում են նըրանց իւրաքանչիւր քայլին ու խօսքին, արձանագրում, կրկնակի հաշուեյարդար տեսնելու նպատակով: Այդ գործը կազմակերպւում է սահմանուած ձեւով, մայոր Միշինի դըխաւորութեամբ: Վէպում նկարագրուում է մեծ ու փոքր լրտեսներ հաւաքադրելու արուեստը: Եւ դրա դիմաց, ցոյց է տըրում նաեւ կալանաւորների հակադդեցութիւնը, որոնք իրենց հերթին այլեւայլ հնարագիտութիւնների են դիմում ծպտեալներին մերկացնելու ուղղութեամբ: Այդ ասպարէզում եւս ժամանակի ընթացքում փորձ է կուտակուում, փոխանցուում ուրիշների, դառնում ինքնապաշտպանական գիտութիւն ու մըշակոյթ:

«147 ռուբլի» գըլխում հենց այդ նիւթն

է արծարծուում : Ակամայից թակարդ ընկած եւ հաւաքագրուած երիտասարդ Ռուսկա Դորոնինը, խիղճը հանգստացնելու համար, մերձաւորներին խոստովանում է, թէ չարքային գործակալներին ամսական այդքան են վճարում՝ դրսից փոստով դրամ ստանալու անուան տակ : Այդ «նշանի» հիման վրայ, համարձակները հաւաքուում են դրասենեակի ճանապարհին եւ ելնողների կտրօնների պարունակութիւնը ստուգելով ճանաչում վարձկաններին : Յանցը մասամբ բացուում է եւ ղեկավարութիւնը շփոթութեան է մատնուում : Դորոնինը դրա համար չարաչար տուժում է : Բայց ընթացողի առջեւ ներկայանում է մի յատկանշական աշխարհ :

Մայր Միշինի տնօրինութեան տակ է գանուում եւ «լաւատեսութիւն դաստիարակելու» գործը, քանի որ նրա ձեռքով են անցնում ուղարկուող ու ստացուող նամակները : Նրա կամքից է կախուած նամակները հասցէատիրոջը հասցնելը : Նա մայր Շիկինին նախանձում է նրա ուրիշ արտօնութիւնների համար, բայց այդ բնագաւառում միանգամայն լիազօր է եւ ջանասիրաբար փորձում է իր կարողութիւնները «դաստիարակութեան» ասպարէզում : Վէպում ներկայացուող օրինակները չեն կարող չյարուցել զուարճախառն ցաւ :

Ինչպէս որ իր տեղում ասուեց, վէպի աւարտական դրուագներից է երիտասարդ դիւանադէտ Վոլոգինի ձերբակալութիւնը : Այդ՝ «էպիկուրի աշակերտը» թէեւ հողերանօրէն պատրաստուած է իր վիճակին, այնուամենայնիւ բաւական արտասովոր հանգամանքներում է լուրբիանկա ընկնում, երկար ժամանակ պաաահածր կատարեալ թիւրիմացութեան վերադրում : Հեղինակը ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է բանտ ընդունելու արարողութիւնները : որոնք դասական են մեծ ու փոքր բոլոր կալանատուրների համար : Պարզ է, որ տարբեր կալանաւորներ տարբեր ձեւով կարող են ընկալել այդ արարողութիւնները : Բայց այդ բոլորի յաջորդական կարգն ու ամ-

բողջութիւնն իսկ հիմնական մթնոլորտ է նշանակում, որը տատանուելով չի փոխուում :

Այդ դրուագում առանձին կարեւորութիւն են ստանում Վոլոգինի խոհերը, որը ունէր աշխարհային բոլոր բարիքները հանգիստ վայելելու լրիւ հնարաւորութիւն, միայն թէ՛ սեփական աչքերն ու ականջները փակէր ու խցէր : Բայց նրա մէջ արթուն էր եւ արդարութեան զգացումը, որից հրաժարուել անկարող էր : Գիշերային անքնութիւնը, մտահոգութիւններն ու խոհերը միաժամանակ վարժեցնում ու ամրապնդում են նրան. «Մի մարդու մէջ, որը չէր քնել գիշերը, չէր կերել, մի տասնեակ ժամի մէջ բեկուած կեանքով, բացում էր բարձրագոյն թափանցումը, բացում էր այն երկրորդ շնչառութիւնը, որը մարգիկի քարացող մարմնին վերադարձնում է անխոնջութիւն ու թարմութիւն» : Վոլոգինն աւելի քննական աչքերով է նայում աշխարհին ու պատմութեանը :

Բնականբար, սովորական ճամբարներ ուղարկուող կալանաւորների հրաժեշտի արարողութիւնը չի կարող խորհրդային բնոյթ չկրել : Մեկնողներից խլում է ամէն ինչ : Տուժողները բողոքում են եւ վէճեր են յարուցում : Ներժինը մայր Շիկինից պահանջում է վերադարձնել Եսենինի բանաստեղծութիւնների գիրքը, քանի որ այն ապուել է 1940 թուին, այլ ոչ թէ 1917-1938 թուականներին, հեռեւապէս չի մանում անպայման արգելուած գրքերի ցանկը : Նոյն ձեւով իրենց իրաւունքն են փորձում պաշտպանել միւսները, թէեւ «հրահանգ կար, որ յատուկ բանտից մեկնողները իրաւունք չունեն իրենց հետ տանելու գրքուած, նկարուած կամ տպուած ոչ մի թուղթ. ուստի՝ բանտարկեալների մեծ մասը նախօրօք այրել էին բոլոր նամակները, ոչնչացրել իրենց մասնագիտութեան վերաբերեալ նշումների տետրերը եւ պատուել գրքերը» : Ինժեներ Ռոմաչեւը, որը վեց ամսից յետոյ պիտի ազատուի, կորցնում է տասնամեայ ջանքերի արդիւնքը՝ զուտ մասնագիտական գրա-

ուումների կապոցը: Սեռմուշկինը ուղում է ամէն դնով պահել Լերմոնաովի փոքրիկ հատորը, իրրեւ իր եւ կնոջ ընտանեկան սրբութիւն, բայց չի յաջողում: Այն ժամանակ յուսահատօրէն ու դողալով, արտասուելով ու դողալով, պատրտում է դիրքը, ասելով՝ «Ահա՛, առէ՛ք, լափեցէ՛ք, պայթեցէ՛ք»: Մեկնողներից խլում են նաեւ հագուստներն ու կօշիկները, «ինչ որ աւելորդ է»: Քսան բանտարկեալներ խցկում են ծածկուած մեքենայի մէջ:

Ասելիքը դսպել չկարողացող բանտարկեալ Խորրորովը «չարաչկային» ակնարկելով բացականչում է.

«Այս ի՞նչ դժոխք է»: «Ո՛չ, Իլեա Տերենտիչ» — արձագանգում է Ներժինը, — սա դժոխք չէ: Դժոխք մենք գնում ենք: Դժոխք մենք վերադառնում ենք: Իսկ շարաշկան դժոխքի բարձրագոյն,

(Շար. 5)

լաւագոյն, առաջին շրջանն է: Սա գրեթէ դրախտ է...»:

Այո՛, մեկնողներին սպասում էին տայգան ու տունդրան, ցրտի բեւեռ Օյմեակոնը եւ Ջեզկադդանի պղնձահանքերը: Նրանց դարձեալ սպասում էին քրլունդն ու ձեռնասայլակը, հում հացի սովաբաժինը, հիւանդութիւնը, մահը: Նրանց սպասում էր միայն վատթարը, — վկայում է վէպի վերջում:

Իսկ Փրանսիական «Լիրերասիոն» թերթի թղթակիցը, «Դինամօ» մարզադաշտ դնայիս, նոյն Փուրդոն-մեքենայի վրայ կարդացել է ռուսերէն, Փրանսերէն, գերմաներէն եւ անգլերէն գրուած «Միս» բառը՝ «Մեասօ-Վիանդ-Ֆլայշ-Միթ», դրանից եզրակացնելով, թէ՛ «մայրաքաղաքի մատակարարումը չի կարելի դերազանց չհամարել», իսկ ասլա նոյն ոգով թղթակցութիւն յղել իր թերթին:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ



Փարաջանովի հարցը, ինչպէս ցոյց կու աայ Փարիզի «Լը Մոնտ»էն թարգմանուած դիմացի դրութիւնը եւ անոր հետեւող Ֆրանսերէն նամակին լուսանկարչական պատճէնը, հետզհետէ աւելի ծաւալ կը ստանայ եւ ամէն օր մտաւորական նոր դէմքեր կ'աւելնան հայազգի մեծանուն արուեստագէտը ճամբարային թիապարտութենէն ազատելու միտող պայքարին մէջ:

Հայաստանի մտաւորականները, որոնք պատիւ բերող թափանցամտութեամբ մը դիտցան դնահատել Փարաջանովի արուեստը, ցաւօք, ի վիճակի չեն ձայն բարձրացնելու, պիտի հասկընանք սակայն, որ «Նոսան գոյնը» անուն ժապաւէնին նուիրած իրենց վերլուծումներուն խորութիւնը առ այդ լուեկայն պարտք մը կը դնէ արտասահմանի մտաւորականութեան ուսին:

Այդ ուղղութեամբ դործնական քայլ մը առնուած է արդէն, — Ֆրանսերէն նամակը, որ Փարաջանովի օգտին կազմուելիք հատորի մը համար կը պահանջէ «Բագին»ի մէջ լոյս տեսած նիւթերուն աւարկայական ամբողջութիւնը:

Պատրաստած ենք եւ շուտով ճամբայ պիտի հանենք մեզմէ պահանջուած թղթածրարը: Պիտի ուզէինք միայն, որ ուրիշներ եւս աշխատակցէին նախաձեռնուած հատորին, նոյն հասցէին զրկելով Փարաջանովի մասին իրենց տրամադրութեան տակ դանուած ամէն նիւթ, որպէսզի հատորը աւելի ամբողջական ըլլայ ու նպատակասլաց...

Փարաջանովը ժխտում է մերկ փաստի կինեմատողրաֆը: Նա հրաժարուեց իր հասցէնով աւսած «չատախօս» կինոյից, եկաւ հաստատելու, որ ամէն ինչ բացատրող համատարած հիւանդութեան մէջ շատ անգամ համարեա՛ ոչինչ չկայ բացատրելու... Եկաւ հաստատելու, որ լիակալան Ֆիլմը յայտնի, ընդունուած ճշմարտութիւններէ ղեղարուեստական ձեւաւորումը չէ, այլ մի նոր, անծանօթ ճշմարտութեան բացայայտում, որը ծնուած է էկրանի իրականութեան մէջ եւ սուրբ-պում է հանդիսատեսին հաւատալ իր իսկութեանը: Անյայտի ճանաչում:

ՖՐՈՒՆԶԻ ԴՈՎԱԹԵԱՆ

Արուեստագէտի տաղանդը Փարաջանովը ցուցադրել է ո՛չ միայն իր նախորդ կինոնկարներում, այլեւ՝ հենց «Նոսան գոյնը»ի առանձին հատուածներում: Ստեղծագործական երեւակայութիւնը տեղ-տեղ զարմացնում է հետաքրքիր ու անակրկալ լուծումներով, դունային զարմանալի զգացողութեամբ, երևոյթների սիմվոլիկ իմաստաւորմամբ, ընկալումների ու արտայայտչաձևերի թարմութեամբ, որոնք ինքնին ուսանելի են:

ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆ

Հայ միջնադարը աւելի շատ զգացողութիւն է ուժիտորի համար, քան պատմութիւն: Իսկ ամբողջութեան մէջ կինոնկարի հերոսը զարմանալի արագ եւ զարմանալի խոր զգացուած, ապրուած հայ միջնադարն է, ժամանակի եւ տարածութեան դիսաւոր յատկանիշներն ունենալով հանդերձ՝ ժամանակի եւ տարածութիւնից դուրս: Ինքը՝ Սերգէյ Փարաջանովն է ստեղծում այդ ժամանակն ու տարածութիւնը վաւերական հիմքի վրայ:

ՍՈՒՐԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ֆիլմի խորագիրն է «Նոսան գոյնը»: Դա նատիւրմորտային բնոյթ ունի, եւ Ֆիլմի հենց այդ կողմն է հրապուրիչ:

Միայն ա՛յդ կողմը: Ոչ: Եթէ կ'ուզէք, այս Ֆիլմը պէտք է պահել նոյնիսկ երկիւղածութեամբ, ինչպէս հանճարի բզկտուած ձեռագիր: Այստեղ իր տաղանդի հետքերն է թողել մի օպերատոր, որ կարողացել է հետեւել հեղինակի բատոր, որ կարողացել է հետեւել հեղինակի խենթ ու անզուսպ երեւակայութեանը եւ մի նշկտրիչ, որ ձեւ ու դոյն է առել նրա պատկերներին: Հեղինակն էլ նկարիչ է, եւ Ֆիլմը յագեցուած է նկարչականութեամբ: Կարծես այն ստեղծուել է միայն վրձնով: Այստեղ կտաւի վրայ շէտտուած ներկեր կան եւ դժեր, երկրաչափական ուղիղ եւ զուսպ դժեր: Այստեղ կայ կ'արար թարմութիւն, կայ օդ ու լոյս, եւ դա մի «փանջարա» է, որից մեր կինոյի հեռուներն են ուրլաղծւում:

ԱՐՏԱՇԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՅԱՆՈՒՆ ՓԱՐԱԶԱՆՈՎԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

«ՀՐԵՂԷՆ ՁԻՅՐ»ԷՆ ԴԷՊԻ ՊԱՅԹԱԾ «ՆՈՒՈՒՅՐԸ»

Հայ բեմադրիչ Սերժ Փարաջանովի «Նոան գոյնը» անուն երկրորդ ժապավենը վերջերս ցուցադրուեցաւ Օլէմփիքի մէջ՝ «Ճնշումի դէմ Միջազգային Յանձնախումբ»ին կողմէ:

1966ին, Ֆրանսայի մէջ ցուցադրուած իր «Հրեղէն ձիեր» ժապավենէն ետք, Խորհրդային Միութեան ամէնէն նշանաւոր բեմադրիչներէն մէկը նըկաաուած այս արուեստադէտը, 1973էն ի վեր, բանտ կը դտնուի:

Իր կողմէ պատրաստուած բազմաթիւ կարճ ժապավեններ մերժուած են, ինչպէս հատ մը՝ Քիւելի մասին, ծրագիր մը՝ ուղբանացի դրող Քոցիուպինսկիի բանաստեղծութիւններէն թելադրուած, եւ ուրիշ մը՝ Պուշկինի մէկ քերթուածէն ներշնչուած:

Մերժուած են նոյնպէս ինքնակենսագրութեան իր վճռաձեռը՝ «Խոստովանութիւն»ը եւ հայկական առասպելէ մը ներշնչուած «Արա Գեղեցիկ»ը:

Իր ամբաստանութեան պատճառները միշտ փոփոխութեան կ'ենթարկւին. Առաջին անգամ միասեռականութեամբ ամբաստանուեցաւ, յետոյ՝ սըրբանկարներու մաքսանենդութեամբ, եւ վերջերս ալ՝ «կիներ եւ երեխաներ բոնաբարած» ըլլալու յանցանքով:

Դատաւարութեան միւրը բնաւ չէ հրաաարակուած:

Այնպէս կ'երեւի, որ Փարաջանովի մտքի թէ ներշնչումի աղատութիւնը, ինչպէս նաեւ հայ մշակոյթին հանդէպ ունեցած իր բացառիկ սէրը, որոշ դեր խաղացած են իր ձերբակալութեան եւ դատապարտութեան մէջ:

**

«Ճնշումի դէմ Միջազգային Յանձնախումբ»ը ստեղծուած է Մարա 1976ին, Լէոնիա Փլիուշի եւ Ժան-ժաո Մարիի նախաձեռնութեամբ:

Թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի մէջ բանեցուող ճնշումներուն դէմ բողոքելու կոչուած այս յանձնախումբը կը բաղկանայ միջազգային դէմքերէ, որոնց մէջ կը դտնուին սեմտիքայակտններ, Մարդկային Իրաւանց Լիկայի անդամներ, ինչպէս՝ Տանիէլ Ժաքոպի, Լուի Ասթր, Լորան Շուարց եւ Ժիրի Փելիքան:

Այս յանձնախումբը արդէն պայքարած է Փերուի, Արժանթինի, Խորհրդային Միութեան, Չեխոսլովաքիոյ եւ Լեհաստանի մէջ բանեցուած ճնշումներու դո՛ս մարդոց ի նպաստ:

1976 Դեկտեմբերին, ան նախաձեռնած է Փարաջանովի փրկութեան համար մղուող պայքարին եւ տրդէն յաջողած է մէկտեղել արուեստադէտներու եւ բեմադրիչներու երեք հարիւր ստորագրութիւններ, ի շարս որոնց՝ Ժան-Լուի Պատո, Ալէն Քիւնի, Փիեռ Փրելէր, Մատլէն Ռընս եւ Ֆրանսուա Թրիւֆօ:

Փարաջանովի գործին ծանօթացումը միջոց մըն է՝ պայքարելու համար ստեղծագործական ազատութեան եւ բանտարկեալ արուեստագէտին ազատութեան օգտին:

Պայքարի այս ճամբուն վրայ է, որ Յանձնախումբը Օլիմպիքի մէջ ցուցադրած է «Նռան գոյնը» անուն ժապաւէնը: Այդ ցուցադրութեան առիթով փութացած 1500 ներկաներէն հինգ հարիւրին համար կարելի չէ եղած տեղ դանել: Հետեւաբար, Յանձնախումբը կը խոստանայ վերստին ցուցադրել «Նռան գոյնը», այս անգամ աւելի ընդարձակ սրահի մը մէջ: Նաեւ կը ծրարէ ռադիոգործիւն տուած անձնաւորութիւններէն բաղկացած պատուիրակութիւն մը ուղարկել Խորհրդային Միութիւն՝ պահանջելու, որ ազատ արձակուի բեմագրիչը:

*

**

Գրաքննութեան կողմէ կրճատուելէ ետք հրատարակ հանուած այս երկար ժապաւէնը, դժբախտաբար, անծանօթ է խորհրդային հասարակութեան: Պատկերներուն յանդգնութիւնը, ինչպէս նաեւ թեքնիքին նորութիւնը հաճելի չեն թուացած իշխանութեան, որ չկարենալով գնահատել անոր գեղեցկութիւնը, գործը համարած է ազգայնական, վնասակար ու քանդիչ:

«Նռան գոյնը» ծաւալուն պատկեր մըն է, նուիրուած՝ ժողովրդական բանաստեղծ Սայաթ-Նովային, որ ապրած է ԺԸ. դարուն եւ համբաւաւոր անուն մը դարձած է ամբողջ Կովկասի մէջ: Սայաթ-Նովային կեանքը արապայտամիջոց մըն է Փարաջանովի բանաստեղծական տեսիլքներուն համար. ո՛չ մէկ շարժում կայ անոր մէջ. ներկայացուածը խորհրդանշական պատկերներու շարք մըն է, ներշնչուած՝ հայկական աւանդութենէն...:

Փարաջանովի արուեստը պարսկական մանրանկարներու չափ ճշգրիտ է ու մեկին:

Նայուածքը երկարօրէն կը կեդրոնանայ հարուստ գորգերով ծածկուած վանքերու սպիտակ պուտերուն վրայ: Բեմագրիչին խոհը կը հետեւի դանդաղ եւ համընթաց կշռոյթի աւանդական կեանքին, ուրիշ խօսքով՝ հիւսելու արուեստին կամ կամնող կովերու ծանր քալուածքին: Շարժումները եւ առարկաները կը գտնեն իրենց նուիրական արժէքը. խաղողի ողկոյղ մը, որ կը ճզմեն, ճաթած երեք նուռեր՝ ճերմակ կտորի մը վրայ: Խորհրդանշաններ՝ ամբողջական եւ անարատ կեանքի մը, զոր կ'երդէ բանաստեղծը:

Մեզի հասնողը Սայաթ-Նովայի՞ թէ Փարաջանովի ձայնն է արդեօք, որ կու գայ հեռաւոր աքսորէն...

Յ. Լ.

(«Լը Մոնտ», 23 Յունիս 1977)

COLLECTIF SERGUEI PARADJANOV

33, boulevard Philipon. 13004 Marseille. FRANCE.

Marseille le 15 juin 1977.

Chers amis,

En France l'action en faveur de Serguei Paradjanov s'intensifie de jour en jour. Devant l'intérêt grandissant de l'opinion publique, nous avons décidé l'édition d'un livre sur Paradjanov. Cet ouvrage destiné à une information la plus large possible (en français) rassemblera, outre des extraits de presse relatifs à la détention arbitraire de Paradjanov, des textes d'origine diverses consacrés à des témoignages ou à des analyses sur l'oeuvre de Paradjanov.

Au cours de nos recherches nous avons découvert quelques articles parus dans Pakine. Nous nous permettons de nous adresser à vous, afin d'avoir des éléments plus précis:

-Pakine-Avril 1974. N°4:

.pages 50,51,52,53: ces commentaires sur Sayat Nova proviennent d'où ? Peut-on avoir des précisions sur leurs auteurs ?

.page 54: Quelle est la provenance de ce texte de Paradjanov? Dans quelle langue a-t-il été écrit et pourrait-on avoir la version originale? De quelle année date-t-il?

-Pakine-Janvier 1975. N°1:

pages 63,64: Pourrait-on disposer des épreuves originales de ces deux photos, ou sinon des documents destinés à la reproduction?

Ormis les numéros déjà cités et ceux de Décembre 1974, N°12, Juillet 1975 n°7 et Aout 1975 n° 8, d'autres articles sur Paradjanov sont-ils parus ? Dans quels numéros?

D'autre part nous vous serions très reconnaissants de bien vouloir nous transmettre ou nous indiquer tout autre documents (textes, manuscrit, photos...) relatifs à Paradjanov, dont vous ayez connaissance.

Nous nous permettons d'insister sur l'urgente nécessité de ces informations. Ayez l'amabilité de nous répondre aussitôt que possible.

Avec nos plus vifs remerciements,

Varoujan Arzoumanian.
33, bld. Philipon.
13004. Marseille
France.

Varoujan


Շ Ա Ր Լ Մ Ա Լ Է Ք

Մայիս ամսոյն սկիզբը, Լիբանանի մշակութային տարրեր մարդերու մէջ վաստակած ու ծանօթ դէմքերէն Շարլ Մալէք, Սախա Աքլ, Ունսի Հաճ, Փօլ Կիրակոսեան, Շուքրի Շամմասի եւ ուրիշ արուեստագէտներ ու մտաւորականներ հիմը դրին «Լիբանանեան մշակոյթի սլալա»ին, որուն բացումը կատարեց ծանօթ դասախօս եւ փիլիսոփայական հատորներու հեղինակ Շարլ Մալէք, Ճարթ 7 Մայիս 1977ին:

Պարադայական խորադրի մը տակ՝ ստորեւ կը ներկայացնենք Շարլ Մալէքի խօսքին էությունը մասերը, զորս արարերէնի ընադրէն հայացուց Ս. Կիրակոսեան:

Զուգահեռաբար Շարլ Մալէքի հաստատումներուն, որոնք գլխաւորաբար կը ծանրանան մասւորական հասկացողութեան վրայ, բազդաաութեան եւ խորհրդածութեան համար նպատակայարմար սլալի ըլլար կարգալ Վ. Շուշաննանի «Ով է մտաւորականը» գրութիւնը, զոր լոյս ընծայած էնք «Բագրն»ի 1973 տարեշրջանի Ապրիլի թիւին մէջ:

Պէտք է կարգալ եւ կրկին ու կրկին անգամ կարգալ է՛լ Շարլ Մալէքի, է՛լ Շուշանեանի խորհրդածութիւնները, որոնց լոյսին տակ վստահաբար սլալի նուազին վկայականակիր պարգիւններու անուանական ցուցադրութիւնները եւ սլալի ուճի խաչակիր ընտրեալներուն ստեղծագործական եռանդը...



ՇԱՐԼ ՄԱԼԷՔ

ՄՇԱԿՈՅԹՆ ՈՒ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ

Կը հարցնեմ. «Ի՞նչ է մշակոյթը»:

Մշակոյթը կամայական սահմանում մը չէ, ինչպէս մենք կը կարծենք Լիբանանի մէջ, ուր կամայաբար մենք մեզ ամէն բան կը դաւանինք, բայց գործնապէս, որեւէ բանէ աւելի՝ ոչինչին մօտ ենք:

Մշակոյթը պատկերացումի բացարձակ աշխարհին մէջ արծարծուած բոցարծարծ երեսակայութիւն մը չէ, ոչ ալ՝ անսկիզբ, անվախճան եւ անկարգապահ երեսակայութիւն:

Մշակոյթը միայն օգտակար ու հանելի ծանօթութիւններու մէկտեղումը չէ, որովհետեւ հաշուիչ մեքենան եւս մարդ Լակէն աւելի տեղեկութիւններ կը կուտակէ, առանց մոռնալու, որ հաշուիչ մեքենան նոյնինքն մարդէակին կողմէ ստեղծուած է:

Մշակոյթ բառը չի նշանակեր որեւէ հազար գիրք կարգալ, եւ ցանկա-

ցած վայրկեանիդ, պարագային համաձայն, վարպետութեամբ, հեգասահութեամբ ու գուարթախոհութեամբ պատմել անոնց բովանդակութիւնը:

Մշակոյթը սահմանափակ գիտելիքի մը ճանաչումը չէ, ոչ ալ՝ գայն բոլոր տարրերէն աւելի ուռուցիկ դարձնելու արարքը:

Մշակոյթը խօսքերու շարայարումը չէ, յանգաբանուած նոռոմարանութիւնը չէ, ճանաչիւն հոետորութիւնը չէ, խօսքին կախարդութիւնը չէ, ձայնի բարձր թոնը չէ, ոչ ալ՝ խոստումով մտածումները ուրիշին պարտադրելու փորձը:

Մշակոյթը նորագոյն տեսութիւններուն որդեգրումը չէ, ոչ ալ՝ ընթացիկ ու գործածական համոզումներուն հետեւիլը, եւ կամ՝ զանգուածներուն ու ամբոխին հանելի թուացող խօսքերուն անձնատուր ըլլալու արարքը:

Մշակոյթը վերոյիշեալ տարրերէն մէկն ու մէկը չէ, եւ ոչ ալ՝ նոյնանման բազմաթիւ այլ բաներ:

Եթէ կեանքի ճշմարիտ գոյութիւնը անհատականութեան տէր ներգործոն մարդ էակին գոյութիւնն է, ուրեմն՝ մշակոյթը գոյութիւն ունեցող մտաւորական մա՛րդն իսկ է եւ, այդ իսկ պատառով՝ մշակոյթի մասին արտասանուելիք մեր խօսքը կը շօշափէ մտաւորականն ու մտաւորականութիւնը:

Կեդրոնանալ մշակոյթին վրայ՝ ամէն բանէ առաջ կը նշանակէ ծանրութեան կեդրոն ընդունիլ գոյութիւն ունեցող մարդը եւ ո՛չ թէ մտածումներն ու տեսութիւնները, որովհետեւ մշակոյթը միշտ նոր բարձունքներու ձգտող մտաւորական մարդն իսկ է:

Ստրուկ մարդը մտաւորական չի կրնար ըլլալ:

Ուրեմն՝ մարդ էակին ազատութիւնը մշակոյթին կորիզն է:

Մտաւորականին առաջին յատկութիւնը, որ կը գրաւէ մարդու ուշադրութիւնը, ազատ գոյութիւն մը ըլլալու երեւոյթն է: Ազատութիւնը կը ճառագայթէ անոր աչքերէն, բանականութենէն, խօսքերէն, վարուելակերպէն, կեանքի ոճէն:

Ազատ ու մտաւորական մարդը ստրուկ ընկերութեան մը մէջ չի կրնար ծլիլ. միայն ազատ ընկերութիւնն է, որ մշակոյթի մը ծնունդ կու տայ ու կը ծաղկեցնէ մտաւորական ընձիւղներ:

Ազատ մտաւորականը զարմացող մարդն է:

Զարմանալու յատկութիւնը չէ սպաննուած անոր էութեան մէջ եւ ան, որուն կը պակսի զարմանալու եւ զմայլելու հիմնական յատկութիւնները՝ անկարելի է, որ մտաւորական ըլլայ: Եւ ան՝ որ մանուկի մը նման չի զարմանար եւ չի զմայլիր բոլոր բաներուն դիմաց՝ անկարելի է, որ մտաւորական ըլլայ:

Եւ որովհետեւ մտաւորականը կը զմայլի մանուկի մը նման, ան կ'ըլլայ սակաւախօս եւ ամէն բանի մասին չ'արտայայտուիր:

Երբ դուն կ'ըսես իրեն. «Աա՛, այս գիտելիքը վաղուց գիտեմք, մեզի ոչ մէկ նորութիւն բերիր», ան կը լռէ: Ամէն բան նոր է իրաւ մտաւորականին համար. նոյնիսկ եթէ շատ լաւ կը ճանչնայ վերոյիշեալ ճանաչումը՝ իրեն համար նոր կը դառնայ ամենափոքր փոփոխութեամբ իսկ. որովհետեւ թեզմէ կը բխի, դուն՝ դուն ես, իսկ ինք բոլորովին տարբեր է, ուրեմն՝ դուն իրեն համար միշտ նոր աշխարհ մըն ես:

Զմայլող, մտաւորական եւ ազատ մարդը միշտ կը խոնարհի:

Առաջին՝ որովհետեւ ինք գիտէ, թէ ամէն բան չէ:

Երկրորդ՝ որովհետեւ ամէն բանի հետ բաղդատած գրեթէ ոչինչ է:

Երբորդ՝ որովհետեւ ինք գիտէ, թէ թանկագին էակը, որ ինքն է, կրնայ սխալական ըլլալ :

Չորբորդ՝ որովհետեւ, գործնապէս, ամէն բանի դիմաց ինքզինք կը գտնէ զմայլումի զարմանալի կացութեան մը մէջ :

Յանձնապաստան, գոռոզ ու պոռոտախօս մարդը չի կրնար մտաւորական ըլլալ :

Այդ իսկ պատճառով, մտաւորականը կը տարակուսի, կ'որոնէ, կը փնտռէ, կը նզնի, որովհետեւ տակաւին գտած չէ :

Ուրեմն՝ լիիրաւ մտաւորականը խօսելէ աւելի կ'ունկնդրէ. կ'ունկնդրէ նոյնիսկ, երբ խօսուածին մասին շատ աւելի բնդարձակ ու խոր ճանաչումներ կրնայ ներկայացնել : Նոյնիսկ արտադրումի ատեն ան կ'ըլլայ ժուժկալ, գուսպ : Անհուն վերացումով ունկնդրելու եւ նոյնիսկ արտադրումի ատեն իր էութիւնը զսպելու մտաւորականին գոյգ յատկութիւնները մաս կը կազմեն մշակոյթի կորիզին :

Ունկնդրել՝ կը նշանակէ գիտակցիլ, թէ դուն ամէն բան չես, այսինքն՝ նաեւ ճեզմէ գատ ա՛յլ գոյութիւն մը ներկայ է, գոյութիւն մը, որ իր մէջ ծածուկ կը պահէ այնպիսի՝ անհուն խորհուրդներ, որոնց փսփսուքներն անգամ կ'արժէ ունկնդրել :

Այս իրողութիւնը անպայման զինք յարգանքի կը մղէ :

Ճշմարիտ մտաւորականը դիմացինը կը յարգէ եւ, այդ իսկ պատճառով՝ յարգելի է :

Յարգանք՝ կը նշանակէ անկախ գոյութեան դիմաց խոնարհիլ որոնողի, գիտունի եւ նշդորոշողի անկեղծութեամբ ու երկիւղածութեամբ :

Եւ որովհետեւ իրաւ ու անկախ գոյութիւնը միշտ ու յաւիտեանս յաւիտեանից մարդ անհատն է, իսկ մարդը՝ հոգիին ու բանականութեան միութիւնը, ուրեմն՝ ունկնդրումի յարգալիր կեցուածքը բանականութեան ու հոգիին յարգանքն իսկ է, եւ ամէն բան, որ կը խանգարէ ազատ բանականութեան գործունէութիւնը, եւ ամէն բան, որ կը սահմանափակէ հոգիին անկախութիւնն ու առողջութիւնը՝ ո՛չ մէկ աղերս ունի մշակոյթին հետ :

Ճշմարիտ մտաւորականը իւրաքանչիւրին կու տայ իր իրաւունքը. ան արդարադատ է եւ, այդ իսկ պատճառով՝ ո՛չ կը չափազանցէ, ո՛չ կը թերագնահատէ, ո՛չ կ'անտեսէ, ո՛չ կ'անապարէ եւ ոչ ալ նշմարտութիւնը դիտելու համար կուրութեան կը դիմէ : Դատելու վնասկամ արդարութիւնն ու գնահատելու գերզգայուն մօտեցումը իր էութեան հիմնական տարրերէն են :

Մտաւորականը ունի անկախ չափանիշներ, որոնցմով կը կատարէ ստեղծագործութիւններու գնահատումը, յարգալիրը կը գատորոշէ հասարակէն, օգտակարը՝ անօգուտէն, եւ իրաւը՝ կեղծէն :

Մտաւորականը կը դատէ, եւ անոր դատումը քայքայու կամ եսանդորուն վնիռ մը չէ, այլ հիմնաւորուած է իրեն ծանօթ ճանաչումներու գաղտնիքներուն վրայ : Աւելի՛ն. ան կը բացատրէ այդ գաղտնիքները, որովհետեւ գիտէ, թէ պատմութեան կամ աշխարհի մէջ որոնք համամիտ են այդ ճանաչումներուն :

Մտաւորականին դատումը առողջ վիռ մըն է, որ կ'առաջնորդուի առաջնահերթը ընգծելու գիտակցութենէն : Կարելորը կը գատորոշէ անկարելորէն, իսկ անկէ առաջ արժէք կու տայ կարելորագոյնին : Այսինքն՝ կը թափանցէ էութեան խորքը եւ գայն կը գետեղէ բուրգին կատարը :

Ճշմարիտ մտաւորականը ներասուզումով մը կը թափանցէ էութեան կորիզը, օրգանական կերպով կը ձուլուի դարբերու ընթացքին կուտակուած

անբաժան, ներգործօն ու կենդանի ժառանգութեան մէջ՝ ինչպէս եղած է Հոմերոսէն մինչեւ Թալիս, Նիցչէ եւ Սոլժենիցին:

Մարդ անկասկած ինքզինք մտաւորական կրնայ դաւանիլ, բայց հմուտ եւ իմաստուն դատաւորը կը ծիծաղի, երբ կը տեսնէ, որ տակաւին կը շարունակես անշարժ նստած մնալ ու ծածկուիլ արտաքին խաւարով:

Ուրեմն՝ մտաւորականը կ'ապրի բարձունքին վրայ, բարձունքներու ընտրեալ բնակիչներուն հետ: Բարձունքներու ընտրեալներէն ներշնչուած անկախ չափանիշներու սեփականատէրն է ինք, բարձունքներն ու բարձունքներու ընտրեալները որոշելու կարողութեամբ օժտեալ բացառիկը: Կ'ապրի բարձունքի բնակիչներուն հետ, կը վիճի, կը հաղորդակցի, կը ֆննադատէ եւ կը ներծծէ անոնց էութիւնը:

Իր անկախ չափանիշներով՝ ան կ'արժեւորէ ու կը սիւնակագրէ անոնց արժէքները: Իրաւ մտաւորականը կը գնահատէ եւ արժեւորէ կը ճշդէ:

Իրաւ մտաւորականը գիտէ, թէ որոնք են պատմութիւնը կերտած երեսուն-յիսուն անձերը եւ զանոնք կը դասաւորէ՝ համաձայն անոնց որակին: Նմանապէս ան գիտէ, թէ որոնք են իմացական հարիւր գիրքերն ու հոգեկան հարիւր հատորները, որոնք ծնունդն են խտացեալ պատմութեան մը: Կը ֆանչնայ կենդանի գլուխ-գործոցները եւ անոնց հետ կ'ապրի:

Իրաւ մտաւորականը այն բացառիկ անձն է, որ ծանօթ է պատմութեան հոլովոյթին եւ կարեւորագոյն փուլերուն: Ոսկեղարու ստեղծագործութիւնը կը գատորոշէ *արծաթէ* դարու գեղեցկութենէն, իսկ արծաթի դարուն հարստութիւնը՝ *պղինձի*, *կաւի* կամ որդնոտած *փայտի* դարէն: Ոսկեդարու շրջանները կը կոչէ դասական փուլեր, կը սիրէ զանոնք, կ'ապրի անոնց հետ, եւ կը հասուննայ անոնց կենարար հարստութիւններով:

Այդ իսկ պատճառով, պատմութիւնը կը գետեղէ արժէքներու սիւնակին մէջ եւ կը ֆանչնայ անոր որակը:

Մտաւորականը, ուրեմն, չ'ըմբոստանար, չի գոռոզանար, այլ կը ֆանչնայ ու կը գնահատէ արժէքները:

Իրաւ մտաւորականը, ուրեմն, կը խօսի մեծագոյն ու առաջնահերթ չափանիշներուն լեզուով, որոնք հինգ-վեց արժէքէ աւելի չեն:

Իրաւ մտաւորականը պատասխանատու մարդ մըն է: Գիտէ ինքզինք գայել, ինչպէս նաեւ գիտէ, որ մեր թափուն աչքերը կը հսկեն իր վրայ: Ան կ'ապրի այս մթնոլորտին մէջ եւ կը վախնայ մեր աչքերէն:

- Կը վախնայ Արիստոտելէն:
- Կը վախնայ Պօդոս առաքեալէն:
- Կը վախնայ Տանթէէն:
- Կը վախնայ Կէօթէէն:
- Կը վախնայ Աստուծմէ:

Իր շուրջ եւ իր վրայ, անոնց ներկայութիւնը կը զգայ: Կը նկատէ, որ անոնք կը թափանցեն իր էութեան մէջ, կը ֆննեն, կը ֆննադատեն ու կը դատեն զինք: Կը շանթահարուի անոնց ներկայութեամբ: Կը կշռէ իր խօսքը: Ան պատասխանատու մարդն է:

Ան՝ որ Արիստոտելի կողմէ մտաւորական չի կոչուիր՝ մտաւորական չէ:

Ան՝ որուն համար Օգոստինոսը մտաւորական է չ'ըսեր՝ մտաւորական չէ:

Ան՝ որ Ըպն Ռուշտի կողմէ մտաւորական չի դասուիր՝ մտաւորական չէ:

Ան՝ որուն համար Նիցչէ մտաւորական է չ'ըսեր՝ մտաւորական չէ:

Ասոնք բոլորը կը դասեն մշակոյթի հարցը, հիմնովին անտեսելով այն իրողութիւնը, թէ իրենց կողմէ մտաւորական կոչուած անձերը կրնա՞ն տակալ իրենց վերջին գաղափարներուն կամ ոչ:

Ուրեմն՝ մշակոյթը համեմատական, անձնական կամ փայփի հարց մը չէ, գոր Ես կամ դուն կ'որոշենք: Մշակոյթը ունի իր փաղափարները, դատաւորները, գայն ճշդողները, որոնցմէ մէկը կրնանք մենք չըլլալ:

Բնականօրէն մտաւորականը արմատաւորուած է յատուկ ժառանգութեան մը մէջ, համարաւոր է որոշ ազգի մը, եւ բխած՝ ինքնուրոյն ու եզակի մշակոյթէ մը:

Սակայն մտաւորականին իսկական մշակոյթը իր ազգէն, ցեղէն, ժողովուրդէն եւ նեղ մշակոյթէն գերիվեր մշակոյթ մըն է: Ան մարդուն հետ կը խօսի որեւէ ժամանակի եւ որեւէ վայրի պատկանող էակին լեզուով: Իր մշակոյթը համաշխարհային է, իսկ այն մշակոյթը, որ համաշխարհային որակ մը չի ներկայացներ՝ մշակոյթ չէ: Եւ այն համեմատութեամբ, որ մշակոյթ մը կը կատարի իր արեան, ցեղին, լեզուին, ժողովուրդին, կրօնին, ազգութեան, ազգային շահերուն ու չի խօսիր ուրիշ արիւններու, ցեղերու, լեզուներու, ժողովուրդներու, կրօններու, ազգութիւններու, այսինքն՝ անոնց համար ոչինչ կը նշանակէ, կեղծ մշակոյթ մըն է:

Իրաւ մշակոյթը միայն իր էութիւնը կը գերադասէ եւ ո՛չ թէ իր ազգին շահերը:

Եւ կարելոր շահը ոեւէ ազգի համար՝ արտօնել է իր մշակոյթին, որ անկողնային էութիւն ունենայ ի՛ր իսկ նպատակին համար: Իսկ եթէ ստեղծատու շահը, իր կառավարութեան կամ ազգին շահը գետեղէ իր աչքին դիմաց եւ ստեղծագործութիւնը ենթարկէ այդ շահերուն՝ յայնժամ կ'աւարտի անիկա եւ ո՛չ իր անձին, ո՛չ իր ժողովուրդին եւ ոչ ալ իրաւ մշակոյթին համար յաւերժական գործեր չի տար: Կեդրոնացի՛ր նշմարտութեան վրայ, կեդրոնացի՛ր մարդուն վրայ, կեդրոնացի՛ր բացարձակին վրայ, կեդրոնացի՛ր կատարելագոյնին եւ ամբողջականին վրայ: Այս կեդրոնացումէն է, որ կը ծնի ամէն բարիք՝ թէ՛ քեզի, թէ՛ ազգիդ, թէ՛ մշակոյթիդ եւ թէ՛ աշխարհին համար:

Իրաւ մտաւորականները իրարու կը հանդիպին, իրարու հետ շփման մէջ կը մտնեն, կարծիքներ կը փոխանակեն, կը վիճարանին, իրարու կ'օգնեն եւ իրարմէ կ'օգտուին, կ'առնեն ու կու տան: Կը խմբուին: Կը կազմեն շրջանակներ կամ խմբաւորումներ: Իրարու կը կարօտնան՝ համակեցութեան համբերող երջանկութեամբ, անբիծ բարեկամութեամբ, նշմարտութեան ի խնդիր ծաւալող հաւատարիմ վիճարանութեամբ եւ մտերմութեան գտարիւն ջինջութեամբ: Որովհետեւ, որքան ալ վիճարանութիւնը սուր բնոյթ ստանայ՝ չի կրնար երջանկութեան հետ մրցիլ: Այս երջանկութիւնը նշմարիտ իրաւաւնչիւր ստեղծագործութեան գաղտնիքն է:

Լիբանանի մէջ, մեր մտաւորականները կրնան բարձրաճալ միջազգային մշակոյթի մակարդակին միայն ա՛յն պարագային, երբ արարելէնէ՛ գատնաւ կը գիտնան Եւրոպական լեզուներ եւ, մա՛նաւանդ՝ կարելոր երեք լեզուներ, — ֆրանսերէն, անգլերէն ու գերմաներէն:

Ասիկա հսկայ մարտահրաւէր մը կարդալ է: Բայց նշմարիտ մտաւորականը կ'ողջունէ իրեն դէմ նետուած բոլոր մարտահրաւէրները եւ անոնցմէ կը սնանի: Ո՛րքան թափ ստանայ մարտահրաւէրը՝ ա՛յնքան աւելի կը պայփարի, կը տփնի, կը ստեղծագործէ:

Ուրեմն՝ իրաւ մտաւորականը ա՛յն անձն է, որ ինքզինքին կ'արտօնէ ներկայ գտնուիլ գոյութեան մեծ խրախճանքին: Այս խրախճանքին ան հրաւիրուած, հրաւերը ընդունած եւ ներգործականօրէն մասնակցող անձն է, որ ճաշակած է խրախճանքին հոգեկան անսպառ բոլոր սնունդներն ու ըմպելիները: Շատացած եւ յագեցած է ա՛յս սնունդներէն. զանոնք մարսած, ներծրած եւ իր էութեան անբաժանելի մէկ մասնիկին վերածած բախտաւորն է իրաւ մտաւորականը: Այս բոլորը ըմբոստութիւն, ատելութիւն, ծուլութիւն, թուլութիւն, փախուստ, գոռոզութիւն, կեղծիք, կարճատեսութիւն, նեղմտութիւն չի նշանակեր, եւ ոչ ալ՝ իյնալ «մենք ու անոնք» թակարդին մէջ: Ան այս բոլորը կ'ընդունի երախտապարտ երջանկութեամբ:

Գիտե՞ք ինչ է հրաւիրեալներուն ողբերգութիւնը:

Իրենց մեծագոյն ողբերգութիւնը գոյութեան մեծագոյն խրախճանքին չհրաւիրուիլն է, այս պատարագին մասնակցելու արտօնութեան չարժանանալը:

Եւ կամ՝ անոնք հրաւիրուած են, բայց չեն պատասխանած հրաւերին, եւ կամ՝ անոնք հրաւիրուած են, ընդառաջած են հրաւերին, բայց չեն կրցած իւրացնել ա՛յն՝ ինչ որ տեսան, լսեցին, ճաշակեցին կամ իրենց ներկայացուեցաւ,

Եւ կամ՝ անոնք որոշ բան մը ըմբռնեցին, բայց անմիջապէս ատելութեամբ լեցուած ըմբոստացան, մերժեցին, հերքեցին, գոռոզացան եւ փախուստ տուին՝ «մենք ու դուք» յայտարարելով:

Այսպէս, անոնք դատապարտեցին իրենց անձերը՝ մնալ արտաքին խաւարին մէջ: Առանց գիտնալու, թէ մահուան կը դատապարտեն իրենց գոյութիւնը:

ՇԱՐԼ ՄԱԼԷՔ

7 Մայիս 1977



ԻՐԻՆԱ ՍՆԵԳՈՎԱ

Եղերարախտ Լուսինյա Մոսալովային ետք, որուն մասին քանի մը տողով անդրադարձած էինք «Բագին»ի այս տարուան Փետրուարի համարին մէջ, Հայաստանի հմայքը բանաստեղծութեամբ եւ բանաստեղծութիւնը թարգմանութեամբ ուսւ ընթերցողին ներկայացնող երկրորդ կորուստ մը արձանագրուեցաւ հայրենի մեր մամուլին մէջ, կորուստը Իրինա Սնեգովայի, որ կսկիծով համակեց թէ՛ գրողներու պաշտօնական մարմինները եւ թէ՛ առանձին դէմքերը:

Հայրենի մամուլին եւ գրական այլ հրատարակութիւններու մօտէն հետեւած անձերը անպայման հանդիպած պէտք է ըլլան Իրինա Սնեգովային, որ իր նախորդներէն ուսւ բանաստեղծուհի Վերա Զվեագինցեվայի պէս մշտավառ սէրով մը կապուած մնաց մեր հայրենիքի հին ու նոր փառքերուն եւ ոչինչ խնայեց անոնց առանձնայատկութիւններն ու անկործանելի ուժը այլոց հաղորդելու իր ընտրած ճամբաներուն վրայ:

Աւելի լայն գաղափար մը տալու համար յիսուններեք տարեկանին իր մահկանացուն կնքած այս երախտաշատ բանաստեղծուհիին մասին, ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք Հայաստանի գրողներու միութեան վարչութեան խօսքին վերջին մասը եւ Վահագն Դաւթեանի նոյն առիթով գրուած պատիկ գրութիւնը, եւ իրմէ՛ երկու բանաստեղծութիւն.

«Մեծ է Սնեգովայի ծառայութիւնը պոեզիայի գեղարուեստական քարգումարեան գործում:

Նա քարգումանել է ե՛ւ վրացական, ե՛ւ բաշկիրական, ե՛ւ ավաբական պոեզիայից, սակայն իր քարգումանական տաղանդը նա կիմնականում է սպաս դրեց հայ պոեզիան ուսերէն քարգումանելու շնորհակալ գործին:

«Հայ գրականութեան լաւագոյն եւ նուիրւած բարեկամը մինչեւ կեանքի վերջը կապուած մնաց Հայաստանի հետ, հայ ժողովրդի հետ: Իրինա Սնեգովայի քարգումանութեամբ ուսւ ընթերցողներին են ներկայացել Ա. Խաչատրեանն ու Ն. Զարեանը, Պ. Սեւակն ու Ս. Կապուտիկեանը, Վ. Գաւրեանն ու Հր. Յովհաննիսեանը եւ շատ ուրիշներ:

«Սնեգովան սիրեց ո՛չ միայն հայ պոեզիան, այլեւ՝ Հայաստանն ու հայ մարդկանց: Այդ է վկայում Հայաստանի մասին գրուած նրա բանաստեղծական շարքը, որտեղ երեւում է իսկական, անկաշտ բարեկամը:

«Իրինա Սնեգովայի մտեղ լուրջ կորուստ է սովետական գրականութեան համար, իսկ հայ գրականութիւնը կորցրեց իր լաւագոյն բարեկամներից մէկին, իր պոեզիայի անխոնջ պրոպագանդիստին»:

Ա Ն Զ Ա Տ Ո Ի Մ

Իմ հոգով, մարմնով, իմ ողջ էութեամբ Անգատումի հետ ես մտայ կռուի. Դանդաղ օրերը թերթեցի շտապ, Որ նա, դարի պէս, երկար չտեւի: Կռուեցի, ինչքան որ կարող էի, Բայց ուժեղ է, ուժեղ ու անպարտ. Նա իմ ու քո մէջ երկարող ճամբան Փակել է անանց պատով լեռների: Նա ալիքի պէս մեր մէջ բարձրացել, Բանդում-տանում է ամէն, ամէն ինչ. Նա գիշերի պէս մեր մէջ թանձրացել, Հեռու պատկերդ ծածկում է ինձնից: Նա հովի նման ոռնում է անսանձ Ռելսերի վրայ, խնուղիներում. Բերանն է առնում լուրեր գանազան, Ինչպէս ազբակոյտ, ճամբով մէկ ցրում: Նա մերթ իմ խանդի ծուխն է բորբոքում, Ծիսի մէջ խեղդում կարօտը իմ բարկ. Մերթ ուզում է նա կորցրել բքում, Զիւնի տակ թաղել յուշ ու յիշատակ: Նա իմ դէմ անվերջ դաւեր է նիւթում, Ես՝ վերջին շնչում՝ բայց դեռ կա՛մ, դեռ կա՛մ. Օգնի՛ր ինձ, օգնի՛ր այս գօտեմարտում, Սպասի՛ր նրան – յայտնուի՛ր յանկարծ...
դեռ կա՛մ.

ԻՐԻՆԱ ՍՆԵԳՈՎԱ
Թարգմ. Ս. ԿԱԳՈՒՏԻԿԵԱՆ

ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆՁՈՒՇԻՆ,
ՄԵՐ ՔՈՅՐԸ

Լուրն անակնկալ էր...

Վաղուց, մի ֆանի տարի է, չէի տեսել, չէի հանդիպել նրան ու չէի լսել, որ հիւանդ է, անբուժելի հիւանդ...

Վերջին հանդիպումին առոյգ էր, կենսալի, տրամադրութիւնը բարձր: Իբրեւ բանաստեղծուհի՝ գնալով բացում էր, հաստատում ինքն իրեն, ուսական պոեզիայի հսկայ համանուագի միջից լըսելի դարձնում իր ձայնը:

Եւ յանկարծ լսում եմ՝ Իրինան մահացել է:

Սիրտս կծկուեց ցաւից ու ափսոսանքից:

Իրինան... Սֆանչելի բանաստեղծուհին, քարգմանչուհին, մարդը...

Հագիւ քէ ժամանակակից հայ բանաստեղծների մէջ գտնուի մէկը, որից նա առնուազն մի ֆանի բանաստեղծութիւն քարգմանած չլինի:

Եւ դա կատարում էր ո՛չ իբրեւ յանձնարարութիւն, ո՛չ իբրեւ պատուէր: Կատարում էր սիրուց եւ սիրով...

Վկայութիւնը այն բազմաթիւ բանաստեղծութիւններն են, որ նուիրել է Հայաստանին: Սրտառուչ, խոր բանաստեղծութիւններ... Քիչ է ասել՝ բարեկամի բանաստեղծութիւններ... Նրանց մէջ որդիական սէր ու ֆնֆշութիւն կայ Հայաստանի նկատմամբ: Եւ զարմանալի կերպով այդ բոլոր բանաստեղծութիւնների մէջ Հայաստան գալուց եւ այստեղից հեռանալուց զգացած կարօտի ու ցաւի թեման է. «Եւ ձիգ տնօրէն է բարաւիկ գուռնան, իմ հեռացումն է ասես նա ողբում»: Դիմելով հայ բարեկամներին, ասում էր.

Ձեզ շատ եմ սիրում, ո՞նց ժլատ լինեմ,
Կեանքիս մի էջը ձեզ մօտ կը թողնեմ,
Այնտեղ իմ բախտն է, տօնն է իմ լոյսի,
Դէ, մնաք բարով, թռչում եմ հիւսիս...

Այո, վերջին տարիներին իբրեւ բանաստեղծուհի գնալով բացում էր, հաստատում իրեն, ամբողջացնում: Կարգում էի նրա գործերը, ուրախանում: Ի՞նչ իմանայի, որ մօտալուտ մահուան զգացողութիւնը հաւաքագրել է նրա բանաստեղծագործական բոլոր ուժերը, ոտքի հանել, որ նա աշխարհին վերադարձնի այն բոլոր գեղեցկութիւնները, այն սէրն ու բարութիւնը, որ աշխարհը, բախտը նուիրել էին իրեն:

Եւ հիմա չկայ սֆանչելի բանաստեղծուհին, մեր քարգմանչուհին, մեր ֆոյրը...

Նա շատ բան արեց հայ պոեզիայի համար, եւ հայ պոեզիան չի մոռանայ նրան:

Ուրեմն գլուխներս սիրով ու յարգանքով խոնարհեմ մեր քարգմանչուհու, մեր սիրելի ֆոյջ պայծառ յիշատակի ու թարմ շիրմաքմբի առաջ:

ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ

Այս աչքերի մէջ կրակը այլ է,
Կարծես նրանցից պաղ շունչ է գալիս.
Այդպէս՝ Սեւանին միշտ մօտենալիս՝
Դէմֆիդ է խփում ջրերի պաղը:

Սաստիկ է դառնում ֆամին աւելի,
Թէեւ արեւ է, բայց ցուրտ է թում.
Միայն յետոյ ես դու յայտարբրում,
Որ այրուե՛լ ես, այրուե՛լ արեւից...

ԻՐԻՆԱ ՄՆԵԳՈՎԱ

Թարգմ. Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



ՎԵՐԱ ԶՎԵԱԳԻՆՑԵՎԱ

Վերա Զվեագինցեվա (1894—1972), Հայաստանի եւ հայ պոեզիայի մեծ բարեկամն էր: Նա ռուսական պոեզիային ներկայացրեց ո՛չ միայն հայ քնարերգուներից շատերին, այլեւ՝ Հայաստանի իր բանաստեղծական պատկերացումը, Հայաստանի կերպարը: Հայաստանի մասին Զվեագինցեվայի գրած բանաստեղծութիւնները նրա քնարերգութեան լուսազոյն էջերից են:

Ինչպէս մարդուն են խոր սիրահարում,
Զայնին, շարժումնին, փայլին աչքերի,
Այնպէս էլ իմ մեծ, փոքորկոտ դարում
Սիրահարուեցի ես հին մի երկրի:

Այս բանաստեղծութիւնները եւ հայերէնից կատարած նրա թարգմանութիւնները ոուս եւ հայ գրականութեան փոխադարձ կապի պատմութեան ամենապայծառ էջերից են:

Զվեագինցեվայի այն բանաստեղծութիւնները, որոնք կաղմում են նրա «Իմ Հայաստան» յայտնի շարքը, ինչպէս գրում է կոռնէյ Չուկովսկին, կարելի է «անուանել այդ երկրին, նրա երգերին ու պարերին, նրա Արարատին, Իսախանեանին ու Սարեանին նուիրուած հիմներ»:

Հայերէնից թարգմանող եւ Հայաստանի մասին գրող ոուս բանաստեղծների մէջ Զվեագինցեվան իր պատուաւոր անդն ունի: Նրա թարգմանութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի մասին գրած բանաստեղծութիւնները — հայ-ռուսական գրական կապերի որոշակի փուլ են կաղմում: Հայաստան գարձաւ Զվեագինցեվայի երկրորդ հայրենիքը: Պավել Տսպկերը, յիշելով Գէօրգէի յայտնի ասոյթը՝ «Ով ուզում է ճանաչել բանաստեղծին, պէտք է լինի նրա երկրում», միաժամանակ նշում էր. որ «Զվեագինցեվայի նման բանաստեղծին հասկանալու համար պէտք

է ուղեւորուել երկու երկիր՝ Ռուսաստան եւ Հայաստան»:

Վերա Զվեագինցեվայի տնունը Հայաստանում շրջապատուած է յարգանքով: Մենք թանկ ենք գնահատում մեր բարեկամի ու բանաստեղծի յիշատակը:

Լ. Մ.

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս որտե՞ղ է նետել ինձ բախտը, —
Ես, սովոր ճիւղապատ դաշտերին,
Ընկել եմ արեւի երախտը՝
Աշխարհը շոգի ու լեռների:

Այս նոր ու բիբլիական դրախտը,
Ուր ռեհանն ու քարխունն են բուրում,
Ուր շաչում է քամու շէկ լախտը
Եւ երգից մարդու սիրտ է մարում:

Ես, մանկուց միշտ սովոր Հիւսիսին,
Մի ժամ էլ, չեմ կարող համբերել
Առանց ձեզ՝ Հրազդա՛ն ու Մասի՛ս,
Առանց ձեզ՝ Կովիտա՛ս, «հարովե՛լ»:

Գէ՛!, սիրտ իմ, արի ու գուշակիր՝
Ո՞վ քո մէջ ներարկեց այս կիրքը, —
Ռուս էր իմ մայրիկը կրկնակի,
Սիրում էր ռուսական երկինքը:

Ես ի՛նքս էլ, ո՛չ թէ շոգ ու ամառ,
Այլ ձմեռն եմ սիրել եւ բուքը,
Էլ ի՞նչ է պատահել ինձ հիմա,
Ինչի՛ս է Հարաւի այս շուքը:

Ասեմք ես շուք չեմ էլ ճկատում,
Ա՛յլ բան է ինձ այստեղ գերողը,
Ինձ այս հին երկիրն է կախարդում,
Մերթ վայրի, մերթ քննուշ այս հողը:

Սիրում եմ այս մարդկանց քաջարի,
Որ յանախ, քերեւս, եւ չար են,
Մայրերին այս հլու եւ բարի,
Այս նոր ու դարաւոր հանճարը:

Նազանքն այս կանացի պարերի,
Դարերի այս խոհը ծանրանիստ,
Պղինձը ձուլածոյ ողբերի
Եւ շոայր գոյները Սարեանի:

Մի՛ ժպտայ, մի՛ ծաղրիր, ի՛մ ընկեր,
Ուշացած այս սէրը անսովոր,
Ես ինքն էլ անկարող եմ ասել,
Թէ ինչո՞ւ եմ այսպէս բախտաւոր:

ՎԵՐԱ ԶՎԵԱԳԻՆՑԵՎԱ

Թարգմ. Գ. ԷՄԻՆ



ՌԻՏԷ ԵԱՆԱՌԻՍԿԱՅՏԷ

Նախորդ եւ առջի էջերուն ոգեկոչուած եւ «Բաղին»ի փետրուարի կամարին մէջ ուրուանկարուած վերա Զվեագինցեվայի, Իրինա Սնեգովայի եւ Լուդմիլա Մոտալովայի կորուստներով, ի հարկէ, չ'աւարտիր շարքը Հաստանի մտաւորական բարեկամուհիներուն, աւելի մեծ է թիւը ողջերուն, որոնց երկուքին անունները կ'արժէ անմիջապէս յանձնել ընթերցողին յիշողութեան՝ Ռիտէ Եանուսկայտէ եւ Էլիզապէթ Բաուեր, մէկը հորհրդային Միութեան ներսէն, լիովացի, միւսը՝ դուրսէն, աւստրիացի, առաջինը թարգմանչուհի, երկրորդը՝ արուեստի տեսարան:

Այս բոլորը կը վկայեն մէկ բան, ա՛յն՝ որ հայ մշակոյթին հաշույն կարելոր անցուդարձեր տեղի կ'ունենան ներկայիս եւ կին մտաւորականներուն դերը նշանակելի է այդ ուղղութեամբ, ուսանելի է եւ օրինակելի նայնիսկ, եթէ անշուշտ ուսանելու սիրտ մնացած է մեզի եւ գեղեցիկ օրինակի մը մղումով գեղեցիկ գործի մը ձեռնարկելու ոգին դեռ իր կենսունակութիւնը չէ կորսնցուցած մեր մէջ:

Ասաջին դործը, որ Թարգմանչի, Գարեգին Բևի «Աշխարհն ինձնից է սխալում» պիտի էր՝ կալուարայի տան համար: Յաջորդը՝ Մ. Արմէնի «Հեղնար աղբիւր»ն էր, 1963 թ. տառչին տըպագրած Թարգմանութիւնս: Յետոյ յաջորդարար Թարգմանչի Պերճ Զէյթունցեանի «Մեզանից յետոյ» (որը մեկ մօտ լոյս տեսաւ «Կայարաններ չեմ սիրում» վերնադրով), Հարդդէս Պետրոսեանի «Մայրիկ, ես արդէն մեծացել եմ», Շիրվանզադէի «Նամուս», «Չար ոգի», «Հայկական կեանքներ» (որը լոյս տեսաւ 25000 տպագրանակով), Պերճ Զէյթունցեանի «Կլոդ Ռոբերտ Իպերլի», Գէորգ Արշակեանի «Մէ եւ սպիտակ կարպուսներ» («Մարդիկ» վերնադրով), Ժիրայր Աւետիսեանի «Աստղաբերդը»: Բացի այդ, բազմաթիւ պատմուածքներ եւ Թարգմանել Ռաֆայէլ Արամեանից, Աղասէ Այվազյանից եւ Հրանտ Մաթևոսեանից, որոնք զբաղ լոյս չեն տեսել, բայց տպագրուել են մասնաւոր եւ հաղորդուել են ուղիւսով: Այժմ պատրաստուած եմ դրանք առանձին զբաղ լոյս ընծայել:

Ինչպէս տեսնում էք, ինձ հիմնականում հետաքրքրում են երկտասարդ եւ միջին սերնդի գրողները: Զկարծէք, թէ խուսափում եմ դասականներից: Կարծե՛ք սիրում եմ աւելի մօտիկ լինել այսօրուայ գրականութեանը: Չնայած, շատ կ'ուզենայի Թարգմանել, օրինակ, Բաֆֆու «Սամւէլ»ը:

Ինչպէ՞ս են ընդունում իմ Թարգմանած հեղինակները Լիովայում... Մի հետաքրքիր օրինակաբանութիւն եմ նկատել՝ հասարակութեան իւրաքանչիւր խաւ իր հեղինակին է կարգում: Օրինակ, «Հեղնար աղբիւր»ը չտեսնուած մասսօցականութիւն ունի գիւղական շրջանում: Մի գիւղից միւսն են դնում, ամբողջով հերթի են գրում այդ գիրքը կարդալու համար: Մինչդեռ քաղաքային գրադարաններում «Հեղնար աղբիւր»ը շատ քիչ են կարգում: Այստեղ սիրուած հեղինակ է Պերճ Զէյթունցեանը, յատկապէս քաղաքային մտաւորականութեան համար: Վարդդէս Պետրոսեանին եւ Գէորգ Արշակեանին շատ են կարգում դպրոցներում եւ ուսանողական շրջանակներում:

Պլաններին մասին դժուարանում եմ ստել. մի քանի հեղինակներ կան, որոնց կ'ուզենայի մեր ընթերցողներին ներկայացնել: Բաֆֆու մասին արդէն ասացի, կ'աւելացնեմ նաեւ Շանթի, Կոստան Զարեանի անունները, ինչ վերաբերում է Ժամանակակիցներին, ապա այս օրերին այնքան նոր տպագրութիւններ ստացայ, դործեր կարդացի, որ դժուարանում եմ սեւէ մէկին առանձնացնել: Այսպէս թէ այնպէս, նախազօծերն էլ փոխուելու համար են, կարող եմ միայն մի նախազօծի մասին ստել, որ չի փոխուելու՝ պիտի շարունակեմ Թարգմանել հայ գրողներին:

**ԱԻՍՏՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ
ԷԼԻՋԱՊԵԹ ԲԱՈՒԵՐԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏՈՒԱԾ
ՅՕԴՈՒԱԾՆԵՐԷՆ ԿԱՐԳ ՄԸ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ**

«ԱՐԵՒՄՈՒՏԻԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐԸ»
 «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐՐԱՆ ԵՒ ԲԱՅՕԹԵԱՅ ԹԱՆԳԱՐԱՆ»
 «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՕՒ ԵՒ ԱՆԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ»
 «ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ՈՐ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ Է ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ»
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՒԵՍԸ՝ ՈՒՐԱՐՏԱՅԻՆԵՐԻՑ ՄԻՆՁԵՒ ՄԻՋՆԱԳԱՐ»
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԸ»

Երկրասարգ հայազգաի էլյոթները մեծ հե-
տաքրքրութիւն են առաջադրել աւսարիացի մաա-
ւորականութեան և ուսանողութեան շրջաննե-
րում: Նա զեկուցումներէ է հրաւիրուել նաև
Շվեյցարիա: Էլիզապէթ Բաուերն արդէն երկար
աւարինէր է ինչ, Վիեննայի մեծ հեղինակութիւն
վայելող «Արխիտեկտուրֆորում» ամսադրի մշա-
կոյթի բաժնի գլխաւոր խմբադիրն է:

— Այս անգամ շատ դժուար պիտի ըլլայ բա-
ժանումս Հայաստանէն, աւելի խորը կապուեցայ
հայ ժողովուրդին, — ասում է Էլիզապէթ Բա-
ուերը:

Ես նրան տալիս եմ մինչ այդ ինձ յուզող
հարցը:

— Այնուամենայնիւ, ինչպէ՞ս պատահեց, որ
դուք սկսեցիք գրադուել հայադրամութեամբ:

— Գիտէ՞ք, դա ինչի է նման: Երկրասարգ
աղջիկ մը կ'երթայ պարահանդէս ու յանկարծ կը
հանդիպի երկրասարգի մը, որ կը զբաւէ զինք:
Ոչ, զբաւել բարձր է: Երկրասարգի մը, որ
մէկ անգամէն կը սիրես, կը զգաս, որ կեանքդ
լուստարուեցաւ: Այդպէս եղաւ նաև ինձի հետ:
Հայրս, ախպրեմիկս Բաուերը, հարուստ գրա-
դարան ունէր: Օր մը, գիրքերը աչքէ անցընելու
ժամանակ, հանդիպեցայ իմ հայրենակից Ստըր-
ժիդովսկիի «Հայերը եւ Եւրոպայի ֆարտաբապե-
տութիւնը» գիրքին: Կրանուեցայ ընթերցանու-
թեամբ: Եւ ահա, այդ օրէն ևս սիրահարուեցայ
հայ ժողովուրդին, անոր մշակոյթին:

Էլիզապէթ Բաուերը մշակելով ու խորացնե-
լով հայ ժողովրդի պատմութեան և մշակոյթի
մասին իր կարգացած զեկուցումներն ու տուած
դասախօսութիւնները, պատրաստել է մի գիրք,
որը կոչում է. «Հայաստան՝ պատմութիւն ու
մշակոյթ»: Գիրքը լոյս է տեսնելու այս տարուայ
վերջերին, Շվեյցարիայի Լիւցերն քաղաքում,
«Ռայլս Ֆեւրաք» հրատարակչութեան կողմից, և-
րէք լեզուներով՝ գերմաներէն, անգլերէն, իսպա-
ներէն, 45,000 ընդհանուր տպաքանակով:

Այս գիրքը ձեռագիր վիճակում երկրասարգ
գիտնականը բերել էր իր հետ Երևան՝ որոշ հար-
ցերի շարժը խորհրդակցելու Հայաստանի մաա-
նապէսների հետ:



ԷԼԻՋԱՊԵԹ ԲԱՈՒԵՐ

Ծրարեր, անելիքներ շատ ունի Էլիզապէթ
Բաուերը: Շուտով մտանկցելու է իտալական
Բերգամօ քաղաքում կայանալիք հայ հարկարա-
պետութեանը նուիրուած միջոցառման փառքին
սիմպոզիումին: Իսկ գրքի լոյս տեսնելուց
մը ձեռնարկի գովադրական գիտերտացիայի շա-
րագրմանը, որը երազում է պաշտպանել հայն-
գիտութեան կենտրոն Երևանում:



ԻՐԱԻԻԳԱ ԿԱՐՈՒՄԵԱՆ

Ծնած է 18 Ապրիլ 1932ին, Երեւան: 1955ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆաբրիկատի ուսերէն լեզուի եւ դրականութեան բաժինը: 1956էն սկսեալ կ'աշխատի «Հայաստան» հրատարակչութեան մէջ, իսկ 1972էն առկին նոյն հրատարակչութեան ուսերէն լեզուով լոյս տեսնող գեղարուեստական դրականութեան խմբագրութեան վարիչն է:

Իրաւիզա Կարումեանի թարգմանութեամբ ուսերէն լոյս տեսած են Մուրացանի «Առօրեայ զրոյցներ» (Երեւան, 1968), Յովհ. Թումանեանի «Ընտիր երկեր երեք հատորով, հատոր երրորդ» (հատորի քննադատական 26 յօդուածները թարգմանած է Ի. Կարումեանը, Երեւան, 1969): Կարէն Սիմոնեանի «Փանտաստիկա» (Երեւան, 1972), Վիկտոր Բալայեանի «Քանդուած նկուզի գազունիք» (թարգմանութեան հեղինակակից՝ Զեմմա Կարումեան, Երեւան, 1974), Ժիրայր Աւետիսեանի «Կապոյտ արիւն» (Երեւան, 1974, թարգմանութեան հեղինակակից՝ Զեմմա Կարումեան) գիրքերը: Իսկ անդրէնէ հայերէնի թարգմանած է «Անգլիական հիւմուր» գործը, 1968ին:

ԹԱՐԳՄԱՆՉՈՒՀԻՆԵՐՈՒ ԶՈԿԱՏԸ

Հիմա դառնանք Հայաստանի մէջ ծաղկած ու ծաղկող կին մտաւորականներուն եւ արդար հղարտութեամբ մը յայտնենք, որ թարգմանչական եռանդով հայ դրականութենէն այլոց նմոյշներ փոխանցելու գործին ծանրութիւնը բոլորովին օտարազդի իրենց սեռակիցներուն ուսին չեն բեռցուցած մեր աղջիկները: Հայրենի երկինքին տակ տասնեակներ կը հաչուեն այս գործով պարտադրուները եւ սերտախալին այն է, որ ջոկատին մէջ կը դանուին թարմ ուժեր, որոնք արդէն աչր են պատուարեր վաստակներու:

Հայ հեղինակները օտարներուն ներկայացնող թարգմանչական այս արդիւնքէն ընդհանրապէս շատ դու՛ չեն Հայաստանի մտաւորականները, «Ի՞նչ ենք թարգմանում եւ ինչպէ՞ս ենք թարգմանում» հարցադրումը օրակարգի մնայուն նիւթ է հան, յանուն ամբողջական ու կատարեալ արդիւնքներու՝ քննադատական դիտողութիւնները՝ առատ, այսուհանդերձ այս գործը ունի իր աշխուժ գործիչները, որոնք նոյն ատեն երախտագէտ արտայայտութիւններու քիչ առիթ չեն տուած:

Քննադատութիւնը, որ յատկապէս թիրախ ունի անհատական կապերու բերումով կատարուած նախաձեռնութիւններն ու թարգմանչական օրէնքներուն անրծախնդիր կիրարկումը ունեցաւ եւ կ'ունենայ իր բարեբար անդրադարձը եւ մեր դրականութեան հաշույն տարուէ տարի նոր նուաճումներ կ'արձանագրուին այս մարդին մէջ:

Հետաքրքրական է նաեւ Հարցին միւս երեսը, ասպարէզով թարգմանչուհիներ ունենալու երեւոյթը, որ նոր երեւոյթ է մեր մէջ եւ չահեղանութենէ պարզ պիտի չըլլար ծանօթանալ առնուազն քանի մը թարգմանչուհիներու, համեմատարար աւելի նորերէն:

Ծնած է 2 Մայիս 1939ին, Երևան: 1956-1967ին հետևած է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆաբրիկատի ուսերէն լեզուի և դրականութեան բաժնին: 1962ին աւարտած է Մոսկուայի Մ. Գորկիի անուան դրականութեան ինստիտուտի թարգմանչական ճիւղը: 1963-64ին աշխատած է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի թարգմանչական բաժանմունքին մէջ: 1969-71ին՝ «Հայֆիլմ» հաստատութեան սկնորիտի բաժնին մէջ: 1973ին փոխադրուած է Մոսկուա և նոյն թուականէն սկսեալ աշխատանքի մտած է «Ապուստինի» ամսագրին մէջ՝ իրրեւաւապ խմբագիր:

Մայր Հայ-Արաւանի թարգմանութեամբ ուսերէն լեզուով յոյս տեսած են Խաժակ Գիւլնդարեանի «Յաագրութիւն» (Մոսկուա, 1965), Միշայէլ Շաթիրեանի «Նուագախմբի տղամերը» (Մոսկուա, 1970), Կարէն Սիմոնեանի «Յտեսութիւն, Նաքսնայէլ» (Մոսկուա, 1974) դիրքերը:



ՄԱՅԱ ՀԱՅ-ԱՐՏԵԱՆ



ԱՆԱՀԻՏ ԱՎԱԿՅԱՆ

Ծնած է 15 փետրուար 1940ին, Երևան: 1962ին աւարտած է Մոսկուայի Մ. Գորկիի անուան դրականութեան ինստիտուտի թարգմանչական բաժնիը: 1967ին, տարուան լաւագոյն թարգմանութեան համար, արժանացած է «Իրուժքա Նարոպալ» ամսագրի մրցանակին (Հրանտ Մաթևոսեանի պատմուածքներուն թարգմանութեան համար):

Անահիտ Բայունդուրի թարգմանութեամբ առանձին հատորներով յոյս տեսած են Գերենիկ Գեմիրճեանի «Պատմուածքների ժողովածու» (Մոսկուա, 1964, Ժողովածուի մէջ մտած մանրապատումները թարգմանած է Ա. Բայանդուր): Գուրժէն Մահարիի «Ձարեց-Նամէ» (Մոսկուա, 1966, 1967), Հրանտ Մաթևոսեանի «Մեմֆ հմֆ, մեր սարերը» (Մոսկուա, 1966), «Օգոստոս» (Մոսկուա, 1973), «Հացը և բաղը» (Մոսկուա, 1974), Կամարի Տոնոյեանի «Ամիճեալ ամօրեւը» (Մոսկուա, 1967), Չորայր Խալափեանի «Որտե՞ղ էիր, մարդ Ասածոյ» (Մոսկուա, 1971), Հրաչեայ Քոչարի «Նանագեարը» (Մոսկուա, 1974, թարգմանութեան հեղինակակից՝ Յակոբ Սալախեան):



ԳՐԱՐ ԵՍԱՅԵԱՆ

Մնած է 27 Հոկտեմբեր 1926ին, Վաղարշապատ 1940ին աւարտած է Երևանի պետական համալսարանի բանասիրական Պաբլիլյանի եւ րազական լեզուներու եւ գրականութեան բաժինը: 1950էն ի վեր կ'աշխատի «Հայաստան» հրատարակչութեան մէջ: 1951-58ին՝ իրբեւ կրասեր խմբագիր, 1958-58ին՝ գիտութեան գրականութեան խմբագիր, 1958-72ին՝ աւագ խմբագիր գեղարուեստա-թարգմանական գրականութեան խմբագրութեան մէջ, իսկ 1973էն ապին կը վարէ գեղարուեստա-թարգմանական գրականութեան խմբագրութեան վարչի պաշտօնը: Թուսերէնէ թարգմանած է սուս եւ ստար գրողներու գործերէն տանեակ մը հատարներ, ինչպէս Մ. Ստեյնբերգի «Մարդու արիւնք զուր չէ», Հայրիկի «Գէոյի «Ամառըսն տունը», Կոստանյի «Փեղինի «Բաղաճներ եւ տարիներ», Ա. Վասիլիւի «Ժամք մէկին, Չերզ գերագոյնը իմ», Ալիսա Քրիստի «Արեւիկան ճայրնքացը», Իսկանդէր Փաղիլի «Մամկուրեան ծառք», Եւային:

Մնած է 18 Դեկտեմբեր 1933ին, Երևան 1955ին աւարտած է Երևանի պետական համալսարանի բանասիրական Պաբլիլյանի սուսական բաժինը: 1955-57ին աշխատած է Երևանի պետական համալսարանի հրատարակչութեան մէջ՝ իրբեւ խմբագիր: 1957-63ին՝ «Կոմունիստ» թերթի գրականութեան եւ արուեստի բաժինին մէջ: 1964-66ին աւանդած է սուս գրականութեան՝ Երևանի Վալերի Բրիտովի անուան սուս եւ ստար լեզուներու մանկավարժական բաժանմունքին մէջ: 1965ին, «Կ. Պաւլտովսկի Առվելիստ» թեմայով թեզ պաշտպանած է եւ ստացած բանասիրական գիտութեան թեկնածուի աստիճան: 1967էն ի վեր կ'աշխատի Մ. Արեւիկանի անուան գրականութեան ինստիտուտի մէջ՝ իրբեւ աւագ գիտաշխատող: 1969ին, Մոսկուայի մէջ լոյս կը տեսնէ սուս «Կ. Պաւլտովսկի Առվելիստ» մենագրութեան: Հայերէնէ սուսերէն թարգմանած է Սերո Անդադեանի, Վարդգէս Պարսեանի, Հայկ Վարդանեանի եւ Ռաֆայէլ Արամեանի սուսգործութեաներէն հատրնար էէեր:



ԷԼՆԱ ԱԼԵԿՍԱՆԵԱՆ

ՄԱՂՈՒՄ Է ՁԻՒՆԸ...

Մաղում է ձիւնը Մոսկուայի վրայ,
Մաղում է առատ, կիտում մայքերին,
Մի ձայն եմ լսում անուշ ու բարակ,
Այդ ո՞վ է երգում՝ «Լորիկ ջան, Լորիկ»:

Կարծես Սեւանի մրմունջն եմ լսում,
Տեսնում ջրերի ծփանքը յստակ,
Արարատ լեռը՝ երկնում լազուր,
Սէգ կատարները՝ դեզին լուսնի տակ:

Ձգում եմ թովիչ բոյրը խաղողի,
Որ ոգելից եմ հին գիժու նման,

Այդ ո՞վ է երգում՝ «Լորիկ ջան, Լորիկ»,
Երբ ձիւն է մազում Մոսկուայի վրայ:

Ես մի երկիր եմ սեսնում հեռուոր,
Ճերմակ ձիւներից այս մառախուղի,
Եւ խորխոսանքներ՝ յաւերժական նոր,
Եւ յաւերժական մխացոյ թախիծ:

Մեր բախում քամին նոր ձիւն է կիտում,
Մարում են այնտեղ ցոլփերն աստղերի,
Ես տարիներս մի կողմ եմ նետում,
Երբ որ լսում եմ՝ «Լորիկ ջան, Լորիկ»:

ԿԱՅՍԻՆ ԿՈՒԼԻՏԻ

Թարգմ. վ. ԿԱՐԵՆՅ

« ՄԻԱՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ »

Հայերէնի վերածուած «Բարի աչքով» անուն հատորով Հայաստանի հանգէպ իր բարեկամութիւնը աւելի շօշափելի ընծայած բալկար բանաստեղծ Կայսին Կուլիեւ, երկու տարի առաջ, իր կարգին՝ «Գարուն» ամսագրի ընթերցողներուն ներկայացուց նոր բանաստեղծուհի մը, նոզայեցի Կարբիան, ողջերթի իր խօսքը սկսելով հետեւեալ պարբերութեամբ.

«Ամէն անգամ, երբ հարկ է լինում գրելու լեռնային ուրիշ կին բանաստեղծի մասին, մեմֆ միշտ սկսում եմք այն բանից, որ նա իր ժողովրդի պոեզիայում առաջինն է կամ առաջիններից մէկը, որ նրանցից առաջ կանայք այդ լեզուով բանաստեղծութիւններ չեն գրել: Գա հասկանալի է, որովհետեւ կովկասի լեռնակառները գիր ստացել են միայն Սովետական իշխանութեան օրօք»:

Ձեռք գիտեր ինչպէս պատահած է, որ Սուրբ Մեսրոպի ուշադրութենէն վրիպած են մեզի դրացի նոզայեցի այդ լեռնայիները, ձգելով, որ անոնք դիր ունենալու բախտին արժանանան «միայն Սովետական իշխանութեան օրօք»: Իրապէս դարձանալի երեւոյթ՝ զարմանալի այդ կովկասի մէջ, որուն ժողովուրդներէն ոմանք տասնըհինգ ու աւելի դարեր առաջ սեփական ուժերով սեփական դիր ստեղծելու շնորհակալ դործ մը կատարեցին, մինչ ուրիշներ շնորհակալի դերով դիր ստացան՝ սակէ հազիւ յիսուն տարի առաջ:

Ինչ կը վերաբերի կին բանաստեղծ ունենալու ժամանակին, հոս եւս կանխած ենք մեզի դրացի կովկասի լեռնայիները, դարձեալ ոչ կարճ ժամանակով մը, տասներկու դարով, — Ը. դարու բանաստեղծուհի Սահակդուխտի յայտնութեամբ:

Առիթը պատեհ համարելով ստորեւ ընթերցողին կը ներկայացնենք Հայաստանի բարեկամ Կայսին Կուլիեւի մէկ քերթուածին հետ՝ Սահակդուխտ Սիւնեցիի մասին մեր տրամադրութեան տակ գտնուող նիւթերը, որոնք սովորական բաներ չեն դրականութեան պատմութեան մէջ:

ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՅԻՆ

Ութերորդ դարը դրական շիջ անուններով է յայտնի. նրանց մէջ առանձնակի տեղ է դրաւում բանաստեղծ եւ երաժիշտ Սահակդուխտը, զորը նշանաւոր փիլիսոփայ, բանաստեղծ, երաժիշտ Ստեփանոս Սիւնեցու: «Էր եւ սորա քոյր մի՝ ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան եւ առանձնացեալ ի ձորակին Գառնույ յայրի միոջ, եւ անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին, որոյ անուն Սահակդուխտ»:

14րդ դարի պատմագիր Ստեփանոս Օրբելեանի սոյն տողերին յաջորդող տեղեկութիւններից իմանում ենք, որ Սահակդուխտն ապրելով քարանձաւում ու մենութեան մէջ, բոլորովին էլ կտրուած չի եղել աշխարհից ու իրական կեանքից: Թէկուզ եւ քարանձաւում, նա զբաղւում էր երաժշտութեամբ եւ մանկավարժութեամբ: Եթէ նրա եղբայրը «կարդում ու շարում» էր շարականներ, կարգաւորում ու դասաւորում մեր հին դասական երաժշտութեան ձայներն ու եղանակները, հարստացնում հայկական հոգեւոր երգն ու երաժշտութիւնը

իր «բաղարատում կրօնականներով», սպա Սահակոսիսը զբաղուում էր բանաստեղծութիւններ եւ երգեր յօրինելով: Եթէ եղբայրը Մաքենկայ ու Սիւնկոյ վարդապետարաններում ամբիօնից սովորեցնում էր հայոց բանն ու բողոք եղանակները, սպա ջոյրը նոյնպէս զբաղուում էր ուսուցանելով մեղեդիներ ու երգեր: Գալիս էին Գառնիի ձորը խումբ-խումբ աղաներ ու աղջիկներ՝ Սահակոսիսի մօտ երգ ու երաժշտութիւն սովորելու: Հեղահամբոյր ու սեփարեմ կոյսը նստում էր վարդապետի ետեւ եւ այնտեղից սովորեցնում իր աշակերտներին:

«Սա յայժմ հմուտ էր երաժշտական արուեստին, որ ի Աերբոյ վարագուրի Աստեալ ուսուցանէր գրագում», — ասում է Սա. Օրբելեանը: Սահակոսիսը նաեւ մեր առաջին կին երաժիշտն է, երաժշտութեան առաջին կին մանկավարժը: Նա յօրինել է հողեւոր երգեր՝ մեղեդիներ, շարականներ, սրտնցից մէկը անուանակապ է՝ նուիրուած Աստուածածնին: Այս բանաստեղծութեան տների սկզբնատառերը կազմում են իր տնունը՝ Սահակոսիս: «Եւ արար կցուրդս եւ մեղեդիս քաղցրեղամակս, յորոց միմ՝ սրբուհիմ Մարիամ, որ իւր ամուսնքն է յօրինեալ», — պատմում է Օրբելեանը:

Ահա մեր առաջին ակրոստիքոս այդ բանաստեղծութեան առաջին տունը.

Սրբուհի Մարիամ սավոր ոսկի
 Եւ տապառակ կտակարամաց.
 Որ ի վերուստ կեմաց
 Պարգեւեցեր քաղցեալ բնութեամ.
 Վասն քառութեան մեղաց մերոց»:

Մեզ հասած ինը տնից բաղկացած այս բանաստեղծութիւնից երեւում է, որ Սահակոսիսը լուծանօթ է եղել մեր շարականներին, մասնաւոր «Մեծացուցէ» կոչուած տեսակին: Միաժամանակ այս բանաստեղծութիւնը ցոյց է տալիս, որ ձեւի ու բովանդակութեան շատ նմանութիւններ կան Սահակոսիսի դրածի եւ մեր բողոքութիւ «Մեծացուցէ»ների միջեւ: Վերջիններից է, օրինակ, «Առաւօտ խաղաղութեան եւ Արուսեակ գուարթարար» Մեծացուցէն.

«Տապառակ ապրեցուցիչ
 Եւ տապառար Արաւսեան,
 Անդադար երգոք սոփո
 Զքեզ միշտ մեծացուցանեմք»:

Սահակոսիսի վերը բերուած տողերը որոշ ընդհանրութիւններ ունեն նաեւ «Ազբիւր կեմաց...» բառերով սկսուող շարականի հետ: Աչքի ընկնող նմանութիւնները եւ ոճը հիմք են տալիս ենթադրելու, որ մեր որոշ շարականներ հուանաբար դրել է Սահակոսիսը: Սրանք որպէս «կցորդ եւ մեղեդիներ» հետադասում մտել են ժամանակագրութեան կանոնների մէջ, ինչպէս մտել են շատ շարականներ Ստեփանոս Սիւնկոյց եւ ուրիշներից: «Մեծացուցէ»ների մէջ, ամենայն հուանականութեամբ, կան նաեւ Սահակոսիսի ձեռքով դրածներ, բայց թէ դրանցից ո՞րը, դժբախտաբար, մեր բանաստեղծութիւնը այս հարցին դեռ չի պատասխանել:

Կայ մի գեղեցիկ, քնարական շարական, որը բխում է ոչ թէ Ս. Գրքի այս կամ այն տառից, այլ ունի ազդային ոգի եւ պատմական նշանակութիւն: Գա Վահան Գողթնացուն նուիրուած «Զարմամալի է իմն» բառերով սկսուող, հինդ տնից բաղկացած յայտնի շարականն է: Աւանդութիւնը այս սրտառուչ ներբողը վերադրում է Վահանի քրոջը՝ Խոսրովիդուսին, բայց ոչ մի տեղ գրաւոր որեւէ հիմք չկայ, թէ Խոսրովիդուսիսը եղել է բանաստեղծ եւ շարականներ է գրել:

Երբ դարի երկրորդ կէտին բանաստեղծութեան մէջ եղել են կարծիքներ տյդ շարականի Սահակոսիսի գրչին պատկանելու մասին: Ալիշանը դեռեւո 1860 թուականին Վահան Գողթնացու եւ նրան նուիրուած շարականի մասին խօսելիս ենթադրում է, որ այդ շարականը դրել է կամ Վահանի կինը, կամ Սահակոսիսը: Նման մի կարծիք էլ յայտնել է Մ. Օրմանեանը: Եւ, յիշուի, այն ասարիներին, երբ Վահանը հողեկան խոր ու ծանր ողբերգութիւն ապրելով՝ անօգնական թափառում էր Հայաստանի մենաստաններում ու վանքե-

րում, հաւանական է, որ եղած լինի նաեւ Գառնիում, ուր հանդիպել է Սահակդուխտէն եւ նրանց միջեւ ստեղծուել է «հողեւոր հաղորդակցութիւն»։ զուցէ եւ սրտերի կապ՝ ինչպէս ենթադրում են Ղ. Ալիշանը եւ Մ. Օրմանեանը։

Շարականի նախաձեռնի ասն մէջ հեղինակն ասում է, որ օտար բանաստեղծների ու իմաստասէրների պաճուճարան զործերն ու հերոսները սնտի պատրանքներ ու դատարկ բաներ են վահանի առաջինի զործի ու նահաաակութեան համեմատութեամբ.

Արտաֆնոցն ըզգաստֆն
Ստեղծիչ բանֆ սնոտեայն իր պատրութիւն.
Իսկ քոյք սիրայնոյ աստուածարեայ եւ ոգեշահ,
Ով երանելի տէր վահան, ընտրեայ ազատաց:

«Արտաֆնոցն բանֆ սնոտեայֆ իր պատրութիւն» ասելով, ամենայն հաւանականութեամբ, հեղինակը նկատի ունի յունական, անտիկ զրականութիւնը ու նրանց անստղծական հերոսները։

Շարականի այս տունը յատկանշական է նաեւ նրանով, որ հեղինակը ո՛չ միայն լաւ ծանօթ է եղել դասական զրականութեանը, այլեւ հարողացել է վերլուծել եւ դնահատել մի բան, որ երբեք չէր կարող անել Խոսրովիդուխտը, որովհետեւ նա այդպիսի կրթութիւն ու զարգացում չի ունեցել։

Արարիայից վերադառնալուց յետոյ վահանը եղել է Գուրնում, Էջմիածնում, Արագածոտն գաւառի, Շիրակի, Գեղարքունեաց, Սիւնեաց եւ այլ վանքերում։ «Եւ յայնմ հետէ ոչ լինէր նմա հանգիստ եւ դադար ուրեք, այլ զկինն քողեայ առ ընտանիս իւր, ետ զինքն Աստուծոյ եւ կամաց նորա»։ Հնարաւոր է, որ այս շրջագայութեան ժամանակ վահանն ու Սահակդուխտը ծանօթացած լինեն կա՛մ Գուրնում (նուէքան Գառնի գալը), կա՛մ Գառնիում, երբ ձգնակեաց կեանք էր վարում բանաստեղծուհին։

Սահակդուխտը հաւանաբար մինչեւ կեանքի վերջն ապրել է պատմական Գառնիի գեղեցիկ ձորէ քաղաքում՝ երգեր յօրինելով ու վարագոյրի ետեւից երգեր սովորեցնելով։ «Եւ անդէն ի նմին վախճանեայ դմի ի հանգստի, յորմէ բազում բժշկութիւնֆ լինին»։ Այսպէս է վերջացնում պատմիչն իր խօսքը բանաստեղծուհու մասին։ Սահակդուխտի գերեզմանը եւ այն քարայրը, որտեղ ապրել է նա ըստ աւանդութեան, երկար ժամանակ եղել է նուիրական ուխտաաեղի։

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Սրբուհի Մարիամ, անապական տաճար
Եւ կենարար բանին ծնող եւ մայր.
Օրհնեայ ես դու ի կանայս,
Բերկրեայ տիրամայր եւ կոյս:

Անդաստան հոգեւոր եւ համապայծառ ծաղիկ,
Որ ի հոգեհոս անձրեւէն՝ հովանաւորեայ ի քեզ՝
Պտղաբերեցեր ի հօրէ՝ յայտնեայ մարդկան.
Օրհնեայ ես դու ի կանայս,
Բերկրեայ տիրամայր եւ կոյս:

Հաստատութիւն երկնի եւ երկրի,
Կենդանութեանց բաշխող,
Որ աստուածային լուսոյ ցառագայթիւֆն
Վայր իջեայ՝ վերականգնեաց զմախահայրն ի գլորմանէ.
Օրհնեայ ես դու ի կանայս,
Բերկրեայ տիրամայր եւ կոյս:

Աստանօր երկինք ի յերկրի
 Երեւեցար եւ վեհագոյն քրովբէից,
 Որ գերկնային գօրացն գտէրն
 Ի գիրկս քո բարձրեալ կրեցեր .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Կենացն փայտիւն յորդեցեր զմեզ նանապարհ
 Ի սրովբէափակ պաշտպանութենէ
 Եւ գրոցեղէն զուրն կապտեցեր .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Դուռն երկնից եւ էջք Աստուծոյ,
 Խաղաղութեանց միջնորդ,
 Որ գնախամօրն գեւայի բարձեր գերկունքս՝
 Տիրացեալ մահուն,
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ՝ ասելով
 Եւ բազմութիւնք հոգեղինացն
 Հրաշալի ճայնիւ երգէին քեզ գրեկրեալ .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Հիւքական, եղական անեղ բանին բնակարան,
 Որ ըզհուրն աստուածութեան
 յՈրովայնի քում ընկալար եւ ոչ բոցակիզար
 Որպէս երբեմն զմորենին,
 Այլ ծնար զԱստուածն բոլորից .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Խորհուրդ կենաց եւ փրկութեան,
 Վերաթելող եղեր աշխարհի .
 Երազապէս բարձրացուցեր զհոգեղէնքս ընդ հոգեղէնքս
 Ի բնակութիւնս հրեշտակաց .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Տուք գփառքս ի բարձունքս
 Թագաւորին յաւիտենից,
 Որ եկն եւ մարմնացաւ ի սուրբ կուսէն
 Եւ փրկեաց զարարածքս ի մեղաց .
 Օրհնեալ ես դու ի կանայս,
 Բերկրեալ տիրամայր եւ կոյս :

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆՔ (Ա Ր Դ Ի Ի Ն Ք Ն Ե Ր)

Հ. Բ. Ը. Մ. Ի Ա. Մանուկեան Մշակութային Հիմնարկի Գործադիր Մարմինը հաճոյքը ունի արուեստասէր հանրութեան ներկայացնելու Գրական Մրցանքին արդիւնքները, մրցանակները եւ պարգեւները:

Ա.— ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

Առաջին մրցանակ՝ Տ. Սարաատ (Ա. Տաաոյեան), Գէյրուքէն: Գործը՝ «Թատերախաղերու հաւաքածոյ մը»՝ «Այնտեղ», «Աղմուկը», «Զայն կը դիտենք»: Պարգեւ՝ 750 տոլար եւ հատորին հրատարակութիւնը:

Բ.— ՊԱՏՄՈՒԱԾՔ, ՎԻՊԱԿ, ՎԷՊ

1.— Առաջին մրցանակ՝ Ռոպէր Հաստէճեան, Պոլսէն: Գործը՝ «Պատմութիւններ՝ մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին»: Պարգեւ՝ 1500 տոլար եւ հատորին հրատարակութիւնը:

2.— Մտոնաւոր յիշատակութիւն՝ Արամ Հայկազ, Մ. Նահանգներէն: Գործը՝ «Երջանկութիւն» (պատմութիւններու հաւաքածոյ): Պարգեւ՝ 1000 տոլար:

Գ.— ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Մասնաւոր յիշատակութեան կ'արժանանան հետեւեալ չորս բանաստեղծները:

Ա.— Զահրաա, գործը՝ «Քերթուածներ», Պոլսէն, պարգեւ՝ 1000 տոլար:

Բ.— Մ. Հաճեան, գործը՝ «Հոգի երկիր», Մեքսիքայէն, պարգեւ՝ 1000 տոլար:

Գ.— Ժ. Յակոբեան, գործը՝ «Հրաշադար», Միացեալ Նահանգներէն, պարգեւ՝ 1000 տոլար:

Դ.— Մ. Տէրունեան, գործը՝ «Ուխտագնացութիւն», Կիպրոսէն, պարգեւ՝ 1000 տոլար: (Վերի անունները դասաւորուած են այբբենական կարգով):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1.— Նկատի ունենալով, որ դատական կազմին անդամներէն կարեւոր մաս մը կիրանան կը բնակէր, անհրաժեշտ եղաւ, որ հիմնական վերատեսուութեան ենթարկուի սկզբնական կազմը, կիրանանի վերջին տաղնապին պատճառաւ:

2.— Դատական կազմին անդամներն էին.

Ա.— ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ.— Ժիրայր Փափուզեան (Եղիպատս), Գրիգոր Քէօտեան՝ Միացեալ Նահանգներ (Լիբանանէն), Գերձ Ֆաղլեան (Քանաթա):

Բ.— ՊԱՏՄՈՒԱԾՔ, ՎԻՊԱԿ, ՎԷՊ.— Տոքթ. Գրիգոր Մաղսուեան (Մ. Նահանգներ), Զարեհ Մելքոնեան (Մ. Նահանգներ), Անդրանիկ Փոլատեան (Մ. Նահանգներ):

Գ.— ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.— Երուանդ Ազատեան (Մ. Նահանգներ), տոքթ. Աւետիս Սանճեան (Մ. Նահանգներ), Վահէ-Վահեան՝ Մ. Նահանգներ (Լիբանանէն):

3.— Ա. Մանուկեան Հիմնադրամի Գործադիր Մարմինը կը շնորհաւորէ պարգևատարուած արուեստագէտները եւ շնորհակալութիւն կը յայտնէ դատական կազմի անդամներուն:

Վ Ե Ր Զ Ի Ն Կ Ո Չ

Ս Փ Ի Ի Ռ Ք Ի Զ Ա Յ Գ Ր Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

1.— Մամուլի միջոցաւ տարասփիւռ հայ գրագէտներուն ուղղրած կոչերով՝ խնդրած էինք իրենց ինքնակենսագրականը եւ լուսանկարը դրկել մեզի, դիւրացնելու համար մեր «Դար մը դրակահուծիւն» գործի մեկագրային բաժիններու պատրաստութիւնը:

Շատեր ընդտաջած են, սակայն ոմանք լուր կը մնան:

Կ'ուզենք այս վերջին հրաւերով յայտնել, թէ գործին էական պահանջներէն մէկն է մեկագրելի դէմքերու ոչգրիտ եւ ամփոփ կենսագրականը, գործերու անունն ու հրատարակութեան թուականը, եւ լուսանկարը: Այսինքն համար ժամանակագրային դասաւորումը եւ ներկայացումն ձեռի միօրինակութիւնը: — Հասկնալի է որ գործնական կարելիութիւնը չունենանք ԲՈՒՐՈՐ գրողներու կեանքն ու գործը անջատաբար ներկայացնելու. սակայն անհրաժեշտ է, որ մեր տրամադրութեան տակ ունենանք բոլորին ալ կենսագրականն ու լուսանկարը, չգտնուելու համար ականայ հարկադրանքին տակ՝ զանց առնելու անունները սեւեռելի դէմքերէն անո՛նց, որոնց յատուկ ստոյգ եւ ամբողջական տեղեկութիւններ կը պակսին:

2.— Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան «Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամ»-ի ազնուօրէն տրամադրած տասը հազար տոլարի յատկացումով՝ տպագրութեան յանձնուած է Ա. հատորը, որ կ'ընդգրկէ 1850-1920 եօթանասնամեակի գրական հոլովոյթին պատմութիւնը արեւելահայ թէ արեւմտահայ ֆակատներու վըրայ, այդ ժամանակաշրջանի յայտնի բոլոր դէմքերու կեանքն ու գործը՝ իրենց լուսանկարներով եւ հատընտիր գործերէն նմոյշներով:

Պատրաստութեան մէջ է Բ. հատորը, որ պիտի ընդգրկէ 1920-1970 յիսնամեակի Սփիւռքեան գրականութեան հոլովոյթի պատմութիւնը, նոր եւ նորագոյն սերունդներէ կարեւոր թուով դէմքերու կեանքին եւ գործին յատկացուած մեկագրութիւններով, իրենց գործերէն բնորոշ էջերով եւ լուսանկարներով: Կ'առաջադրուի տպագրութեան յանձնել 1978ին: Իսկ Գ. հատորը պիտի ընդգրկէ հայրենական գրականութեան 1920-1970 յիսնամեակը, նոյնպէս պատմական հանգրուաններով, գլխաւոր բոլոր դէմքերու կեանքին ու գործին ներկայացումով եւ լուսանկարներով: Ամէն մէկ հատորի համար նախատեսուած է 700 մեծադիր էջ:

Վերջին հրաւերն է, որ կ'ուղղուի, կանխելու համար ականայ ամէն թերացում մեր կողմէ: Կը խնդրուի նկատի ունենալ:

Մ Ի Ն Ա Ս Թ Է Օ Լ Է Օ Լ Ե Ա Ն

Հասցէ՝

M. TOLOLYAN

8 Concord Road, Watertown, Mass 02172 U. S. A.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

| | |
|------------|------------|
| ԼԻԲԱՆԱՆ | 50 Լ. ՈՍԿԻ |
| ԱՐՏԱՍԱՀՄԱՆ | 27 ՏՈԼԱՐ |
| ՀԱՏԱՎԱՃԱՌ | 5 Լ. ՈՍԿԻ |

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՍՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898